6703

1917

059
L-92

2001

059
Լ-87

ԼՈՅՍ

ԳՐՊԱՆԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑ

1917 Թ.

Խմբագրեցին
Ա. ԵՒ Բ. ԹՈՓՉԵԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. Մի քանի խօսք ընթերցողներին, եր. 3-6։ II. Օրացոյց, եր. 7—38։ III. Եղիշէ Թոփչեան, եր. 39-40։ IV Չափեր եւ նրանց համեմատութիւնը, եր. 41—45։ V. Տեղեկատու փոստի, հեռագրի և երկաթուղու, եր. 46—58։ VI. Ն. Կ. Մ. Օգոստափառ ընտանիքը, եր. 59—61։ VII. Դրամագիտական — անցագիր, մուրհակ, դրոշմատուք, կենսաթոշակներ և նպաստներ զինուորներին և նրանց ընտանիքների համար, եր. 61—78։ VIII. Ռազմագիտական.—Զինուորական կանոններ։ Պատերազմող պետ. զինուորական ույժը — յօդ. Բ. Թոփչեանի։ Պատերազմող պետ. նաւատորմիղը 1914 թ. յուլ. 20-ն։ Պատերազմ և խաղաղութիւն, յօդ. Բ. Թ-ի, եր. 79—92. IX. Առողջապահական.—բժշկարան Լ. Բաբանթարեանի։ Անասնաբուժական խրատներ Ն. Կաճկաճեանի։ Ինչպէս պաշտպանել խօլերայից—Բժ. Վ. Արծրունու, եր. 93—122։ X. Պատերազմը եւ հայերը։ Հայոց կամաւորական շարժումը անցեալում, Գ. Խատիսեանի։ Պատերազմը և հայերը, Ս. Վրացեանի։ Ռուս-Տաճկական պատերազմները և հայկական հարցը, եր. 122-144։ XI. Հայերը-հայերի թիւը Թիւրքիայում։ Հայերը Կովկասում. Հայերի ապագան, Դր. Ֆրիդրիխ Միւլլէր, եր. 145-149։ XII.

„ԼՈՅՍ"
ՕՐԱՑՈՅՑ
1917
ԹՈՒԱԿԱՆԻ

Հայոց 4410—4411

Տօմարական թուական

ՌՅԿԶ-Է: 1367—68

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽՄԲԱԳՐԵՑԻՆ

Ա. եւ Բ. ԹՈՓՉԵԱՆՆԵՐ

Տպարան «ՄԱՄՈՒԼ», Լօրիս Մելիքովի փող., 22

325

Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի հրամանով արտօնում է տպագրել օրացոյցիս միմիայն եկեղեցական մասը: 14 մայիսի 1916 Թ. Ս. Էջմիածին:
Դիւանապետ՝ Տիրայր Ծ. վարդապետ:

Թ. 1066.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

«Օրացոյցը *) մի այնպիսի հրատարակութիւն է, որ ամենահեշտ միջոցով, ամենակարճ ժամանակում կարող է տարածուել շատ ու շատ լայն շրջաններում: Հէնց այդ պատճառով բարեխիղճ և ձեռնհաս հրատարակիչը օգտակար յաւելուածներ դնելով նրա մէջ, կարող է օրացոյցը դարձնել կրթական մի ազդու գործօն ժողովրդի մէջ գիտութեան լոյս և անհրաժեշտ տեղեկութիւններ տարածելու համար: Դժբաղդաբար այդպէս չէ մեզանում: Մեր «օրացոյցարանները“ այդպէս չեն անում, այլ ընդհակառակը՝ իրանց հրատարակութիւնների միջոցով տարածում են ժողովրդի մէջ այնպիսի նիւթեր, որոնք ամենայն իրաւամբ կարող են մաքուր բարոյական թոյն համարուել: Եւ այդ անում են մի խեղճ ու կրակ ժողովրդի մէջ, որ ամենից աւելի ծարաւ է գիտութեան, ամենից աւելի կարիք ունի գրական մաքուր խօսք լսելու: Վերցնում էք հայերէն օրացոյցները և նրանց յաւելուածները կարդալով, գալիս այն եզրակացութեան, որ հրատարակիչները կարծես նպատակ են դրել՝ տգիտութեան աւելի

*) «Լոյս» սեղանի օրացոյց խմբ. Ե. Թոփչեան 1904 թ.:

թանձր քողով ծածկել միամիտ ժողովրդի մտաւոր հորիզոնը և սիստեմատիկ կերպով ամրացնել նրա սնոտիապաշտութիւնը, նախապաշարմունքն ու կուլտուրական յետամնացութիւնը: Ի՞նչեր են ասում այդ յաւալածները—շատ պէս-պէս բաներ: Դրանք գալիս են ընթերցողին գուշակելու, որ յուլիսի 29-ին եղանակը լինելու է, անախորժ, անձրեւային և ձիւնոտ, որոտումն և մթնշաղ, որ օգոստոսի 28-ին լինելու է «փայլուն արեգական» և այլն և այլն: Բայց դա միայն «օդոց գուշակութիւններ» են [1]). կան աւելի նշանաւորները, օրինակ «երազահանը, որ հաւատացնում է ընթերցողին [2]), թէ երազումը «ակռանջը աղջիկ է», «աղջիկ ծոցում տեսնելը խնդութիւն է“, «այծ տեսնելը ճանապարհ է», «բարև տալը կռիւ է», «բանը լեզու է», «էշը նեղութիւն է», «չամիչը շատ փոսս է», «սխտոր բարի» և այլն, և այլն [3]). Գակաս նշանաւոր չէ և «վիճակարանը»: Մենք վրդովւում ենք, երբ գիւղում կամ քաղաքների յետ ընկած թաղերում ճարպիկ «փալճիները» տնից տուն շրջելով, խաբում են ժողովրդին, փող են դուրս կորզում և փոխարէնը «գիր բաց

[1]) Ա. Գուլամիրեանց «Օրացոյց 1903 թ.»:

[2]) Տես Կ. Ափինեանցի 1902 թ. և Զմշկեանցի 1903 թ. օրացոյցները:

[3]) Երազների գիտ. բացատրութիւնը տես «Լոյս» գրպ. օրացոյց 904 թ. բժ. Բ. յօդ. «Ի՞նչ է երազը»:

անում», «ապագան գուշակում»: Դատապարտելի է դա և ակներև խաբէութիւն, բայց չնայելով դրան՝ մեր օրացոյցարաններն առանց խղճի խայթի, դրական խօսքի միջոցով նոյնն են անում իրանց «վիճակարանով» կամ ինչպէս իրանք են անւանում «պարապ ժամերի զւարճալիք» [1]), պատասխանելով, թէ ընթերցողը «երբ բաղդաւոր կը լինի», «ո՞վ է նրան փեսացուն» «աջող կը լինի՞ ձեռնարկած գործը», «կը հարստանա՞մ արդեօք», Երբ կամուսնանայ» և այլն և այլն:

Մեր ժողովուրդը գիրք չունի, դպրոց չունի և միշտ օգնութիւն է աղերսում, իսկ մեր օրացոյցները, որ ամենատարածուած հրատարակութիւններն են, նրան հացի փոխարէն քար են առաջարկում, ձկան փոխարէն—օձ:

Եւ այդ բանը կրկնւում է իւրաքանչիւր տարի, պարբերաբար...»

Ահա այդպիսի դառն իրողութիւնն էր, որ ստիպեց օրացոյցներիս հանգուցեալ հիմնադրին սկսել «Լոյս»-ի հրատարակութիւնը, նպատակ ունենալով «գիտութեան լոյսը սփռել հայ ժողովրդի խաւար մասերում, օգտակար ու անհրաժեշտ գիտութիւններ տարածել հասարակութեան լայն շրջաններում և ընթերցանութեան օգտակար նիւթ մատակարարել...»

Եւ այժմ ութը տարւայ դադարումից յետոյ, վեր-

[1]) Կ. Ափինեան «Շիրակ» օրացոյց 1903թ. եր. 221

ըսկսելով «Լոյս-ի» հրատարակումը, խմբագրութիւնս հեռու ամէն շահադիտական նպատակից, անշեղ կերպով ղեկավարուելու է հիմնադրի ընդգծած ծրագրով։

Եւ եթէ «Լոյս»-ը գէթ մասամբ կարողանայ յագեցնել ժողովրդական մասսաների գիտութեան ծարաւը, մենք հասած կը լինենք մեր նպատակին։

Յոյսով ենք, որ ժողովրդական լայն մասսաները չեն զլանայ իրենց ջերմ վերաբերմունքով, օգնել մեզ մեր նպատակին հասնելու։

Գիտենալով, որ «Լոյս» օրացոյցները ևս զերծ չեն լինի որոշ թերութիւններից, խմբագրութիւնս ուրախութեամբ ընդառաջ կը գնա անաչառ քննադատների ցուցմունքներին և ժողովրդի պահանջներին։

Խմբագրութիւն

1917

Թուին Քրիստոսի և Տոմարական
Թուական ՌՅԿԶ-է (ՌՅԿԶ-է)

Գիր տարւոյն	Լ
Խօթներեակ	Է
Վերադիր	ԺԷ
Իննևտասներեակ	ԺԶ
Տանուտէր	Աւիձն

Բուն ձայնք ԱՁ. ԲՁ. ԳՁ. ԴՁ. Ձախակողմեան դասուն են սկսեալ Բուն Բարեկենդանից։

ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ

Փրկչական Հին-Տոմարին	1917 Յունվ. 1
Ազարիայի կամ փոքր Թուակ.	302 Մարտ 21
Մահմետ. Հիճրէթի թ.	1335թ. Նոյ. 28
» Նլեմտական թուակ.	1333թ. Մարտ 1
Բուն շարժական հայոց թ.	4410—11 օգոստ. 12
Ըստ Յայսմ. ՌՅԿԷ	1367 թ. օգոստ. 11
Հրէից թուական	5677 սեպտ. 17
Լատինական թուական	1918 դեկտ. 19

ՏԱՐԻԱՅ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

Գարունն սկսւում	է	Մարտի	9-ին
Ամառն »	է	Յունիսի	9-ին
Աշունն »	է	Սեպտ.	11-ին
Ձմեռն »	է	Դեկտեմ.	10-ին

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՕՆԵՐ

23 Ապրիլի.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Թագ. Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօտորովնայի.

6 Մայիսի.—Ծնունդ Ն. Կ. Մ. Օգոստափառ Կայսեր Նիկոլայ Ալեքսանդրովչի:

14 Մայիսի.—Թագադրութիւն Ն. Կ. Մ. Նիկոլայ Ալեքսանդրովչի և Ալեքսանդրա Ֆէօտորովնայի:

25 Մայիսի.—Ծնունդ Ն. Կ. Մ. Թագ. Կայսրուհի Ալեքսանդրայ Ֆէօտորովնայի:

22 Յուլիսի.— Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Մայր Թագ. Կայսրուհւոյ Մարիա Ֆէօտորովնայի:

30 Յուլիսի.—Ծնունդ Ն. Կ. Մ. Ի. Ժառանգի Կայսեր Մեծ Իշխան Ալեքսէյ Նիկոլաեւչի:

5 Հոկտեմ.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Ժառանգի Կայսեր Մեծ Իշխան Ալեքսէյ Նիկոլաեւչի:

17 Հոկտեմ.—Հրաշալի ազատութիւն Ն. Կ. Մ. Օգոստափառ Կայսեր և ընտանեաց իւրոց:

21 Հոկտեմ.—Գահակալութիւն Ն. Կ. Մ. Օգոստափառ Կայսեր Նիկոլայ Ալեքսանդրովչի:

14 Նոյեմ.— Ծնունդ Ն. Կ. Մ. Թագ. Կայսրուհւու Մարիա Ֆէօդորովնայի:

16 Դեկտեմ.— Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Օգոստափառ Կայսեր Նիկոլայ Ալեքսանդրովչի:

ՅՈՒՆՈՒԱՐ

31 ՕՐ

Օ		Ն	Լ
1	✣ Կիր. բձ. Գ. օր Ծննդ. պահոց: Կաղանդ եւ Տարեմուտ: Յանուց և Ռուսաց եւ Կաղանդ և Տօն Անուանակոչութեան Յիսուսի և Յիշատակ Բարսեղի Հայրապետին: Մաղթանք Հայրապետական:	14	20
2	Բշ. բկ. գ. օր Ծննդ. պահոց:	15	21
3	Գշ. գձ. ե. օր Ծննդ. պահոց:	16	22
4	Դշ. գկ. զ. օր Ծննդ. պահոց:	17	23
	☾ Վջ. քա. լս.		
5	Եշ. գձ. Ճրագալոյց Ծննդեան եւ Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Նաւակատիք է. Յ. և Ռ. Ճրագալոյց Տեառն:	18	24
6	✣ Ուր. դկ. Տօն Ծննդեան եւ Մկրտութեան Յի. Քի: Ութ օր ուտիք է անմիջոց: Յ. և Ռ. Մկրտութիւն Յիսուսի.	19	25
7	✣ Շբ. աձ. բ. օր Ծննդ.: Յիշատակ մեռելոց:	20	26
8	✣ Կիր. աձ. գ. օր Ծննդ.:	21	27

Օ	ՅՈՒՆՈՒԱՐ	Ն	Լ
9	Բշ. բձ. դ. օր Ծննդ.։	22	28
10	Գշ. բկ. ե. օր. Ծննդ.։	23	29
11	Դշ. գձ. զ. օր Ծննդ.։	24	30
12	Եշ. գկ. է. օր Ծննդ.։	26	1
	☽ Ծնունդ լս. ժ. 09 ր. 11։		
13	✠ Ուր. դձ. ը. օր **Տօն Անուանակոչութեան Յի. Քի.** Նախատօնակ։	26	2
14	Շբ. դկ. Տօն Ծննդեան ս. Յովհաննու Կարապետին։	27	3
15	✠ Ա. Կիր. աձ. Հարսանիք։	28	4
16	Բշ. ակ. Պետրոսի Հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Աբխազոմայ սարկաւագին։	29	5
17	Գշ. բձ. ս. Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի ճգնաւորոյն։	30	6
18	Դշ. բկ. պահք։	31	7
19	Եշ. գձ. ս. Թէոդոսի թագաւորին և մանկանցն Եփեսոսի։	1	8
	☽ Առ. քռ. լս. գ. 18 ր. 22։		
	ՆՈՐ ՏՕՄԱՐ ՓԵՏՐՒԱՐ		
20	Ուր. գկ. պահք։	2	9
21	Շբ. դձ. ս. Աթանասի և Կիւրղի Հայրապետացն։	3	10
22	✠ Կիր. դկ. ր. Ծննդ. յետոյ Բարեկենդան Առաջաւորի պահոց։	4	11
23	Բշ. աձ. ա. օր Առաջ. պահոց։	5	12
24	Գշ. ակ. բ. օր Առաջ. պահոց։	6	13
25	Դշ. բձ. գ. օր Առաջ. պահոց։	7	14
26	Եշ. բկ. դ. օր Առաջ. պահոց։	8	15
27	Ուր. գձ. ե. օր Առաջ. պահոց Յիշատակ Յովնանու մարգարէին։	9	16

Օ	ՅՈՒՆՈՒԱՐ	Ն	Լ
	⊙ Լրումն լս. ժ. 03 ր. 33։		
28	Շբ. գկ. ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինուորացն։	10	17
29	✠ Կիր. դձ. Գ. Ծննդից յետոյ Հարսանիք։	11	18
30	Բշ. դկ. ս. Ատովմեանց զօրավարացն։	12	19
31	Գշ. աձ. ս. Սուքիասեանց վկայիցն։	13	20

ՓԵՏՐՒԱՐ

28 ՕՐ

Օ		Ն	Լ
1	Դշ. ակ. պահք։	14	21
2	Եշ. բձ. ս. Ոսկեանց։	15	22
3	Ուր. բկ. պահք։	16	23
	Յ. և Ռ. Տեառնընդառաջ։		
4	Շբ. գձ. ս. Իսահակայ Պարթևի Հայրապետին մերոյ։	17	24
	☾ Վրջ. քռ. լււս. ժ. 12 ր. 44		
5	✠ Կիր. գկ. Դ. Ծննդից յետոյ.	18	25

Օ	Փ Ե Տ Ր Ի Ա Ր	Ն	Լ
	Հարսանիք։		
6	Բշ. գձ. ս. Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն։ Նախատօնակ։	19	26
7	Գշ. դկ. ս. Ղեւոնդեանց քահանայից։ Ջերմութիւն արեւ օդի մէջ։	20	27
8	Դշ. աձ. պահք։ Նախատօնակ։	21	28
9	✠ Եշ. ակ. **ս. Վարդանանց** զօրավարացն մերոց 1036 վկայիցն որք կատարեցան ի մեծ պատերազմին։ Պատարագից յետոյ հոգեհանգիստ և յիշատակ համօրէն ննջեցելոց։ Ազգային տօն է։	22	29
10	Ուր. բձ. պահք։	23	1
11	Շբ. բկ. Կոստանդնուպօլսոյ ս. ժողովոյն 150 հայրապետացն։ Ցերեկոյեան սեղանները ծածկւում են վարագոյրներով։	24	3
	☽ Ծնունդ լուսնի ժ. 21 ր. 55։		
12	✠ Կիր. դկ. **Բուն Բարեկենդան** ես Յ. և Ռ.։	25	3
13	Բշ. աձ. ա. օր մեծ պահոց։	26	4
14	✠ Գշ. ակ. բ. օր մեծ պահոց։ **Տեառնընդառաջ**։ Օր իջանելոյ ջերմութիւն արեւու ի ջուրց։	27	5
15	Դշ. բձ. գ. օր մեծ պահոց։	28	6
16	Եշ. բկ. դ. օր մեծ պահոց։	19	7
	ՆՈՐ ՏՈՄԱՐ ՄԱՐՏ		
17	Ուր. գձ. ե. օր մեծ պահոց։	20	8
18	Շբ. գկ. զ. օր մեծ պահոց։ Ս. Թէոտ-	21	9

Օ	Փ Ե Տ Ր Ի Ա Ր	Ն	Լ
	րոսի զօրաւորին։		
19	✠ Կիր. գձ. բ. քառասնորդական պահոց։	4	9
	☽ Առջ. քռ. լուսնի ժ. 07 ր. 06։		
20	Բշ. դկ. ը. օր մեծի պահոց	5	10
21	Գշ. աձ. թ. օր մեծի պահոց։	6	11
22	Դշ. ակ. ժ. օր մեծի պահոց։	7	12
23	Եշ. բձ. ժա. օր մեծի պահոց։	8	13
24	Ուր. բկ. ժբ. օր մեծի պահոց։	9	14
25	Շբ. գձ. ժգ. օր մեծի պահոց. Ս. Կիւրղի Երուսաղէմի Հայրապետին և միւս Կիւրղի եպիսկ. և մօրն նորա Աննայի։ Սկիզբն պառաւի ցրտին 7 օրը 8-ը գիշեր։	10	15
26	✠ Կիր. գկ. Գ. Քառասնորդական պահոց։ **Անառակին**։	11	16
	© Լրումն լուսնի ժ. 14 ր. 17,		
27	Բշ. գձ. ժե. օր մեծի պահոց։	12	17
28	Գշ. դկ. ժզ. օր մեծի պահոց։	13	18

ՄԱՐՏ

Օ	31 ՕՐ	Ն	Լ
1	Դշ. աձ. ժը. օր մեծի պահոց։	14	19

Օ	ՄԱՐՏ	Ն	Լ
2	Եշ. ակ. ժը. օր մեծի պահոց.	14	19
3	Ուր. բձ. ժթ. օր մեծի պահոց: Պառաւի ցրտի վերջը: ☾ Վերջ քա. լուսնի ժ. 23 ր. 28:	15	20
4	Շբ. բկ. ի. օր մեծի պահոց: Ս. Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին, Յովհաննու Օձնեցւոյ հայրապետին և վարդապետացն Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն:	16	21
5	✠ Կիր. գձ. դ. Քառասնորդական պահոց **Տնտեսին:**	17	22
6	Բշ. գկ. իբ. օր մեծի պահոց:	18	23
7	Գշ. դձ. իգ. օր մեծի պահոց:	19	24
8	Դշ. դկ. իդ. օր մեծի պահոց:	20	25
9	Եշ. աձ. իե. օր մեծի պահոց: Գարնանամուտ և հաւասարակաց: Գիշեր-ցերեկ հաւասար:	21	26
10	Ուր. ակ. իզ. օր մեծի պահոց: ☽ Ծնունդ լուսնի ժ. 08 ր. 39:	22	27
11	Շբ. բձ. իէ. օր մեծի պահոց: Քառասնեաց Մանկանց, որք ի Սեբաստիա կատարեցան:	23	1
12	✠ Կիր. բկ. ե. Քառասնորդական **Դատաւորին:**	24	2
13	Բշ. գձ. իթ. օր մեծի պահոց: Լռ. Աւետումն:	25	3
14	Գշ. գկ. լ. օր մեծի պահոց:	26	4
15	Դշ. դձ. լա. օր մեծի պահոց.	27	5
16	Եշ. դկ. լբ. օր մեծի պահոց:	28	6
17	Ուր. աձ. լգ. օր մեծի պահոց: Նախատօնակ:	29	7

Օ	ՄԱՐՏ	Ն	Լ
	☽ Առջ. քա. լուսնի ժ. 17 ր. 50:		
18	✠ Շբ. ակ. լդ. օր մեծի պահոց: **Գրիգոր Լուսաւորչի մուտն** ի վիրապն:	31	9
19	✠ Կիր. բձ. Զ. Քառասնորդական պահոց: **Գալստեան:**	1	10
	ՆՈՐ ՏՕՄԱՐ ԱՊՐԻԼ		
20	Բշ. բկ. լզ. օր մեծի պահոց:	2	11
21	Գշ. գձ. լէ. օր մեծի պահոց:	3	12
22	Դշ. գկ. լը. օր մեծի պահոց:	4	13
23	Եշ. դձ. լթ. օր մեծի պահոց:	5	14
24	Ուր. դկ. խ. օր մեծի պահոց: 🌕 Լրումն լուսնի ժ. 03 ր. 01	6	15
25	Շբ. աձ. խա. օր մեծի պահոց: Յիշատակ Յարութեան Ղազարու: Յ. և Թ. Աւետումն:	7	16
26	✠ Կիր. ակ. **Ծաղկազարդ:** Ցերեկոյին դռնբացէք. Յ. և Թ. ևս (Ծաղկազարդ)	8	17
27	Աւ. Բշ. բձ. պահք	9	18
28	Աւ. Գշ. բկ. պահք: Յիշատակ տասն կուսանացն:	10	19
29	Աւ. Դշ. գձ. պահք: 🌕 Աւագ լրումն լուսնի ըստ հին տօմարի:	11	20
30	✠ Աւ. Եշ. գկ. պահք: **Յիշատակ Ընթրեաց:**	12	21
31	Աւ. Ուր. դձ. պահք. **Յիշատակ Չարչարանաց և խաչելութեան Քրիստոսի:** Երեկ. Թաղման Թափօր:	13	22

ԱՊՐԻԼ

30 ՕՐ

0		Ն	Լ
1	Աւ. Շբ. դկ. Ծրագալոյց Յարութեան. **Նաւակատիք:**	14	22
	Վերջ քառ. լուսնի ժ. 12 ր. 12		
2	✠ Կիր. Ած. **ԶԱՏԻԿ.**	15	23
	Յ. և Ռ. եւ Զատիկ:		
3	✠ Բշ. ակ. բ. օր Զատկի պատարագեց վերջ հոգեհանգիստ կատարել **Ննջեցելոց:**	16	24
4	✠ Գշ. բձ. գ. օր Զատկի:	17	25
5	Դշ. բկ. դ. օր Զատկի:	18	26
6	Եշ. գձ. ե. օր Զատկի: Յերեկոյին նախատօնակ:	19	27
7	✠ Ուր. դկ. զ. օր Զատկի: Աւետումն ս. Աստուածածնի:	20	28
8	Շբ. դձ. է. օր Զատկի. Յիշատակ գլխատման Յովհաննու Մկրտչին:	21	29
9	✠ Կիր. դկ. ը. օր Զատկի (կրկնազատիկ). Հարսանիք:	22	30
10	Բշ. աձ. թ. օր Զատկի:	23	1
	Ծնունդ լուսնի ժ. 00 ր. 00		
11	Գշ. ակ. ժ. օր Զատկի:	24	2

0	ԱՊՐԻԼ	Ն	Լ
12	Դշ. բձ. ժա. օր Զատկի:	25	3
13	Եշ. բկ. ժբ. օր Զատկի:	26	4
14	Ուր. գձ. ժգ. օր Զատկի:	27	5
15	Շբ. գկ. ժդ. օր Զատկի:	28	6
16	✠ Կիր. դձ. Աշխարհամատրան **Կանաչ Կիրակէ:**	29	7
17	Բշ. դկ. ժզ. օր Զատկի:	30	8
	Առջ. քառ. ժ. 06 ր. 34		
18	Գշ. աձ. ժէ. օր Զատկի:	1	9
	Նոր-Տօմար Մայիս:		
19	Դշ. ակ. ժը. օր Զատկի:	2	10
20	Եշ. բձ. ժթ. օր Զատկի:	3	11
21	Ուր. բկ. ի. օր Զատկի:	4	12
22	Շբ. գձ. իա. օր Զատկի:	5	13
23	✠ Կիր. գկ. (կարմիր կիւրակէ) **Անւանակոչութիւն Ն. Ն. Մ. Թագ. Կայսրուհու Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի:**	6	14
24	Բշ. դձ. իգ. օր Զատկի:	7	15
	Լրումն լուսնի ժ. 15 ր. 45		
25	Գշ. դկ. իդ. օր Զատկի:	8	16
26	Դշ. աձ. իե. օր Զատկի:	9	17
27	Եշ. ակ. իզ. օր Զատկի:	10	18
28	Ուր. բձ. իէ. օր Զատկի:	11	19
29	Շբ. բկ. իը. օր Զատկի.	12	20
30	✠ Կիր. գձ. ե. Երեւման ս. Խաչի:	13	21

ՄԱՅԻՍ

31 ՕՐ

Օ		Ն	Լ
1	Բշ. գկ. լ. օր Զատկի:	14	22
2	Գշ. գձ. լա. օր Զատկի:	15	23
	☾ Վերջ քառ. լուսնի ժ, 00 ր. 50		
3	Դշ. գկ. լբ. օր Զատկի:	16	24
4	Եշ. աձ. լգ. օր Զատկի:	17	23
5	Ուր. ակ. լդ. օր Զատկի:	18	26
6	Շբ. բձ. լե. օր Զատկի:	19	27
	Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովիչի:		
7	✢ Կիր. բկ. զ. Զատկից յետոյ:	20	28
8	Բշ. գձ. լէ. օր զատկի:	21	29
9	Գշ. գկ. լը. օր Զատկի,	22	1
	☽ Ծնունդ լս. ժ. 10 ր. 07:		
10	Դշ. գձ. լթ. օր Զատկի:	23	2
11	✢ Եշ. գկ. խ. օր Յինանց:	24	3
	Համբարձումն Քրիստոսի:		
	Յ. և Ռ. եւ Վիճակ:		
12	Ուր. աձ. պահք խա. օր Յինանց:	25	4
13	Շբ. ակ. խբ. օր Յինանց:	26	5
14	✢ Կիր. բծ. խգ. օր Զատկի:	27	6
	Թագադրութիւն Ն. Կ. Մ. Նիկոլայ		

ՄԱՅԻՍ

Օ		Ն	Լ
	Ալէքսանդրովչի եւ Ալէքսանդրա Ֆէոդորովնայի:		
15	Բշ. բկ. խդ. օր Զատկի:	28	7
16	Գշ. գձ. խե. օր Զատկի:	29	8
	☽ Առջ. քառ. լուսնի ժ. 19 ր. 18		
17	Դշ. գկ. խզ. օր Զատկի.	30	9
18	Եշ. գձ. խէ. օր Զատկի:	31	10
19	Ուր. գկ. խը. օր Զատկի:	1	11
	Նոր-Տօմար Յունիս:		
20	Շբ. աձ. խթ. օր Զատկի:	2	12
21	☉ Կիր. ակ. Հոգեգալուստ (պենտեկոստէ) 50-րդ օր Զատկի. բարեկենդան Եղիական պահոց:	3	13
22	Բշ. բձ. բ. օր Հոգ. պահք:	4	14
24	Գշ. բկ. գ. օր Հոգ. պահք:	5	15
24	Դշ. գձ. դ. օր Հոգ. պահք:	6	16
	● Լրումն լուսնի ժ. 04 ր. 29		
25	Եշ. գկ. ե. օր Հոգ. պահք:	7	17
	Ծնունդ . Կ. Մ. Կայսրուհի Ալէքսանդրայ Ֆէոդորովնայի:		
26	Ուր. գձ. զ. եր Հոգ. պահք:	8	18
27	Շբ. գկ. է. օր Հոգեգալուստ:	9	19
28	✢ Կիր. աձ. ա. Յարութիւնից յետոյ, (Ելիշատակ Եղիայի մարգարէի:)	10	20
29	Բշ. ակ. Հռիփսիմեանց կուսանաց Հանդէս կատարւում է Հռիփսիմէի վանքը Էջմիածնի մօտ:	11	21
30	Գշ. բձ. Կուսանացն Գայեանեանց եկեղեցական հանդէս Գայիանէ վանքում: ս. Էջմիածնի մօտ.	12	22
31	Դշ. բկ. պահք.	13	23
	● Վերջ քառ. լուսնի ժ. 13 ր. 40		

ՅՈՒՆԻՍ

30 ՕՐ

Օ		Ն	Լ
1	Եշ. գձ. Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին. հանգիստ Տագակաթի վանքում, ս. Էջմիածնի մօտ։	14	23
2	Ուր. գկ. պահք երեկոյեան Նախատօնակ։	15	24
3	✣ Շբ. դձ. Ելն ի վիրապէն ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ։	16	25
4	✣ Կիր. դկ. բ. Հոգեգալստեան յետոյ։	17	26
	Տօն է Կաթուղիկէ ս. Էջմիածնի։		
5	Բշ. աձ. Մանկանց Բեթղեհէմի։	18	27
6	Գշ. ակ. Կուսանացն Նունեայ և Մանեայ։	19	28
7	Դշ. բձ. պահք։	20	29
8	Եշ. բկ. Իշխանացն Սահակայ և Յովսեփայ. և վկայից Սարգսի և Բագոսի։	21	1
	◉ Նուազ լուսնի ժմ. 22 բ. 51		
9	Ուր. գձ. պահք.	22	2
10	Շբ. գկ. ս. Ներսէսի Հայրապետին և Խադ Սարկաւագին.	23	3
	Ամառնամուտ և Արեւադարձ. ցերեկ կարճանալ և գիշեր երկարել։		
11	✣ Կիր. դձ. գ. Հոգ. յետոյ. բարեկ. ս. Լուսաւորչ. պահոց։	24	4

Օ	ՅՈՒՆԻՍ	Ն	Լ
12	Բշ. դկ. Եպիփանու Կիպրացւոյն Բարսեղայ հայրապետին և Ց. աշակերտաց։	25	5
13	Գշ. աձ. ս. Կոստանդիանոսի Թագաւորին և մօրն Հեղինեայի։	26	6
14	Դշ. ակ. պահք։	27	7
15	Եշ. բձ. Թէոդիտոսի Գաղատացւոյ, Թալիլէոյ բժշկին..	28	8
16	Ուր. բկ. պահք։	29	9
	☽ Առջ. քառ. լուսնի ժ. 08 բ. 02		
17	✣ Շբ. գձ. Գիւտ նշխարացն ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ։	30	10
18	✣ Կիր. գկ. դ. Հոգ. յետոյ։	1	11
19	Բշ. դձ. ս. Անտոնիոսի, Թէոփիլոսի, Անիքտասի և Փոտինոսի.	2	12
	Նոր-Տօմար Յուլիս։		
20	Գշ. դկ. ս. Դանիէլի Մարգարէին և երից մանկանց։	3	13
21	Դշ. աձ. պահք։	4	14
22	✣ Եշ. ակ. ս. Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ։ Ժողովրդական ուխտագնացութիւն ս. Մեսրովբի գերեզմանի վրայ Օշական գիւղում։	5	15
	◉ Լրումն լու. ժմ. 17 բ. 13		
23	Ուր. բձ. պահք։	6	16
24	Շբ. բկ. ս. Տրդատայ Թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջ։	7	17
25	✣ Կիր. գձ. ե. հոգ. յետոյ տօն ս. Աստուածածնի Տփոյ գօտւոյն։	8	18
26	Բշ. գկ. ս. Կալիստրատոսի և 49 վկայից և Չուանկիանոսի քահանային։	9	19
27	Գշ. դձ. ս. Զաքարիա մարգարէին։	10	20

Օ	ՅՈՒՆԻՍ	Ն	Լ
28	Դշ. գկ. պահք։	11	21
29	Եշ. աձ. ս. Եղիսէի մարգարէին։	12	22
30	Ուր. ակ. պահք։	13	23

ՅՈՒԼԻՍ
31 ՕՐ

Օ		Ն	Լ
1	Շբ. բձ. ս. Երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի և Պօղոսի 13-րդի։	14	24
	☾ Վերջ քառ. լուսնի ժ. 1,02 ր. 20		
2	✠ Կիր. բկ. գ. հոգ. յետոյ. բարեկ. Վարդավառի պահոց։	15	25
3	Բշ. գձ. ա. օր վարդ. պահոց։	16	26
4	Գշ. գկ. բ. օր վարդ. պահոց։	17	27
5	Դշ. դձ. գ. օր վարդ. պահոց։	18	28
6	Եշ. դկ. դ. օր վարդ. պահոց։	19	29
7	Ուր. աձ. ե. օր վարդ. պահոց։	20	30
8	Շբ. ակ. **Յիշատակ Տապանակի**։ Նաւակատիք.	21	31
	☉ Ծնունդ լուսնի ժ. 11 ր. 53		

Օ	ՅՈՒԼԻՍ	Ն	Լ
9	✠ Կիր. բձ. **Վարդավառ**. պայծառակերպութիւն Յի. Քի. երեկոյին անդաստան։ Վեցերորդ տարեդարձ ս. Օծման Տ. Տ. Գէորգայ Սրբազնագոյն կաթուղիկոսի Ամենայն հայոց։ Միջոց ուտիք պասով չորս շբ. Յ. և Ռ. Եղիա մարգարէին։	22	2
10	✠ Բշ. բկ. բ. օր վարդ. ս. պատարագից վերջ հոգեհանգիստ. Յիշատակ Մեռելոց։	23	3
11	Գշ. գձ. գ. օր Վարդ.	24	4
12	Դշ. գկ. պահք։	25	5
13	Եշ. դձ. Եսայեայ Մարգարէի։	26	6
14	Ուր. դկ. պահք։ Նախատօնակ։	27	7
15	✠ Շբ. Եձ. **ս. Թադէոսի առաքելոյն մերոյ** և Սանդխտոյ կուսին։	28	8
	☾ Առ. քռ. յս. ժ. 20 ր. 46		
16	✠ Կիր. ակ. բ. Վարդ. յետոյ։ Հարսանիք։	29	9
17	Բշ. ս. Կիպրիանոսի եպիսկ. և 45 վկայիցն. կուսանացն Յուստինեայ, Եւփիմեայ և Քրիստինեայ.	30	10
18	Գշ. բկ. ս. Աթանագինեայ եպիսկ. 10 աշակերտացն և 5 վկայիցն։	31	11
19	Դշ. գձ. պահք։	1	12
	ՆՈՐ ՏՕՄԱՐ ՕԳՈՍՏՈՍ		
20	Եշ. գկ. Նախահարցն։	2	13
21	Ուր. դձ. պահք։	3	14
22	Շբ. դկ. որդւոց և թոռանց ս. Գրիգորի Լուս. Արիստակէսի, Վրթանեսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի։ **Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Թագ. Կայսրուհու Մարիա Թէոդորովնայի**։	4	15

Օ	ՅՈՒԼԻՍ	Ն	Լ
23	✠ Կիր. աձ. դ. Վարդ. յետոյ: Հարսանիք:	5	16
	☉ Լրումն լս. ժ. 05 ր. 57		
24	Բշ. ակ. Մակաբայեցւոց Եղիազարու քահանային Շամունեայ և 7 որդւոց նորին:	6	17
25	Գշ. բձ. 12 Մարգարէիցն:	7	18
26	Դշ. բկ. պահք:	8	19
27	Եշ. գձ. ս. Սոֆիա և իրենց դստերացն:	9	20
28	Ուր. գկ. պահք.	10	21
29	Շբ. դձ. Գրիգորի Աստուածաբանին:	11	22
30	✠ Կիր. դկ. դ. Վարդ. յետոյ: Հարսանիք:	12	23
	☾ Վերջ. քռ. լս. ժ. 15 ր. 08:		
	Ծնունդ Ն. Կ. Մ. Ժառանգին Կայսեր Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլաեւչի:		
31	Բշ. աձ. ս. Կիրակոսի և Յուղիտայի, Գրիգորիսի, Պօղիկտոսի և այլն:	13	24

ՕԳՈՍՏՈՍ
31 ՕՐ

Օ		Ն	Լ
1	Գշ. ակ. Վահանայ Գողթնացւոյ:	14	25

Օ	ՕԳՈՍՏՈՍ	Ն	Լ
2	Դշ. բձ. պահք:	15	26
3	Եշ. բկ. Նեգինեսի, Մակարու:	16	27
4	Ուր. գձ. պահք:	17	28
5	Շբ. գկ. Եփեսոսի ս. Ժողովոյն 200 Հայրապետացն:	18	29
6	✠ Կիր. դձ. ե. Վարդ. յետոյ. Բարեկենդան ս. Աստուածածնի պահոց:	19	1
	☽ Ծն. լս. ժ. 23 ր. 19:		
7	Բշ. դկ. ա. օր Աստուածածնի պահոց:	20	2
8	Գշ. աձ. բ. օր Աստուածածնի պահոց	21	3
9	Դշ. ակ. գ. օր Աստուածածնի պահոց:	22	4
10	Եշ. բձ. դ. օր Աստուածածնի պահոց:	23	5
11	Ուր. բկ. ե. օր Աստուածածնի պահոց: **Տօմ. և Յայսմ. Թ. ՌՅԿԷ—1367** անշարժ թւական հայոց:	24	6
12	Շբ. գձ. **Տօն Շողակաթի** ս. Էջմիածնի ըստ տեսլեան ս. Գրիգորի Լուսաւորչին: Նաւակատիք:	25	7
13	✠ Կիր. դկ. **Վերափոխումն ս. Աստուածածնի.** անդաստան առաւօտ և երեկոյ: Պատարագին կատարւում է խաղողի օրհնութիւն: Միջոց ուտիք չորս շաբաթ է: Նախատօնակ:	26	8
14	✠ Բշ. դձ. բ. օր Աստուածածնի Մ. Պատարագից վերջ հոգեհանգիստ. **Յիշատակ Մեռելոց:**	27	9
	☽ Աջ. քռ. լ. ժ. 8 ր. 30:		
15	Գշ. դկ. գ. օր Աստուածածնի:	28	10
16	Դշ. աձ. դ. օր Աստուածածնի:	29	11
17	Եշ. ակ. ե. օր Աստուածածնի:	30	12
18	Ուր. բձ. զ. օր Աստուածածնի:	31	13

ՕԳՈՍՏՈՍ

Օ		Ն	Լ
19	Շբ. բկ. է. օր Աստուածածնի:	1	14
	ՆՈՐ ՏՈՄԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐ		
20	✠ Կիր. գձ. ը. Աստուածածնից յետոյ:	2	15
21	Բշ. գկ. ա. օր Աստուածածնի:	3	16
	☉ Լրումն լս. ժ. 17 ր. 41:		
21	Գշ. գձ. Տօն Իովակիմայ և Աննայի ծնողաց ս. Աստուածածնի:	4	17
23	Դշ. գկ. պահք:	5	18
24	Եշ. աձ. ս. Երեմիայի Մարգարէի:	6	19
25	Ուր. ակ. պահք:	7	20
26	Շբ. բձ. ս. Թովմայի Առաքելոյն: Նախատօնակ:	8	21
27	✠ Կիր. բկ. գ. Գիւտ Գօտոյ Աստծ. յետոյ:	9	22
28	Բշ. գձ. ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և ս. Վկայից:	10	23
29	Գշ. գկ. Մարգարէից, Եզեկիէլի, Եզրի և Զաքարիայի:	11	24
	☾ Վրջ. քռ. լս. ժ. 02 ր. 52:		
30	Դշ. գձ. պահք:	12	25
31	Եշ. գկ. Յովհաննու Հարապետին և Յոբայ արդարոյն:	13	26

ՍԵՊՏԵՄԲԵՐ

30 ՕՐ

Օ		Ն	Լ
1	Ուր. աձ. պահք:	14	27
2	Շբ. ակ. ս. Յակոբայ և Շմաւոնի առաքելոցն.	15	28
3	✠ Կիր. բձ. դ. Աստուածածնից յետոյ Հարսանիք:	16	29
4	Բշ. բկ. Անդրէի զօրաւորի և բանակի նորին:	17	30
5	Գշ. գձ. Անտրիանոսի և կնոջն Անատոլայ:	18	1
	☽ Ծն. լս. ժ. 13 ր. 03:		
6	Դշ. գկ. պահք:	19	2
7	Եշ. գձ. Աբրահամու և Խորենայ, Կոզմասի և Դամիանոսի և Աստուածատրոյ վկայից: Երեկ. Նախատօնակ:	20	3
8	✠ Ուր. գկ. **Ծնունդ ս. Աստուածածնի ի յԱննայէ:**	21	4
9	Շբ. աձ. Նիկիոյ ս. ժողովոյն 318 հայրապետացն:	22	5
10	✠ Կիր. ակ. ե. Աստուածածնից յետոյ: Բարեկենդան ս. Խաչի:	23	6
	Աշնանամուտ և հաւասարակաց—գիշեր-ցերեկ հաւասար:		

Օ	ՍԵՊՏԵՄԲԵՐ	Ն	Լ
11	Բշ. բձ. ա. օր պահոց ս. Խաչի:	24	7
12	Գշ. բկ. բ. օր ս. Խաչի պահոց.	25	8
	☾ Առ. քռ. ժ. 21 ր. 14		
13	Դշ. գձ. գ. օր. ս. Խաչի պահոց:	26	9
14	Եշ. գկ. դ. օր ս. Խաչի պահոց:	27	10
15	Ուր. դձ. ե. օր ս. Խաչի պահոց:	28	11
16	Շբ. դկ. Նաւակատիք:	29	12
17	✠ Կիր. աձ. **Խաչվերաց**. առաւօտեան անդաստան երեկոյ Թափօր ս. Խաչի: Եւս Յ. և Ռ. և պահք է նոցա:	30	13
18	✠ Բշ. ակ. Տօն Խաչի և Յիշատակ մեռելոց:	1	14
	Նոր—Տօմար Հոկտեմբեր:		
19	Գշ. բձ. Տօն եկեղեցւոյ:	2	15
20	Դշ. բկ. Տօն եկեղեցւոյ:	4	16
	© Լրումն լուսնի ժմ. 06 ր. 25		
21	Եշ. գձ. Տօն եկեղեցւոյ:	4	17
22	Ուր. գկ. Տօն Խաչի:	5	18
23	Շբ. դձ. Տօն Խաչի:	6	19
24	✠ Կիր. դկ. ր. Խաչից յետոյ բարեկենդ. Վարագայ ս. Խաչի պահոց:	7	20
25	Բշ. աձ. պահք. ս. Մամասայ Փիլիթաւմօնի և Սիմէօնի Սիւնակեցւոյն:	8	21
26	Գշ. ակ. կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստեր Մեծին Վարդանայ:	9	22
27	Դշ. բձ. պահք:	10	23
	☾ Վերջ քառ. լուսնի ժ. 04 ր. 20		
28	Եշ. բկ. Բարդուղիմէոսի, Անթիմոսի և Երանոսի:	11	24
29	Ուր. գձ. պահք:	12	25
30	✠ Շբ. գկ. ս. **Գէորգայ զօրավարին,**	13	26

Օ	ՍԵՊՏԵՄԲԵՐ	Ն	Լ

Ատոկեանի եւ Թումանեանի երգեցողին:

Անուանակոչութիւն Ս. Վ. Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Ե.-ի:

Հայրապետի տօնի առթիւ փակ են այսօր բոլոր հայոց դպրոցները:

43-րդ տարեդարձ Գէորգեան ճեմարանի, կատարի հանդէս Մայր Աթոռում և ճեմարանում:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

1	✠ Կիր. գձ. Տօն Վարագայ ս. Խաչի. Հար-	14	27
2	Բշ. դկ. Գուշթի Դինեցւոյն և... խանից	15	28
3	Գշ. աձ. ս. Եւստաթէոսի...	16	1
	© Մնունդ լուսնի ժ. 13 ր. 31		
4	Դշ. ակ. պահք:	17	2
5	Եշ. բձ. Իշխանացն Սահակայ և Համազասպայ:	18	3

Օ	ՀՈԿՏԵՄԲԵՐ	Ն	Լ
	Անւանակոչութիւն Ն. Կ. Բ. Ժառանգի կայսեր Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլաեւչի:		
6	Ուր. բկ. պահք:	19	4
7	Շբ. գձ. ս. 72 աշակերտացն Քրիստոսի:	20	5
8	✠ Կիր. գկ. գ. խաչից յետոյ Հարսանիք:	21	6
9	Բշ. դձ. ս. Փոկասու Հայրապետին և Երանոսի հետևողին:	22	7
10	Գշ. դկ. կուսանացն Թեկղի, Վառիառեայ և Պեչիգեայ:	23	8
	☽ Առջ. քառ. լուսնի ժ. 22 ր. 42		
11	Դշ. աձ. պահք:	24	9
12	Եշ. ակ. ս. Պանդալեոնի բժշկին և Եմոդեայ քահանային:	25	10
13	Ուր. բձ. պահք:	26	11
14	Շբ. բկ. Թարգմանիչ վարդապետաց մերոց Մեսրովբայ, Եղիշէի, Մովսէսի, Դաւթի, Գրիգոր Նարեկացւոյն և Ներսէսի Կլայեցոյն:	27	12
15	✠ Կիր. գձ. ե. Խաչից յետոյ:	28	13
16	Բշ. գկ. գիւտ նշխարացն Գրիգորիսի Աղվանից կաթողիկոսին:	29	14
17	Գշ. դձ. ս. Առաքելոցն Անանիայի, Մատթէ, Բառնաբայ և Փիլիպպոսի:	30	15
	Հրաշալի ազատութիւն Ն. Կ. Մ. Օգոստ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչի եւ Օգոստափառ ընտանեաց իւրոց:		
18	Դշ. դկ. պահք:	31	16
19	Եշ. աձ. Դիոնիսոսի Արիսպագացւոյն և Տիմէթէոսի և Տիտոսի Առաքելոց:	1	17

Օ	ՀՈԿՏԵՄԲԵՐ	Ն	Լ
	Նոր-Տօմար Նոյեմբեր.		
	☉ Լրումն լուսնի ժ. 19 ր. 69.		
20	Ուր. ակ. պահք:	2	18
21	Շբ. բձ. Չորս աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու:	3	19
	Գահակալութիւն Ն. Կ. Մ. Օգոստափառ Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչի:		
22	✠ Կիր. բկ. Զ. խաչից յետոյ:	4	20
23	Բշ. գձ. Ղունկիանոսի հարիւրապետին որ հաւատաց խաչելութեան Քրիստոսի և Յովսէփայ:	5	21
24	Գշ. գկ. ս. Թէոփիլոնի քահանային և Թալիլեաց:	6	22
25	Դշ. դձ. պահք:	7	23
26	Եշ. դկ. ս. Խարիթեանց.	8	24
27	Ուր. աձ. պահք:	9	25
	☾ Վերջ. քառ. լուսնի ժ. 04 ր. 20		
28	Շբ. ակ. 12 վարդապետացն:	10	26
29	✠ Կիր. բձ. է. Գիւտ Խաչ, Հարսանիք:	11	27
30	Բշ. բկ. Անաստասայ քահանային և Վարոսի եայլն:	12	28
31	Գշ. գձ. ս. Հիպերիքեանց:	13	29

ՆՈՅԵՄԲԵՐ

30 ՕՐ

1	Դշ. գկ. պահք:	14	29
2	Եշ. գձ. Ակակիոսի Մելիտացւոյն...	15	30
3	Ուր. դկ. պահք:	16	1
	Ծնունդ լուսնի ժ. 13 ր. 31		2
4	Շբ. աձ. ս. Յովհաննու Ոսկեբերանին:	17	3
5	✠ Կիր. ակ. ը. Խաչից յետոյ:	18	4
6	Բշ. բձ. ս. Ստեփաննոսի Հռովմայ հայրապետին:	19	5
			6
7	Գշ. բկ. Ակիփսիմեայ եպիսկոպոսին:	20	7
8	Դշ. գձ. պահք:	21	8
9	Եշ. գկ. ս. Մետրոփանոսի Աղեքսանդրոսի և Պօղոսի:	22	9
10	Ուր. դձ. պահք. երեկ. նախատօնակ:	23	10
11	Շբ. դկ. ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի:	24	11
	Առաջ. քառ. լուսնի ժ. 22 ր. 42		
12	✠ Կիր. աձ. թ. Խաչից յետոյ Հարսանիք:	25	12
13	Բշ. ակ. Մելիտոսի Անտիոքայ Հայրապետին Մինասայ Եգիպտացւոյն:	26	13
14	Գշ. ս. Դեմետրեայ վկային:	27	14

Ծնունդ Ն. Ն. Մ. Մայր Թագ. Կայսրուհու Մարիա Ֆէօդորովնայի

Օ	ՆՈՅԵՄԲԵՐ	Ն	Լ
15	Դշ. բկ. պահք:	28	13
16	Եշ. գձ. ս. Գուրիասայ և...	29	14
17	Ուր. գկ. պահք:	30	15
18	Շբ. դձ. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի:	1	16
	Նոր—Տոմար Դեկտեմբեր		
	Լրումն լուսնի ժ. 07 ր. 53		
19	✠ Կիր. դկ. Խաչից յետոյ, բարեկենդան Յիսնակի պահոց:	2	17
20	Բշ. աձ. ա. օր Յիսնակի պահոց:	3	18
21	✠ Գշ. ակ. բ. օր Յիսնակի պահոց: Ընծայումն ս. Աստուածածնի ի Տաճարն. Ես Ռուսաց և Յ.	4	19
22	Դշ. բձ. գ. օր Յիսնակաց պահոց:	5	20
23	Եշ. բկ. դ. օր Յիսնակաց պահոց:	6	21
24	Ուր. գձ. ե. օր Յիսնակաց պահոց:	7	22
25	Շբ. գկ. Գրիգորի և Նիկողայոս սքանչելագործ հայրապետացն և միւս.	8	23
	Վերջ քառ. լուսնի ժ. 17 ր. 04		
26	✠ Կիր. դձ. ա. Յիսնակից յետոյ, հարսանիք:	9	24
27	Բշ. դկ. կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհւոյ:	10	25
28	Գշ. աձ. Ղունկիանոսի քահանային և որբոցն:	11	26
39	Դշ. ակ. պահք:	12	27
30	Եշ. բձ. ս. Կղիմայ հայրապետին և Բագարատայ և Տաւրմինոյ եպիսկոպոսին:	13	28

ԴԵԿՏԵՄԲԵՐ
31 ՕՐ

●		Ն	Հ
1	Ուր. բկ. պահք. Ցերեկ. Նախատօնակ.	14	29
2	✢ Շբ. գձ. Առաջին լուսաւորչացն մերոց **Թադէոսի և Բարդուղիմէոսի։**	15	1
	☽ Մնունդ լուսնի ժ. 01 ր. 45		
3	✢ Կիր. գկ. բ. Յիսնակից։	16	2
4	Բշ. դձ. Գինարիոսի եպիսկոպոսի, Միակիափոսի զինուորին Յովակիմայ և Իբաւափառաց։	17	3
5	Գշ. դկ. ս. Արգարու Թագաւորին մերոյ։	18	4
6	Դշ. աձ. պահք։	19	5
	Անւանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչին։		
7	Եշ. ակ. Հարց Եգիպտացւոցն Պօղոսի, Պօղա եայլն։	20	6
8	Ուր. բձ. պահք։	21	7
9	✢ Շբ. բկ. **Յղութիւն ս. Աստուածնի. ի յԱննայէ** եւ Յ. և Ռուսաց։	22	8
	Ձմեռնամուտ և Արևադարձ, ցերեկն սկըսում է երկարել իսկ գիշերն կարճանալ։		
	☾ Մնունդ լուսնի ժ. 10 ր. 56		
10	✢ Կիր. գձ. գ. օր Յիսնակից. բարեկենդան ս. Յակովբայ պահոց։	23	9

0	ԴԵԿՏԵՄԲԵՐ	Ն	Հ
11	Բշ. գկ. պահք, Տօն Մինասայ, Երմոգենեայ. Գրաբոսի և կամաւոր աղքատներին Յովհաննու և Ալէքսանդրոսի։	24	10
12	Գշ. դձ. պահք Կուռնիլիոսի հայրապետին և այլն։	25	11
13	Դշ. դկ. պահք։	26	12
14	Եշ. աձ. պահք. Եւստրատիոսի, Օգսենտիոսի եայլն։	27	13
15	Ուր. ակ. պահք, երեկ. Նախատօնակ.	28	14
16	Շբ. բձ. ս. Յակովբայ Մծբնայ Հայրապետին, Մարուգէի ճգնաւորին, Մելիտոսի եպիսկոպոսին։	29	15
	☾ Լրումն լուսնի ժ. 20 ր. 07		
17	✢ Կիր. բկ. դ. Յիսնակից.	1	16
18	Բշ. գձ. Տօն Իգնատիոսի Հայրապետին, Աղդէի և Մարութայի եպիսկոպսին։	2	17
19	Գշ. գկ. ս. Թէոպոմպայ եպիսկոպոսին Թէոնայ վկային և այլն.	3	18
	Նոր—Տոմար Յունուար և Լատ. 1918 Թ.		
	ՏԱՐԵՄՈՒՏ		
20	Դշ. դձ. պահք։	4	19
21	Եշ. դկ. կուսանացն Իննոսի, Դոմնայի և Գլիրիկոսի քահանայից և այլն։	5	20
22	Ուր. աձ. պահք. Ցերեկ. Նախատօնակ։	6	21
23	Շբ. ակ. ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն։	7	22
24	✢ Կիր. բձ. Ե. Յիսնակից. Յ. և Ռ. Ծրագալոյց Ծննդեան. Լա. Յայտնութիւն Տեառն։	8	23
	● Վերջ քառ. լուսնի ժ. 05 ր. 18		
25	Բշ. բկ. ս. Ստեփաննոսի Նախավկային և Ա. Մարտիրոսին Յ. և Ռ. Ծնունդ.	9	24

Օ	ԴԵԿՏԵՄԲԵՐ	Ն	Լ
26	Գշ. գձ. ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։	10	25
27	Դշ. գկ. պահք։	11	26
28	Եշ. դձ. Որդոց Որոտման, Յակոբայ առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին։	12	27
29	Ուր. դկ. պահք, բարեկենդան Ծննդեան պահոց։	13	28
30	Շբ. աձ. ա. օր Ծննդեան պահոց և Տօն Բարսղի Հայրապետին, եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին և Աբբա Եփրեմի Խուրին Ասորւոյ։	14	29
31	✠ Կիր. ակ. Զ. Ցեմնակից յետոյ պահք բ. օր Ծննդեան։	15	30

1915/16 IV Խորէն վարդապետ Լազարեան

ս. Էջմիածին

ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆ

Օրացոյցներիս հանգուցեալ հիմնադիր Եղիշէ Թոփչեանը ծնւել է Ալէքսանդրապոլում 1872 թ. Նոյեմբերի 26-ին։ Սկզբնա-

կան կրթութիւնը ստանալով նախ ծխական և ապա քաղաքային դպրոցներում, նա 1890—1897 թ. ուսուցչութեամբ է պարապում։ Իր ուսման թերութիւնները լրացընելու համար նախ անցնում է Պետրոգրադ (1898) և ապա Բերլին (1900), ուր ուսումնասիրում է հասարակական գիտութիւններ։ 1902 թւին հաստատւելով Թիֆլիսում, նւիրում է իրեն հասարակական, գրական-հրապարակական գործունէութեան։ Խմբագրել է տասից աւելի թերթեր՝ «Արշալոյս», «Յառաջ», «Ալիք», «Երկիր», «Ժայռ» «Փայլակ» և այլն։ 1904 թ. սկսում է հրատարակել «Լոյս» պատի, գրպանի և սեղանի օրացոյցները։ 1909 թ. հաստատւելով Էրզըրումում հիմք է դնում «Յառաջ» թերթին։ Անա այդ եռանդուն գործունէութեան շրջանում, ոճրագործ մի հայի գնդակով սպանւում է, Պոլսից-Էրզրում վերադառնալիս, Բաբերդէն 5 ժամ հեռու, Խատրակ գիւղի մէջ 1909 թ. հոկտեմբերի 11-ին։

Մանրամասն կենսագրականը ստիպւած ենք թողնել աւելի պատեհ ժամանակի։

ՉԱՓԵՐ

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ 1917 Թ.

Յունւար	Փետրւար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Յուլիս	Օգոստոս	Սեպտեմ.	Հոկտեմբ.	Նոյեմբեր	Դեկտեմբ.
1	5	5	2	7	4	2	6	3	1	5	3
8	12	12	9	14	11	9	13	10	8	12	10
15	19	19	16	21	18	16	29	17	15	19	11
22	26	26	23	28	25	23	27	24	22	26	24
23			30			30			29		31

ՌՈՒՍԱԿԱՆ ՉԱՓԵՐ

Երկարութեան չափեր

Մղոնը=7 վերստի։

Վերստը=500 սաժէնի=1500 արշինի=3500 ոտնաչափի։

Սաժէնը=3 արշինի=48 վերշոկի=7 ոտնաչափի=48 մատնաչափի=840 գըծաչափի։

Արշինը=16 վերշոկի=$2^1|_3$ ոտնաչափի=28 մատնաչափի։

Վերշոկը=$1^3/_4$ մատնաչափի=$^3/_7$ արշինի= $6._{86}$ վերշոկի։

Մատնաչափը=10 գծաչափի=$^4/_7$ վերշոկի։

Գծաչափը=10 կէտերի։

Մակերևույթի չափեր

Դեսեատինը=2400 քառ. սաժէնի=0,0096 քառ. վերստի=117,600 քառ. ոտնաչափի։

Քառակ. սաժէնը=9 քառ. արշ.=2304 քառ. վերշ.=49 քառ. ոտնաչափի։

Քառ. արշինը=256 քառ. վերշ.=$5^1/_4$ քառ. ոտնաչափի=784 քառ. մատնաչափի։

Բովանդակութեան չափեր

Խորանարդ մղոնը=343 խոր. վերստի։

Խոր. վերստը=125,000,000 խոր. սաժ.։

Խոր. սաժէնը=27 խոր. արշինի=343 խոր. ոտնաչափի=110592 խոր. վերշ.=592704 խոր. մատնաչափի։

Խոր. արշինը=4066 խոր. վերշ.=13,7037 խոր. ոտնաչափի=31052 խոր. մատնաչափի։

Խոր. ոտնաչափը=2728 խոր. մատնաչափի=0,0787172 խոր. արշ=322425 խ. վերշ.։

Ընդեղէնների չափեր

Լաստը ունի 12 չետվերտ։

Չետվերտը » 8 չետվերիկ։

Չետվերիկը ունի 8 գարնց։

Չետվերտն իր մէջ պարունակում է՝ 380 ֆունտ ցորեն կամ 354 ֆունտ հաճար կամ 290 ֆունտ գարի կամ 220 ֆ. վարսակ,

Հեղուկների չափեր

Տակառն ունի 40 վեդրօ։

Վեդրօն՝ 8 շտոֆ կամ 10 կրուժկա։

Վեդրօն=30 ֆունտ ջրին։

Ծանրութեան չափեր

Բերկովեցն ունի 10 փութ,

Փութն ունի 40 ֆունտ։

Ֆունտը՝ 32 լօտ կամ 96 մսխալ կամ 9216 գօլիա։

Լօտն ունի 3 մսխալ։

Մսխալն ունի 96 դօլիա։

Դեղատան չափեր

Ֆունտը ունի 84 մսխալ կամ 12 ունցիա։

Ունցիան » 8 դրախմ,

Դրախման » 3 սկրուպուլ։

Սկրուպուլը » 20 գրամ։

ԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄՆԵՐԸ	Ռուսաս.		Ֆրանս.		Գերմ.	
	Ր.	Կոպ.	Ֆր	Սան	Մր	Պֆե.
Ռուսական ռուբլին	1	—	2	66	2	16
Անգլ. ֆունտ. ստեր.	9	46	25	22	20	43
Ֆրանս. ֆրանկը	»	37	1	—	—	81
Գերմ. մարկը	»	47	1	23	1	—
Աւստ. Ունգ. կրոնը	»	39	1	05	—	85
Թիւրք. պիաստրը *)	»	9	»	23	»	18
Ամերիկ. դօլլարը	1	94	5	18	4	19
Նապոն. իէնը	»	97	2	58	2	90

*) Պիաստրը=1 ղուրուշի

ԺԱՄԱՆԱԿԻ ՉԱՓԵՐ

ՏԱՐԻ կոչւում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում երկիրը մի ամբողջ պտոյտ է անում արեգակի շուրջը։ Այդ ժամանակամիջոցը=365 օր, 5 ժամ, 48 րոպէ և 46 վայրկեանի։ Այժմ թէ Գրիգորեան և թէ Յուլիան տոմարով տարին սկսւում է յունուարի 1-ից։ Սակայն հին ժամանակներում այդպէս չէր։ Օրինակ մի ժամանակ Եւրոպայում տարին սկսւում էր դեկտեմբերի 25-ից. իսկ Ֆրանսիայում մինչև 1564 թ. տարին Զատիկից էր սկսւում։

ԱՄԻՍ կոչւում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում լուսինը մի ամբողջ պտոյտ է անում երկրի շուրջը։ Լուսնային ամսի տևողութիւնը կախւած է նրա շրջաններից և 29 օր 12 ժ. և 44 րոպէյի։ Բացի դրանից կայ և արեգակնային ամիս, որ ամբողջ տարւայ $^{1}/_{12}$ մասն է կազմում։ Յունուար, մարտ, ապրիլ, մայիս [illegible] օգոստոս, հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներ 31-ական [illegible] ունեն, իսկ ապրիլ, յունիս, սեպտեմբեր, նոյեմբեր— [illegible]ական օր։ Փետրուար ամիսը հասարակ տարիներում 28 օր է, իսկ նահանջ տարիներում 29 օր։

ՕՐ կոչւում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում երկիրը պտոյտ է անում իր առանցքի շուրջը։ Օրը=24 ժ.։ Առաջին անգամ եգիպտացիներն 7 օրը միացնելով շաբաթ անւանեցին։ Յետոյ արդէն այդ 7 օրերը առանձին առանձին անուններ ստացան։

ԺԱՄԸ օրւայ $^{1}/_{24}$-րդ մասն է, որ հաւասար է 60 րոպէի, իսկ իւրաքանչիւր րոպէ 60 վայրկեանի։

Այսպէս ուրեմն տարին ունի 12 ամիս=50 շաբաթ=365 (հաս. տարի) կամ 366 (նահանջ տարի) օր։ Ամիսն ունի միջին թւով 30 օր, օրը 24 ժամ, ժամը 60 րոպէ, րոպէն 60 վայրկեան։

ԺԱՄԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

Երբ Պետերբ. ժ. 12-ն է լինում, այն ժաման.

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

	ցերեկ. ժ.	ր.		ցերեկ. ժ.	ր.
Բագւում	1	18	Աստրախան	1	11
Եկատերինօդ.	12	34	Վարշաւայում	11	23
Երևանում	12	56	Վլադիկավկազ	12	58
Թիֆլիսում	12	58	Տաշկենտում	2	30
Մոսկվայում	12	29	Քութայիսում	12	49
Սիմֆերօպօլ	12	15	Օդեսսայում	12	2

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

	ցերեկ.			առաւօտ.	
Բեռլինում	10	52	Նիւ-Եօրկում	5	43
	առաւօտ.		Կ. Պօլսում	11	58
Լոնդոնում	9	41	Վիէննայում	11	4
Հռոմում	10	48	Փարիզում	10	8
	գիշեր.			գիշեր.	
Մեկսիկայում	3	23	Ս. Ֆրանցիսկ.	1	52

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊՕՍՏ

I *Փակ նամակների* քաշը պէտք է լինի օտար քաղաքներինը՝ 5 փունտից ոչ աւելի, քաղաքայինը 1 փունտից ոչ աւել։

Արգելւում է փակ նամակ դնել ծանրոցների (посылка) մէջ, հակառակ դէպքում առնւում է տուգանք մի լոտից 1 ր.։

Փակ նամակները կարող են լինել.

Հասարակ—օտար քաղաքներ ուղարկելու համար լոտին 10 կոպ., իսկ քաղաքներում 3 կոպ., արտասահման—10 կոպ.։

Հասարակ նամակներին կարելի է չկպցնել պօստային մարկաներ։ Այդպիսի նամակներն ուղարկւում են, բայց ստացողը պիտի տայ իւրաքանչիւր լոտին 14 կոպ., իսկ արտասահմանեան թղթակցութիւնների իւրաքանչիւր լոտին 20 կոպ., այսինքն սովորական գնից 2 անգամ աւել։

Առանց մարկաների նամակ չի կարելի ուղարկել միայն կառավարչական հաստատութիւններին։ Եթէ նամակը պիտի մնայ պօստատանը, մինչ, որ ինքը, ստացողը, գնայ ու պահանջէ, այդ դէպքում պէտք է հասցէի վրա աւելացնել «до востребованія» (ցպահանջ)։ Այդպիսի նամակը պօստատանը պահւում է 6 ամիս։

Ապահովացրած նամակի վրա պէտք է գրել «заказное» բառը։ Իւրաքանչիւր այդպիսի նամակից առնւում է, բացի քաշի համար սահմանած գնից, ապահովութեան տուրք 10 կոպէկ։ Եթէ այդպիսի նամակը կորչի, պօստի վարչութիւնը պարտաւոր է 10 րուբլի տալ ուղարկողին կամ ստացողին, բայց պահանջը պէտք է յայտնէ ուղարկողը։

II *Բաց նամակները* արժեն՝ քաղաքայինը 1 կոպ. քաղաքից դուրս 3 կոպ., իսկ արտասահմանի համար—4 կոպ.։ Բաց նամակը ապահովացնելու համար պէտք է տալ աւել 7 կոպ., իսկ արտասահմանի համար՝ 10 կոպ.։ Պատասխանով բաց նամակը արժէ 6 կ., իսկ արտասահմանի համար—8 կոպ.։

III *Փաթեթներ* (бандерольныя отправленія). Տպած գրքերը, թղթերը, նամակները և լրագիրները ուղարկւում են բաց ծրարների կամ փաթեթների մէջ, որոնք կոչւում են բանդերօլ։ Կարելի է այդպէս ուղարկել և ձեռագիր հեղինակութիւններ և այնպիսի թղթեր, որոնք ընթացիկ նամակների և կամ գրագրութիւնների բնաւորու-

թիւն չունեն, ապրանքների այնպիսի նըմուշներ, որոնք գին չունեն։ Օտար քաղաքներ ուղարկելու համար պէտք է վճարել իւրաքանչիւր 4 լոտին 2 կոպ.։ Բանդերօլի քաշը պէտք է լինի 128 լոտից ոչ աւել, իսկ ապրանքների նմուշների համար – 28 լոտից—ոչ աւել։ Բանդերօլը ապահովացնելու համար պէտք է աւել տալ 10 կոպ.։ Պօստատներում վաճառւում են բանդերօլների համար պատրաստած առանձին թըղթեր։

IV *ծանրոցներ* (посылка) գնահատած կամ առանց գնահատութեան՝ պէտք է լինին կամ արկղների մէջ, կամ կարած քաթանի, կաշու մէջ։ Ծանրոցը դրսից կապւում է թոկով, որի հանգոյցները պէտք է կնքւեն պօստատանը արքունական կնիքով։ Ուղարկողի կամքից է կախուած գնահատել ծանրոցը կամ թողնել առանց գնահատութեան։ Ծանրոցների մէջ արգելւում է դնել փող կամ նամակ, հակառակ դէպքում փողի 1/4 մասը գրաււում է գանձարանի օգտին, իսկ նամակի համար վերցւում է տուգանք լոտին 1 րուբլի։ Ծանրոցների մէջ արգելուած է ուղարկել դիւրավառ և հեղուկ իրեր։

Ծանրոցներ ուղարկելու համար 1904

թ. յուլիսի 1-ից մտցրած է հետևեալ նոր սակագինը։

1) Ամբողջ կայսրութիւնը բաժանած է 3 մասի կամ գօտիի՝ ա)—Եւրոպական Ռուսաստան Անդրկովկասի հետ միասին բ)—Արևմտեան Սիբիրը, Թուրքեստանը և Անդրկասպեան երկիրը, գ)-Արևելեան Սիբիրը։

2) Ծանրոցները իրենց քաշի համեմատ բաժանւում են 4 տեսակի. ա)—մինչև 2 ֆունտը, 2)—2 ֆ. մինչև 7 ֆունտը, գ)—7 ֆ. մինչև 12 ֆունտը և դ)—12 ֆունտից աւել։

Ծանրոցների համար վճար վերցնւում է հետևեալ չափով։

Ծանրոցի քաշը	Ա գօտ. շրջան.	Բ գօտ. շրջան.	Գ գօտիի շրջանում		Մէկգօտիից միւսը	
	կ.	կ.	ր.	կ.	ր.	կ.
Ա) մինչև 2 ֆ.	25	35	—	45	—	45
Բ) 2 ֆ. մինչև 7 ֆ	45	65	—	85	—	85
Գ) 7 ֆ մինչև 12 ֆ	65	85	1	25	—	25
Դ) 12 ֆ. աւելի իւրաքանչիւր ֆունտի համար	5	10	—	15	—	15

Ծանրոցի վրա պէտք է գրել արժէքը (եթէ ծանրոցը գնահատած է) և ստացողի մանրամասն հասցէն։ Նոր կանոնադրութեան համաձայն այդ միևնոյնը պէտք է գրել նաև առանձին բլանկի վրա, որ կոչւում է сопроводительный адресъ և լինում է երկու տեսակ. ա) *սպիտակ*—առանց գնահատութեան ծանրոցների համար և բ) *վարդագոյն*—այն ծանրոցների համար, որոնց վրա նշանակւում է արժէքը։

Ծանրոցների համար պոստային տուրքը պէտք է վճարել ոչ թէ կանխիկ դրամով, այլ պոստային մարկաներով, որոնք կպցւում են վերոյիշեալ բլանկների վրա։

V *Դրամական ծրարներ*։ Այդպիսի ծրարների վրա բացի հասցէից պէտք գրել «денежный» բառը և դրամի քանակութիւնը։ Ծրարը պէտք է բաց յանձնել պոստատան աստիճանաւորին, որպէսզի նա ստուգէ գումարը։ Դրամաւոր ծրարների առաքման վճարն է՝ 1) 10 կոպ. իւրաքանչիւր լոտից, ապահովութեան տուրքը և 3) պատւիրելու տուրքը՝ 10 կոպէկ։

VI *Ապահովութեան տուրք*։ ա) 1 մինչև 600 ռուբլի գումարից—$^1/_2$ կոպ. ռուբլուց. բ) 600 մինչև 1600 ր.—$^1/_4$ ռուբլուց և 1 ր. 50 կոպ. միանուագ և գ) 1600 ր. աւել—$^1/_3$ կ. ռուբլուց՝ և 3 ր. 50 կոպ. միանուագ։

VII *Արժէքաւոր ծրարներով* (цѣнные пакеты) ուղարկւում են արժէքաւոր թղթեր (օր. մուրհակ, արժէթղթեր, անդորրագրեր և այլն։ Բայց արժէքաւոր ծրարների մէջ թղթերի հետ կարելի է ուղարկել նաև փող (բայց 1000 ռուբլուց ոչ աւել). բացի դրած փողից, մնացած միւս թղթերի գնահատութիւնը կախւած է ուղարկողից։ Բաց արժէքաւոր ծրարները 15,000 ռուբլուց աւել գնահատած չեն ընդունւում, իսկ փակ արժէքաւոր ծրարները 500 ռուբլուց ոչ աւել։

VIII *Վերադիր վճար*։ Ապահովագրած նամակները, բանդերօլները, ծանրոցները, դրամական և արժէքաւոր ծրարները կարելի է ուղարկել վերադիր վճարով, երբ ուղարկողն ուզում է, որ ստացողը վճարէ իրան հասանելի գումարը այս գլխից։ Վերադիր վճար կարելի է անել 200 ռուբլուց ոչ աւել։ Վերադիր վճարի մասին պէտք է գրել նամակի վրա՝ «наложены платежъ» և ապա բառերով նշանակել փողի գումարը։ Պոստային ծախքը իւրաքանչիւր ռուբլուց

2 կ., ընդամենը 10 կոպէկից ոչ պակաս, այսպէս օր., եթէ վերադիր վճարը 20 ր. է, պօստային ծախսը կլինի 40 կոպ., եթէ 7 ր. է—10 կոպ. և այլն։

IX Փոստով դրամ փոխադրելու (переводъ по почтѣ) համար վերցնում են մինչև 25 րուբլին՝ 15 կոպ. իսկ 25-ից—100 ր.՝ 25 կ. դրանից աւել գումար չի կարելի փոխադրել փոխադրական մի բլանկով (переводн. бланкъ)։

X Հեռագրով փոխադրելու (переводъ по телеграфу) համար բացի վերոյիշեալ վճարից պէտք է տալ և հեռագրի վճար—Եւրոպական կամ Ասիական Ռուսաստանի սահմաններում՝ 1 ր. 15 կ., իսկ Եւրոպական Ռուսաստանից և Կովկասից—Ասիական Ռուսաստան և ընդհակառակը՝ 2 ր. 15 կ.։

XI Փոստային հիմնարկութիւնների մէջ ընդունելութիւն ու ստանալը կատարւում է ամեն օր առաւօտեան ժամի 8-ից մինչև 2 ը։ Իսկ կիրակի և մի քանի տօն օրերը 9-ից մինչև 10-ը ժամը։ Մի քանի եկեղեցական և կայսերական տօն օրերում բոլորովին չի լինում ոչ ընդունելութիւն և ոչ ստացում։ Այդ օրերը նշանակւած են առանձին ցուցակում և այն կոչնագրերի (повѣстка) վրա,

որոնք յանձնւում են արժէքաւոր թղթակցութիւն ստացողներին։

XII Պօստատան վարչութեան անծանօթ մարդիկ պիտի ներկայացնեն կոչնագրի վրա յայտնի անձանց կամ պաշտօնական հաստատութիւնների վկայութիւնը, թէ նրանք իսկ որ այն մարդիկն են, որոնց ուղարկւած է ծրարը։

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Իւրաքանչիւր հեռագրի համար պէտք է վճարել առանձնակի 15 կոպէկ և բացի դրանից բառերի թւի հաշւով։ Ռուսաստանը երկու մասի է բաժանւած—Եւրոպական և Ասիական Ռուսաստան։ Առաջին մասը բացի Եւրոպական Ռուսաստանից պարունակում է իր մէջ նաև Կովկասը, իսկ երկրորդը—և Անդրկասպեան երկիրը։ Իւրաքանչիւր մասի սահմաններում հեռագրի իւրաքանչիւր բառի գինն է 5 կոպ. իսկ երբ մի մասից միւս մասն է ուղարկւում հեռագիրը, այն ժամանակ իւրաքանչիւր բառն արժէ 10 կոպ.։

Քաղաքային հեռագրի վճարը բառին 1 կոպէկ, 15-ից աւել տառ ունեցող բառը երկու բառ են հաշւում. իսկ կէտերը, չակերտ-

ները և գիծը ոչինչ չեն հաշւում։ Իւրաքանչիւր 5 թւանշանը մի բառ է համարւում։

Անյետաձգելի հեռագիր.—Երբ ուզում են, որ հեռագիրը ամենից շուտ ուղարկւի և շուտ տեղ հասնի, պէտք է հեռագրի վրա գրեն «срочная»։ Այդպիսի հեռագրի համար վերցնում են 3 անգամ աւել, այսինքն եթէ հասարակ հեռագրի բառը 5 կ. է, անյետաձգելի հեռագրի բառը կարժենայ 15 կ. կամ եթէ հասարակը 10 կոպ. է, անյետաձգելին կարժենայ 30 կոպէկ և այլն։

Վճարած պատասխանը: Հեռագիր ուղարկողը կարող է վճարել և իր սպասած պատասխանի արժողութիւնը։ Ուղարկողի կամքից է կախուած, թէ պատասխանի համար քանի բառի վճար է ուզում տալ։ Եթէ գրել «պատասխանը վճարած է—ответъ уплаченъ» հեռագրատանը կստանան 10 բառի փող, իսկ եթէ ուղարկողը կամենում է, որ 10 բառից աւել կամ պակաս լինի, այն ժամանակ պիտի նշանակէ վճարած բառերի քանակութիւնը «отвѣтъ 15 словъ կամ 7 словъ уплаченъ"։

Միջազգային հեռագիրները կարելի է գրել բոլոր եւրոպական և մի քանի ասիա-

կան լեզուներով (կարելի և հայերէն, բայց լատինական տառերով գրած)։ Արտասահմանեան իւրաքանչիւր երկրի համար նշանակուած է առանձին գին իւրաքանչիւր բառից. այն է.

ԵՒՐՈՊԱ

Անգլիա	22 կ.	Սերբիա	15 կ.
Աւստրօ-Ունգ.	11 կ.	Սպանիա	21 կ.
Բուլղարիա	15 կ.	Ռումինիա	8 կ.
Գերմանիա	11 կ.	Ֆրանսիա	15 կ.
Բելգիա	17 կ.	Ա Ս Ի Ա	
Դանիա	15 կ.	Արաբիա	
Թիւրքիա	26 կ.	Հիջազ	1,72
Հօլանդիա	14 կ.	Եմէն	1 92
Յունաստան	23 կ.	Բուխարա	10
Շւեյցարիա	17 կ.	Կորէա	3,53
Շւեցիա	14 կ.	Եապոնիա	1,13
Չենօգօրիա	17 կ.	Պարս. (հիւս.)	24
Պօրտուգալիա	23 կ.	Հարաւ. Պարս.	34

Այս ազիւսակի մէջ նշանակած է ամենապակաս վճարը կարճ և անմիջական ճանապարհով։

Հեռագրի տեղ հասնելը: Հեռագիր ուղարկողը կարող է պահանջել, որ իրեն հաղորդուի պօստով կամ հեռագրով՝ տեղեկութիւն այն մասին, թէ երբ է տարւած

հասցէատիրոջ հեռագիրը (ամսաթիւ և ժամը)։ Դրա համար նա վճարում է սահմանուած տուրքը, իսկ հեռագրի վրայ մակագրում է. "Извѣщеніе оплачено по телеграфу" (եթէ հեռագրով է կամենում) կամ почтовое извѣщеніе опалачено (եթէ պօստով)։ Հեռագրատունը անմիջապէս պօստով կամ հեռագրով հաղորդում է ցանկացած տեղեկութիւնը։

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Կանոններ երկաթուղու ճանապարհորդների համար.

1. Տոմսակների վաճառումը և բագաժի ընդունելութիւնը սկսւում է մայրաքաղաքներում $1^1/_2$ ժամ, առաջնակարգ կայարաններում 1 ժ. և մնացած կայարաններում կէս ժամ գնացքը մեկնելուց առաջ։

2. Իւրաքանչիւր գնացքի համար վաճառւում են առանձին տոմսակներ, որոնց վրայ յատուկ կնիքով նշանակւում է ամսաթիւը։ Առանց այդ կնիքի, կամ ոչ այդ օրուայ ու գնացքի կնիքը կրող տոմսերը կորցնում են իրենց նշանակութիւնը։ Գնած տոմսակները պահում են իրանց ոյժը.

1–200	վերստի	համար	1 օր
200–500	»	»	2 „
500-800	»	»	3 „
800-1100	»	„	4 »
1100—1500	»	„	5 »

Դրանից բարձր իւրաքանչիւր 400 վ. աւելացնել մէկ օր։

Իւրաքանչիւր տոմսակի վրայ նշանակւած է լինում, թէ նա քանի օրւայ ոյժ ունի։ Օրը հաշւում են կէս գիշերից մինչև հետևեալ կէս գիշեր։

3. Ճանապարհորդութիւնը ընդմիջելու դէպքում, այսինքն երբ ճանապարհորդը դեռ տեղ չհասած ուզում է մի որևէ կայարանում կանգ առնել, պէտք է տոմսակը ներկայացնէ կայարանապետին (նաչալնիկ) որ համապատասխան կնիք խփէ։ Ճանապարհ ընկնելուց առաջ էլ պէտք է նորից կնիք խփել տալ. հակառակ դէպքում տոմսակը կը կորցնէ իր ոյժը։

4) Իւրաքանչիւր հասակաւոր ճանապարհորդ իրաւունք ունի 1 փ. բագաժ տանելու, իսկ երեխաները 20-ական ֆունտ, եթէ դրանից աւելի է բագաժը, աւելորդի համար պիտի վճարել համապատասխան սակագնով։

5. Եթէ բագաժը վնասուած է կամ պակասել է, իսկոյն պէտք է յայտնել կայարանի վարչութեանը բագաժն ստանալիս, իսկ եթէ կորել է, պէտք է վարձատրութիւն պահանջել, այդ մասին գրաւոր յայտարարութիւն տալով մի ամսուայ ընթացքում, հաշւելով ուղարկած օրից։

6) Հինգ տարեկանից փոքր երեխաները կարող են ճանապարհորդել հասակաւորների հետ առանց տոմսակի, իսկ 5—10 տարեկան երեխաները վճարում են իսկական տոմսակի 1/4 մասը։ 10-ից աւելի տարիք ունեցողները վճարում են նոյնքան, որքան հասակաւորները։

Տոմսակի արժէքը կախուած է ճանապարհի երկարութիւնից։

Ն. Կ. Մ. Ռուսաց բանակների Գերագոյն Հրամանատար Օգոստափառ Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչ
եւ Թագուհի
Ալեքսանդրա Փէօդորովնա։

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԸՆՏԱՆԻՔԸ

Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչ, Ինքնակալ համայն Ռուսաստանի, ծնուել է 1868 թ. մայիսի 6-ին (անուանակոչութիւնը Դեկտեմբերի 6-ին)։ Նորին Կայսերական Մեծութիւն Մայր Թագուհի Մարիա Փեոդորովնա, ծնուել է 1847թ. նոյեմբերի 14-ին (անուանակոչութիւնը յուլիսի 22-ին)։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնա, ծընուել է 1872 թ. մայիսի 25-ին (անուանակոչութիւնը ապրիլի 23-ին)։

Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Ցեսարեւիչ և Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայեւիչ, ծնուել է 1904 թ. յուլիսի 30-ին (անուառակոչութիւն Հոկտեմբերի 5-ին)։

Նորին Կայսերական Մեծութեան Դուստրները։

Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաեւնա, ծնուել է 1895թ. Նոյեմբերի 3-ին (անուանակոչութիւն Յուլիսի 11-ին)։

Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլաեւնա, ծնուել է 1897թ. Մայիսի 29-ին անուանակոչութիւն Յունուարի 12-ին)։ Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Մարիա Նիկոլաեւնա, ծնուել է 1899 թուի յուլիսի 14-ին (անուանակոչութիւնը յուլիսի 22-ին)։ Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլաեւնա ծնուել է 1901 թ. յունիսի 5-ին (անուանակոչութիւն Դեկտեմբերի 22-ին)։

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ

Ա Ն Ց Ա Գ Ի Ր

Անցագիրը լինում է երկու տեսակ՝ 1) մշտական և 2) ժամանակաւոր։ Մշտական անցագրատեր կարող են ստանալ. ա) չծառայող ազնուականները. բ) I և II կարգի վաճառակ. գ) պատ. քաղաքաց. դ) պետ. ծառ. ինքնակամ հեռացած պաշտ. և ե) զանազան պաշտօնեաները.

Քաղաքացիական ծառայութեան մէջ գտնուող անձինք մշտական անցագրեր կարող են ստանալ այն վարչութիւնից, որտեղ ծառայում են, իսկ հոգեւորականները— համապատասխան իշխանութիւնից։

Վաճառականները պարտաւոր են իւրաքանչիւր տարի մինչև փետրուարի 15-ը ոստիկանութեան ներկայացնել իրանց վաճառականները և անցագրի մէջ նշանակել տալ այդ մասին։

Ժամանակաւոր անցագիր կարող են ստանալ մէշչանինները, արհեստաւորները և գիւղացիները։ Ժամանակաւոր անցագիրը լինում է 3 տեսակ՝ ա) անցագրատետր. բ) անցագիր և գ) վկայական։ Անցագրատետրը տրւում է 5 տարով. անցագիրը 1 տարով. իսկ վկայականը աւելի կարճ ժամանակով։

Ռուսաց կայսրութեան բոլոր տեղերում, բացի Լեհաստանից. անցագրերը տրւում են բոլորովին ձրի. միայն անցատետր ստացողներից վերցնում են 15 կ. իբրև տետրի արժէքը։

Անցագիր ստանալ չեն կարող դատարանի վճռով բոլոր իրաւունքներից (զրկուածները) այդ մասին առանձին խնդիր ներկայացնելով և յիշելով ճանապարհորդութեան նպատակը, որի համար պէտք է վճարել իւրաքանչիւր վեցամսեակի համար 20 ր.։

Մուրհակի գումարը մինչև	Մուրհակաթղթի արժէքը	
Րուբլի	Ր.	Կ.
50	—	10
100	—	15
200	—	30
300	—	45
400	—	60
500	—	75
600	—	90
700	1	05
800	1	20
900	1	35
1000	1	50
1500	2	25
2000	3	—
3000	4	50
4000	6	—
5000	7	50
6000	9	—
7000	10	50
8000	12	—
9000	13	50
10000	15	—
20000	30	—
30000	45	—
40000	60	—
50000	75	—

ՄՈՒՐՀԱԿ

Մուրհակ (вексель) տալ կարող են այն բոլոր անձինք, որոնք իրաւունք ունին պարտաթուղթ տալու։ Պարտաթուղթ չեն կարող տալ անչափահասները, խելագարները, վատնիչ յայտարարուածները, բոլոր քաղաքացիական իրաւունքներից զրկուածները և այլն։

Մուրհակ տալ չեն կարող. 1) հոգեւորականները, 2) այն գիւղացիները, որոնք ոչ անշարժ կայք ունին, բացի իրանց հողաբաժնից (նադել), և ոչ էլ առևտրական վկայական։

Պսակուած կանայք կարող են միայն ամուսնու թոյլտւութեամբ մուրհակ տալ, իսկ օրիորդները (նոյնիսկ չափահասները) ծնողների թոյլտւութեամբ, եթէ նրանցից բաժանուած չեն։ Բայց եթէ նրանք իրանց

անունով մի որևէ առևտրական հաստատութիւն կամ գործ ունին, այն ժամանակ կարող են և առանց ամուսնու կամ ծնողի համաձայնութեան մուրհակ տալ։

Մուրհակ տալու իրաւունք չունեցողների տուած մուրհակները չեն կարող իսկական մուրհակի ոյժ ունենալ. սակայն նրանք առոչինչ չեն համարւում, այլ նոյն ոյժն ունին, ինչ որ հասարակ պարտաթղթերը։

Մուրհակները գրւում են առանձին մուրհակաթղթի վրայ, որոնց արժէքը կարելի է որոշել նախորդ երեսի աղիւսակով։

Եթէ մուրհակը հասարակ թղթի վրա է գրած, այն ժամանակ նա չի համարւում մուրհակ և չունի մուրհակի ոյժ։

Մուրհակները լինում են երկու տեսակ. 1. հասարակ մուրհակ և 2. փոխանակագիր։ Առաջին դէպքում մուրհակ տւողը ինքը պիտի վճարէ գումարը, իսկ երկրորդ դէպքում—նա մէկ ուրիշին է յանձնարարում վճարել։

Մուրհակներր գրւում են երկու տեսակ, ըստ առաջին պահանջման (по предъявленію) կամ որոշ ժամանակով (срочные)։ Առաջին դէպքում պարտապանը իր պարտքը

պիտի վճարէ իսկոյն, երբ որ պահանջեն։ Երկրորդ դէպքում՝ որոշւած ժամանակը լրանալուց յետոյ։

Եթէ այդ ժամանակամիջոցներում պարտապանը իր պարտքը չվճարէ, պէտք է մուրհակը ներկայացնել նոտարին, որը օրինական ձևով մակագրում է չվճարման մասին (протестъ)։ Դրանից յետոյ պարտատէրը դատարանի միջոցով կարող է պահանջել գումարը։

Մուրհակներն իրենց ոյժը կորցնում են. 1) երբ գրւած են «ըստ առաջին պահանջման", բայց 12 ամսւայ ընթացքում չեն ներկայացրած նոտարին բողոքելու (протестованіе) համար։ 2) Եթէ գրւած են "որոշ ժամանակով» կամ «ըստ առաջին պահանջման», բայց բողոքելուց յետոյ 5 տարւայ ընթացքում չեն առաջարկւած վճարելու։ Այդ երկու դէպքում էլ մուրհակները պահպանում են իրանց նշանակութիւնը 10 տարի, իբրև պարտաթուղթ (долг. обязат.)։

Մուրհակները գրւում են որոշ ձևով. օրինակ.

ա. Հասարակ մուրհակ.

Բագու 4 Նոյեմբերի 1905 թ.։

Մուրհակ 2000 ր.։ Այս օրից վեց ա-

միս յետոյ պարտաւոր եմ այս մուրհակով վճարելու Երեւանցի պ. Վարդան Մարտիրոսեան Շահինեանցին երկու հազար րուբլի։ Բագուեցի 2-րդ կարգի վաճառական Սահակ Բզնունի։

Բագու. 1917 թ. 25 յունուարի։ Մուրհակ 100 րուբլու։ Առաջիկայ 1906 թ. յունուարի քսան և հինգին այս իմ մուրհակով պարտաւոր եմ վճարել Բագւի վաճառական Գ... Մ... հարիւր րուբլի։

Կար. Սարգսեան

Բ. Փոխանակագիր.

Շուշի, 22 մայիսի 1905 թ.

Մուրհակ 100 ռուբ.։ Ըստ առաջին պահանջման—(կամ վերոյիշեալ թուից քառասուն օր յետոյ)—վճարեցէք այս մուրհակի համեմատ Ալէքսանդրապօլցի վաճառական Սմբատ Մանուկեանցին 1000 րուբլի։ Արամ Աթանասեանց։

2-րդ կարգի վաճառական Արամ Արշակունուն, Կարս քաղաքում։

ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔ

(Гербовый сборъ)

5 կոպէկանոց դրւատաւոր դրոշմանիշ

պէտք է կպցնել այն բոլոր հաշիւների, ստացականների և այլ նմանօրինակ թղթերի վրա, որոնց գումարը 5 ր. աւել է։ Մինչև 5 ր. գումարը դրոշմանիշ չէ պահանջում։

10 կոպ. դրոշմատուրքի ենթարկւում է իւրաքանչիւր թերթը՝ — հաւատարմաթուղթ մի որևէ հիմնարկութիւնից 5 րուբլուց աւելի գումար—(ռոճիկ, կենսաթոշակ, ընծայ կամ օժանդակութիւն)—ստանալու։ Փաստաթղթեր, որոնց գումարը 50 ր. աւել չէ։

Գրքոյկներ—(80 երեսից ոչ աւել)—որոնցով ապառիկ ապրանք են վերցնում վաճառատներից։

15 կոպ. դրոշմատուրքի ենթարկւում է իւրաքանչիւր թերթը՝ պետութեան հաստատած ատեանների ու հաստատութիւնների տւած ստացականների՝ փող, փաստաթղթեր կամ այլ առարկաներ ստանալու մասին. ապահովագրական պօլիսները, եթէ ապահովութեան պրեմիան 9—15 րուբլի է. անշարժ կայքերի և յանձնարարութիւնների մասին կատարուած արձանագրութիւնները, եթէ գումարը 50—100 րուբլի է։ Իւրաքանչիւր փաստաթուղթ—տոմսակ, հաշիւ,

ստացական և այլն, եթէ արժէքի գումարը 50 րուբլուց աւել է տարեկան։

60 կոպ. խւրաքանչիւր թերթը մասնաւոր մարդկանց կամ հիմնարկութիւնների, տւած խնդրագրերի, յայտարարութիւնների, գանգատների, բացատրութիւնների և այլն։ Ապահովագրական պոլիսները, եթէ պրեմիան 15—30 րուբլի է, յանձնարարութիւնների կամ անշարժ կայքի մասին կազմած արձանագրութիւնները, եթէ գումարը 100—200 րուբլի է։

1 րուբլի խւրաքանչիւր թերթը, վաճառականութեամբ կամ արհեստներով պարապելու թոյլտւութեան վկայականները։ Ամեն տեսակ հաւատարմական նամակներ, կտակաթղթեր։ Պայմանաթղթեր և վաճառականական ամեն տեսակ կապակցութիւններ, երբ գումարն անյայտ է։ Ապահովագրական պոլիսները, եթէ պրեմիան 30 ր. աւել է, պարտաթղթերը և գրաւաթղթերը, եթէ արժէքի գումարը 1000 ր. աւել է։

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ԵՒ ՆՊԱՍՏՆԵՐ ԶԻՆՒՈՐՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՞ր զինւորները և ինչպիսի դէպքերում են կենսաթոշակ ստանում

Կենսաթոշակ ստանում են այն զինւորները, որոնք վերադառնում են զօրքերից աշխատանքի ընդունակութիւնը կամ բոլորովին կամ մասամբ կորցրած։

Կենսաթոշակ ստանալու իրաւունք ունին անխտիր բոլոր զինւորները առանց նայելու—ունին նրանք իրենց ապրուստի միջոցները թէ ոչ։

Նրանք, որոնք աշխատանքի ընդունակութիւնը կորցրել են բոլորովին և ոչ միայն իրենք այլևս չեն կարող ոչինչ վաստակել, այլ դեռ մի առանձին մարդ էլ պիտի նայի նրանց,—մտցւում են առաջին կարգը և հասնում է 216 ռուբլի տարեկան։

2-րդ կարգի կենսաթոշակ 168 ռուբլի տարեկան ստանում են այն զինւորները, որոնք բոլորովին կորցրել են աշխատելու ընդունակութիւնը, բայց առանձին մարդու հոգատարութեան պէտք չունին։

3-րդ կարգով կենսաթոշակ են ստանում տարեկան 108 ռուբլի նրանք, որոնք աշխատելու ընդունակութիւնը կորցրել են ոչ բոլորովին, սակայն 70 տոկոսից ոչ պակաս։ Այս կարգին են պատկանում մի ձեռքի կորուստը արմունկից ներքև, մի ոտի կորուստը ծնկից ներքև կամ նրանց դժուարութեամբ բանեցնելը։

4-րդ կարգով կենսաթոշակ են ստանում տարեկան 66 ռուբլի այն զինուորները, որոնք կորցրել են աշխատելու ընդունակութիւնը 40 տոկոսից աւելի, բայց 70 տոկոսից պակաս։ Այս կարգին վերաբերում են՝ մի ձեռքի բութ մատի կորուստը, ձեռքի կամ ոտքի կարճանալը, և այլն։

5-րդ կարգով կենսաթոշակ է տրւում 30 ռուբլի տարեկան։ Այս կարգին վերաբերում են այն վնասուածքները, որոնց պատճառով աշխատելու ընդունակութիւնը աւելի է քան 10 տոկոս և 40 տոկոսից պակաս, օրինակ՝ մի աչքի տեսողութեան կորուստը կամ երկու աչքերի տեսողութեան կիսով չափ թուլանալը, դէմքի այլանդակումը բո-պիներից, վիզը կոտրելը, ցուցամատի կորուստը։

Բժշկական քննութիւն

Որոշելու համար, թէ զօրքերից արձակւող զինւորը որ աստիճան կորցրել է աշխատելու ընդունակութիւնը, նրանց քննում են կոմիսիաների մէջ։ Այդ քննութիւնը լինում է կամ բանակի թիկունքում, ուր քննում է թիկունքի էւակուացիոն կոմիսիան, կամ թէ կայազօրութեան ներսը գտնուած կոմիսիաներում։

Բժշկական քննութեան ենթարկելու և կենսաթոշակ նշանակելու համար կարելի է դիմել մերձաւոր իշխանութեանը—Զինւորական Կառավարչին (Воинскій Начальникъ) Զինւորագրական Ատեանին (Воинское Присутствіе) կամ գաւառական ոստիկանութեանը։ Խնդրել կարելի է գրաւոր և բերանացի։

Կենսաթոշակը տրւում է Արքունի Գանձարանից (Казначейство)։

Ո՞ր ժամանակից է տրւում կենսաթոշակը

Տուժած զինւորի համար նշանակւած կենսաթոշակը նա ստանում է այն օրից, երբ դադարեցւում է նրան պետական գանձարանից ապրուստի փող տալը, իսկ եթէ նա կանչւած է եղել պահեստից կամ օպոլ-

չենխայից և նրա ընտանիքը նպաստ է եղել ստանում պետական գանձարանից, այդ դեպքում կենսաթոշակը տրվում է այն օրից, մինչև երբ տրված է եղել այդ նպաստը ընտանիքին։

Ո՞ր դեպքում են զինվորների այրիները և բոլորովին որբ մնացած զավակները կենսաթոշակ ստանում

1) Երբ զինվորը սպանված է պատերազմում, մահացել կամ կորել է այնտեղ անհետ։

2) Երբ պատերազմի մեջ եղած զինվորը մեռել է պատերազմից վերադառնալուց հետո, բայց ոչ ավելի քան մի տարի հետո սկսած այն օրից, երբ նրա զորամասը ցրված է խաղաղ ժամանակի դրության մեջ կամ արձակված է։

3) Երբ զինվորը մեռել է խաղաղ ժամանակ զինվորական ծառայության մեջ կամ 3 ամսվա ընթացքում ծառայությունը թողնելուց հետո։

4) Երբ զինվորը կենդանի ժամանակ ինքն էր կենսաթոշակ ստանում, այդ դեպքում այրիներն ու որբերը կարող են այդ կենսաթոշակը ստանալ։

Կենսաթոշակների չափը

Այրիներին և որբերին զանազան չափի կենսաթոշակներ են տրվում, նայելով թե զինվորական ինչ կոչումի տեր է եղել մեռած զինվորը և որքան տարի է եղել ծառայության մեջ։

Բոլոր կոչումների զինվորների այրիները կենսաթոշակ են ստանում տարեկան 48-ից մինչև 84 ռ.։

Բոլորովին որբերը կենսաթոշակ են ստանում հետևյալ չափերով. եթե նրանք երեքն են կամ ավելի, այդ դեպքում նրանք ստանում են բոլորը միասին նույնքան, որքան որ պետք է ստանար այրին (84 ռ., 60 ռ., 48 ռ.), եթե նրանք երկուսն են, այդ դեպքում նրանք միասին ստանում են երեք քառորդը այն կենսաթոշակի, որ պետք է ստանար այրին (63, 45 կամ 36 ռ.), իսկ մեկը ստանում է կեսը այրու կենսաթոշակի (42, 20 կամ 24)։

Բոլորովին որբերը կենսաթոշակը ստանում են մինչև 17 տարեկան հասակը։

Որ ժամանակից է հասնում կենսաթոշակը

Կենսաթոշակները տրվում են հունվարին, մայիսին և սեպտեմբերին չորս ամ-

ւայ համար առաջուց Արքունի Գանձարանից (Казначейство) կամ թոշակաւորների խնդրանօք Գիւղական Վարչութիւնից առանձին հաշւեթերթերով, որոնք տրւում են Արքունի Գանձարանից։

Ուր է տրւում խնդիրը կենսաթոշակ ստանալու մասին եւ ինչ դոկումենտներ են պահանջւում դրա համար

Կենսաթոշակ ստանալու համար խընդիրքը կարող է տրւել գրաւոր և կարող է յայտնել բերանացի։ Խնդիրքը կարող է տալ Արքունի Գանձարանին (Казенная Палата) կամ Գաւառական Զեմստւային Վարչութեանը (Уѣздная Земская Управа), Զեմստւային Կառավարչին (Земскій Начальникъ), Գաւառական կամ Քաղաքային Ոստիկանական Վարչութեանը (Уѣздное или Городское Полицейское Управленіе), Զինւորական Կառավարչին (Воинскій Начальникъ), կամ Վոլոստի Վարչութեանը (Волостное Правленіе).

Որպէսզի կենսաթոշակ ստանալու գործը չձգձգւի, խնդիրքի հետ պէտք է ներկայացնել հետևեալ դոկումենտները.

1) Այրու ամուսնութեան մետրիկան քահանայից կամ կոնսիստորիայից։

2) Բոլորովին որբ մնացած զաւակների համար—նրանց ծննդեան մետրիկաները։

3) Վկայութիւն այն մասին, որ խնդրողների ամուսինը կամ հայրը զինւոր է եղել պատերազմի մէջ և այնտեղ սպանւած է կամ կորել անհետ, կամ մեռել ծառայութեան ժամանակ։

Գէորգեան խաչի եւ Գէորգեան մեդալի արժանացած զինւորներին դրամ տալը

Գէորգեան խաչի արժանացած իւրաքանչիւր զինւորի՝ քաջագործութիւնը կատարած օրից տարեկան փող է նշանակւում հետևեալ չափով. 4-րդ աստիճանի համար 36 ռ., 3-րդ աստիճանի համար 60 ռ., 2-րդ աստիճանի համար 96 ռուբլի և 1-ին աստիճանի համար 120 ռ.։

Գէորգեան մեդալի արժանացածին քաջագործութիւնը կատարած օրից ամեն տարի փող է տրւում հետևեալ չափերով. 4-րդ աստիճանի համար 12 ռ., 3-րդ աստիճանի համար 24 ռ. և 1-րդ աստիճանի համար 36 ռուբլի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՆՉՒԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ով ունի իրաւունք նպաստ ստանալու

Պետական նպաստներ տրւում են այն բոլոր զինւորների ընտանիքներին, որոնք զօրահաւաքի առիթով սահմանւած ժամանակից աւելի պահւում են իսկական ծառայութեան մէջ կամ զօրահաւաքի ժամանակ կանչւում են պահեստից, կամ ընդունւում են իբրև կամաւոր զինւորական դրուժինաների մէջ։

Զինւորների կանայք և երեխաները օրէնքով նպաստ ստանալու իրաւունք ունին բոլոր դէպքերում, առանց նայելու՝ ունի՞ն նրանք արդեօք իրենց սեփական ապրուստի միջոցները, թէ ոչ։ Իսկ կանչւած զինւորի հայրը, մայրը, տատը, եղբայրներն ու քոյրերը կարող են նպաստ ստանալ միայն այն ժամանակ, եթէ նա մինչև ծառայութեան կանչւելը պահելիս է եղել նրանց իր աշխատանքով։

Գանձարանից նպաստ չեն ստանում կանչւածի 17 տարեկան և աւելի մեծ զաւակները, և նրա ամուսնացած աղջիկները։

Իսկ 5 տարեկանից պակաս զաւակներին նպաստը տրւում է կիսով չափ։

Մասնաւոր անձերից և հաստատութիւններից ընտանիքի ստացած օգնութիւնը ոչ մի դէպքում չի զրկում նրան պետական նպաստ ստանալու իրաւունքից և չի քչացնում այդ նպաստի քանակը։

Նպաստի քանակը

Նպաստները տրւում են փողով։ Նահանգական և Շրջանային Ատեանը նշանակում է, թէ իւրաքանչիւր տեղում ամսական որքան նպաստ է հասնում մարդագլուխ։ Այդ նպաստը որոշւում է այնպիսի հաշւով, որ դրանով կարելի լինի գնել ոչ պակաս քան 1 փութ 28 ֆունտ ալիւր, 10 ֆունտ կրուպա, 4 ֆունտ աղ և 1 ֆունտ ձէթ։

Ամբողջ ընտանիքի ստացած նպաստի քանակը կախւած է այն բանից, թէ ընտանիքի քանի անդամներ իրաւունք ունին նպաստ ստանալու։

Որ ժամանակից են սկսում և երբ են վերջացնում նպաստ տալը

Կանչւած զինւորի ընտանիքին նպաստը հասնում է այն օրւանից, երբ նա զօ-

նացել է ծառայութեան, իսկ եթէ նա գըտնըւում է եղել իսկական ծառայութեան մէջ զօրակոչից առաջ, այս դէպքում նպաստը հասնում է այն օրւանից, երբ վերջանում է նրա խաղաղ ժամանակի համար նշանակւած ծառայութեան ժամանակամիջոցը։ Իսկ ընտանիքին դադարեցնում են նպաստ տալ այն օրւանից, երբ կանչւած զինւորը ծառայութիւնից վերադառնայ տուն։

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ

ԶԻՆՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ռուսահպատակ բոլոր տղամարդիկ անխտիր կերպով ենթակայ են զինւորագրութեան։ Յօդ. 1-ին. Ծառայութեան մտնելը որոշւում է վիճակով։ Վիճակ հանելու կանչւում են այն երիտասարդները, որոնք մինչև վիճակահանութեան տարւայ հոկտեմբերի 1-ը արդէն լրացրել են 21 տարին։

Արտոնութիւն։ Զինւորական կանոններով սահմանւած է երեք տեսակի արտօնութիւն—ընտանեկան դրութեան համեմատ (յօդ. 48)։

Առաջին կարգի արտոնութիւն տրւում է ա) միակ որդուն, երբ հայրը մեռած է կամ աշ-

խատանքի անընդունակ է [1]), բ) միակ աշխատաւոր եղբօրը, երբ բոլոր միւս եղբայրներն ու քոյրերը որբ ու փոքրահասակ են, գ) միակ աշխատաւոր թոռին, երբ պապն ու տատը աշխատանքի ընդունակ որդի չունին, դ) ընտանիքի մի հատիկ որդուն և ե) ապօրինի ծնւած որդուն, երբ նա մօր միակ խնամողն է։

Երկրորդ կարգի արտոնութիւն տրւում է միակ աշխատաւոր որդուն, երբ նրա եղբայրները փոքրահասակ են (18 տարեկանից փոքր), իսկ հայրն աշխատանքի անընդունակ։

Երրորդ կարգի արտոնութիւն տրւում է այն զինւորացուին, որի մի եղբայրն արդէն զինւորական ծառայութեան մէջ է, կամ մեռել է այդ ծառայութեան ընթացքում։ Բայց եթէ զինւորների թիւը չլրանայ, այն ժամանակ այդ արտօնութիւնները կորցնում են իրենց ույժը. Ծառայութեան կանչւում են նախ 3-րդ կարգի արտօնութեան երիտասարդները և ապա 2-րդ կարգինը։

Վիճակ հանելուց յետոյ զինւորացուները ենթարկւում են **բժշկական քննութեան.** ընդունակ են համարւում միայն նրանք, որոնք բոլորովին ա-

---

1) Աշխատանքի անընդունակ են համարւում այն մարդիկ, որոնք հիւանդոտ են կամ արդէն լրացրել են 55 տարեկան հասակը։

առողջ են (յօդ. 45) և որոնց հասակը 2 արշ. 2½ վերշօկից պակաս չէ (յօդ. 46)։ Բայց հասակին պիտի համապատասխանէ կուրծքը, այսինքն կրծքի վանդակի շրջապատը պիտի լինի հասակի կէսը —|— ½ վերշօկ (յօդ. 46, յաւելուած VII). օրինակ եթէ հասակը 2 արշին 4 վերշօկ է, կրծքի վանդակը պիտի լինի 1 արշ. 2 վերշօկ —|— ½ վերշ. = 1 արշ. 2½ վ. և այլն. Կրծքի վանդակը չափւում է 7-րդ կողի վրայից, թիակների տակից։

Եթէ զինւորացուն մի որևէ հիւանդութեան կամ ֆիզիքական պակասութեան պատճառով բոլորովին անընդունակ է ծառայութեան, այն ժամանակ ազատւում է, իսկ եթէ նա վատառողջ է կամ կրծքի վանդակը պահանջած չափից պակաս[2]) է, այն ժամանակ նրան մի տարի ժամանակ է տրւում կազդուրւելու համար (յօդ. 47). Եթէ հետևեալ տարին նոյն պակասութիւնն ունենայ, դարձեալ մի տարի ժամանակամիջոց կտրւի, իսկ եթէ երրորդ տարին էլ նոյնը նկատւի, այն ժամանակ նա բոլորովին կազատւի

Յետաձգումներ (ОСТРОЧКИ)։ Եթէ զինւորացուն իր անունով գործ ունի կամ սովորում է, այն

[2]) Երբեմն զինւորագրական վարչութիւնը կարող է ուշադրութիւն չդարձնել կրծքի չնչին պակասի վրա, եթէ զինւորացուն բոլորովին առողջակազմ է։ Սակայն այս դէպքում պակասը ամենաշատը կէս վերշօկից աւել չպիտի լինի։

ժամանակ կարող է ժամանակ խնդրել՝ գործերը կարգի բերելու կամ ուսումը վերջացնելու համար։ Առաջին դէպքում նրան ամենաշատ ժամանակամիջոց կը տրւի 2 տարի, իսկ երկրորդ դէպքում ծառայութիւնը կը յետաձգւի (յօդ. 61)՝ ա. մինչև 22 տարեկան հասակը 2-րդ կարգի դպրոցներում սովորողներին, բ. մինչև 24 տարեկան հասակը հոգևոր սեմինարիաներում . . . և երկրագործական դպրոցներում սովորողներին, գ. մինչև 27 տարեկան հասակը բարձրագոյն դպրոցներում սովորողներին և այն անձանց, որոնք թէև ուսումը վերջացրել են, բայց պատրաստւում են ուսուցչութեան համար և դ. մինչև 28 տարեկան հասակը՝ հոգևոր ճեմարաններում սովորողներին և այն անձանց, որոնք պատրաստւում են պրոֆեսորական պաշտօնի համար։

Ծանօթ։ Քաղաքային կամ գաւառական «զինւորագրական վարչութեան» մի որևէ վճռից կամ կարգադրութիւնից դժգոհ եղողը կարող է բողոք ուղարկել «նահանգական զինւորագրական վարչութեանը»—վճիռը կայանալուց յետոյ, չորս շաբաթւայ ընթացքում (յօդ. 228). բողոքը պէտք է ուղարկել անպատճառ այն «զինւորագրական վարչութեան» միջոցով, որի դէմ ուղղւած է նա։ Հակառակ դէպքում բողոքը անհետևանք կը մնայ։ Քաղաքային կամ գաւառական «զինւորագրական վարչութիւնը» այդ բողոքը ստանալուն պէս 7 օրւայ ընթացքում պիտի

ուղարկէ ըստ պատկանելոյն իր բացատրութեան հետ միասին (յօդ. 229)։ Զինուորութեան վերաբերեալ բոլոր խնդիրներն ու բողոքներն ազատ են դրոշմատուրքից, այսինքն առանց մարկայի։

Կամաւոր զինուոր (вольноопредѣляющійся)։ Որոշ կրթութիւն ունեցող երիտասարդները կարող են կամաւոր զինուոր դառնալ։ Այդ դէպքում նրանք կը ծառայեն 1 տարի, եթէ աւարտել են բարձրագոյն կամ միջնակարգ դպրոց, (գիմնազիայի և ռէալականի 6-րդ դաս, ոչ պակաս) և 2 տարի. եթէ համապատասխան ծրագրով սահմանած քննութիւն են բռնել։

Կամաւոր զինուոր դառնալու համար պէտք է խնդիր տալ ամենաուշը վիճակահանութեան օրից 2 ամիս առաջ։

Ահա մի աղիւսակ, որ ցոյց է տալիս, թէ որքան պիտի լինի կրծքի վանդակի շրջապատը զանազան հասակների համեմատ (յօդ. 46, յաւելուած VII)։

Հասակը		**Կրծքի վանդակը**	
արշ.	վերշոկ.	արշ.	վերշոկ.
2	$2\frac{4}{8}$	1	$1\frac{3}{8}$
2	$2\frac{6}{8}$	1	$1\frac{5}{8}$
2	3	1	$1\frac{6}{8}$
2	$3\frac{2}{8}$	1	$1\frac{7}{8}$
2	$3\frac{4}{8}$	1	2
2	$3\frac{5}{8}$	1	$2\frac{1}{16}$
2	$3\frac{6}{8}$	1	$2\frac{1}{8}$
2	$3\frac{7}{8}$	1	$2\frac{1}{8}$ և $\frac{1}{16}$
2	4	1	$2\frac{2}{8}$
2	$4\frac{1}{8}$	1	$2\frac{2}{8}$ և $\frac{1}{16}$
2	$4\frac{2}{8}$	1	$2\frac{3}{8}$
2	$4\frac{3}{8}$	1	$2\frac{3}{8}$ և $\frac{1}{16}$
2	$4\frac{4}{8}$	1	$2\frac{4}{8}$
2	$4\frac{5}{8}$	1	$2\frac{4}{8}$ և $\frac{1}{16}$
2	$4\frac{6}{8}$	1	$2\frac{5}{8}$
2	$4\frac{7}{8}$	1	$2\frac{5}{8}$ և $\frac{1}{16}$
2	5	1	$2\frac{6}{8}$
2	6	1	$3\frac{2}{8}$

Պատերազմող պետութիւնների զինուորական ոյժը *)

Համաշխարհային պատերազմը սպասածից աւելի տևեց, ու վերջն էլ դեռ չի երևում, ուստի հետաքրքիր է գիտենալ, թէ որպիսի ոյժեր են տրամադրում հակամարտ պետութիւնները և թէ ինչու վրայ են հիմնըւած Համաձայնութեան պետութիւնների

---

*) Ստատիստ. տեղեկ. քաղել ենք գլխաւորապէս A. Hertlebens-ի «Statistiches Tachenbuch»-ից Ген.-Майор Шеманскій „Военная мощь противниковъ“ աշխատութիւնից և „Всеобщ. календарь-ից։

դէպի վերջնական ու կատարեալ յաղթանակն ունեցած հաւատը։

Կասկածից դուրս է, որ ներկայ պատերազմի կարեւոր գործօններից մէկն, եթէ չասենք ամենակարեւորը, տնտեսական ոյժն է, որովհետեւ բանակների ոչ միայն սպառազինումը, կատարելագործուած մեքենաների, զէնքերի ու հազար ու մի տեսակ ռազմագիտական խորամանկութիւնների գործադրութիւնը, այլ և նրանց թւական կազմը կախուած է նրանից։

Եւ իսկապէս, դեռ XIX դարի երկրորդ կիսից սկսած գերմանական պետութիւնները սրբագործեցին մի պատգամ՝ այն է, որ պետութեան պաշտպանութեան ամենալաւ միջոցն է զէնքի վարժեցնել ամբողջ ժողովրդին (զէնքի ընդուն.)։ Այդ նպատակին հասնելու համար նախ մտցրեց պարտադիր զինուորական ծառայութիւն, ապա կրճատեցին ծառայութեան ժամանակամիջոցը, աւելացրին տարեցտարի զինուորակոչների թիւը և այլն։ Պարզ է, որ միւս պետութիւնները և անկարող էին լուռ հանդիսատես լինել Գերմանիայի այդ սպառազինմանը և ստիպուած եղան նոյն միջոցները գործադրել, գուցէ աւելի լայն չա-

փերով։ Դրա հետեւանքը այն եղաւ, որ սոյն պատերազմի սկզբին, կռւող կողմերը թէպէտև չհասան միլիտարիզմի ապօլօտեղների իդէալին, այնուամենայնիւ զէնքի տակ ունէին ադամարդկանց (զէնքի ընդունակ).

Ռուսաստան	Գերմանիան 37%
Ֆրանսիան 41%	Աւստրիան 21%

Այդպիսով պատերազմի համար կազմ ու պատրաստ զօրքի թիւը կազմում էր **)

Ռուսաստան	
Ֆրանսիա 4 միլ,	
Իտալիա $3^1/_5$ միլ.	Գերմանիա $4^1/_4$ միլ.
Անգլիա $1^1/_2$ միլ.	Աւստրիա $2^1/_4$ միլ.
Եապօնիա 1 միլ.	Թիւրքիա $1^1/_4$ միլ.
Բելգիա $^1/_4$ միլ.	Բուլղարիա $^1/_3$ միլ.
Փորտուգալիա $^1/_4$ մ.	
Ռումինիա $^1/_3$ միլ.	
Ընդամ. դաշնակ. ?	Թշնամ.պետ. $8^1/_4$

Կրկնում ենք այս թւերը շատ մօտաւոր են։ Այս պատերազմի ընթացքում պետութիւններից շատերը կրկնապատկել, նոյնիսկ եռապատկել են իրենց զօրքերը

**) Թւերը շատ մօտաւոր են, ու վերաբերում են պատերազմի սկզբնական շրջանին.

թիւը. այսպէս, օրին. Անգլիան 3—4 միլ. կամաւոր ունեց:

Այսպիսի հսկայական բանակների պահելը հեշտ բան չէր: Եւ ինչպէս պետական եկամտի մեծ մասը ծախսւում էր զօրքի ու նաւատորմիղի վրայ. օրինակ 1914 թ. ամբողջ բիւջէից ծախսւում էր

Գերմանիան 50%	Ֆրանսիան 25%
Աւստրիան 10 %	Ռուսաստ. 18%

Այդ ընդհանուր ծախսից իւրաքանչիւր բնակչին ընկնում էր

Գերմանիա 6,40 ր.	Ֆրանսիա 5,40 ր.
Աւստրիա 4,00 ր.	Ռուսաստան 3,00 ր.

Միլիտարիզմի հասցրած վնասը՝ էլ աւելի պարզ կը լինի, եթէ մենք այդ ծախսը գումարների վերածենք:

Իւրաքանչիւր զինւոր պետութեան վրայ նստում է.

Ռուսաստանում 360 ր.	
Ֆրանսիայում 186 ր.	Գերման. 690 ր.
Եապոնիայում 290	Աւստրիա. 575 ր.
Անգլիայում 1500	
Ամերիկայում 2720	

և ընդամենը զօրքի ու նաւատորմի վրայ իւրաքանչիւր պետութիւն ծախսում էր (1914 թ.).

Ռուսաստ. 475 միլ. ր.	Գերմ. 415 միլ. ր.
Ֆրանսիա 270 միլ. ր.	Աւստրիա 575 մ.ր.
Անգլիա 275 միլ. ր.	

Եթէ սրա վրայ աւելացնենք զինւորների ծախսը, ծառայութեան ժամանակամիջոցում կորցրած աշխատավարձը, կստանանք այնպիսի թւեր, որ պատկերացնելն անգամ դժւար կլինի:

Մենք տեսանք, որ պետութիւնները իրենց պաշտպանութեան համար ահագին բանակներ են կազմում, նորանոր զէնքերով զինում: Ու այս պատերազմը եկաւ ապացուցելու, որ յաղթանակը կախւած է ոչ միայն զօրքի քանակից, այլ և նրա պատերազմական ոգուց, սպառազինումից և միատարրութիւնից:

Ներկայումս բանակների գլխաւոր հիմքը հետևեալն է, որ կազմում է ընդհանուր զօրքի

Ռուսաստ	Գերմ. 72%
Ֆրանս. 72%	Աւստր. 70%

Հեծելազօրը, որ կարևոր դեր է խաղում յառաջապահ, յետնապահ կռիւների ու յանկարծական յարձակումների ժամանակ կազմում է ռուսական բանակի 10%, Ֆր-

րանսիականի 5%, գերմանականի 5% և աւստրիական բանակի 8%-ը։

Վերջապէս թնդանօթաձիգ զօրքը, որը այս պատերազմին վճռական դեր է խաղում, կազմում էր ամբողջ բանակի

Ռուսաստ.	Գերմ. 18%
Ֆրանս. 18%	Աւստր. 9%

Թուեցիկ կերպով ծանօթանալով պատերազմող պետութիւնների զօրքերի քանակի և կազմի հետ, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ թշնամի պետութիւնների գործը անդառնալիօրէն կորած պիտի համարել, որովհետև դաշնակիցները իրենց ձեռքում ունենալով համաշխարհային առևտուրը, կրկնակի գերազանցելով թշնամի բանակներին, երկաթէ օղակը սեղմելով աւելի ու աւելի. ի վերջոյ կը ջախջախեն գերմանական միլիտարիզմը։ Եթէ Գերմանիան յամառէ և զէնքի տակ կանչէ իր բնակչութեան բոլոր տղամարդկանց (16—60 տ.), այնուամենայնիւ նրա զօրքի թիւը հազիւ 15 միլ. հասնի, մինչդեռ մեր լայնածաւալ Ռուսաստանը միայն կարող է այդ միջոցը գործադրելով 35 միլ. աւելի բանակ դուրս բերել։ Համաձայնութեան պետութիւնների յաղթանակը միևնոյն ժա-

մանակ և իրաւունքի ու արդարութեան յաղթանակն է, որովհետև նրանք իրենց նշանաբանն են ընտրել ոտնահարուած իրաւունքի վերականգնումը և մանր ազգերի ազատագրելը։

Բ. Թոփչեան

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱՒԱՏՈՐՄԻՂԸ 1914 Թ. ՅՈՒԼԻՍ 20-Ն

1. Անգլիա	647	299,000
2. Ֆրանսիա	247	183,000
3. Ռուսիա	—	—
4. Իտալիա	180	36,500
5. Գերմանիա	344	175,000
6. Աւստրիա	82	18,300
7. Թիւրքիա	59	6,000
8. Եապոնիա	143	63,500
Ընդամենը	1702	781,300

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Պատերազմի դրդապատճառները

«Պատերազմը երբէք առաջ չի գալիս լրագրական յօդուածներով... ազգաբնակութեան մեծամասնութիւնը սովորաբար բնաւ պատերազմ չի ցանկանում. պատերազմները փոքրամասնութեան գործն է կամ բացար-

ձակ իշխանութեան—կառավարիչների և մինիստրութիւնների»—ասում է Բիսմարկը։ Եւ իսկապէս, «Խաղաղութեան բարեկամների ընկերութիւնը» կազմել է Եւրոպայի պատերազմների ընդհանուր թւի մի տեղեկագիր՝ Կոնստանդին թագաւորի ժամանակից սկսած մինչև 1849 թ.։ Այդ հաշւից երևում է *), որ 286 պատերազմներից 226-ը ոչ մի կապ չունէին ժողովրդի շահերի հետ, որովհետև այդ պատերազմներից 44-ը՝ հողեր տիրապետելու համար է սկսւած, 22-ը՝ պատերազմ. տուգանք ստանալու, 24-ը՝ վրէժ լուծելու, 8-ը՝ տիտղոսների պատճառով ծագած վէճերից, 41-ը՝ գահաժառանգութեան, 38-ը՝ դիպլոմատիական մրցակցութեան, 30-ը՝ դաշնակցին օգնելու, 60-ը՝ առևտրական շահերի համար և այլն։

Աշխատանքով ապրող մարդու համար ամենայն պատերազմ, բացիթշնամու յարձակումից պաշտպանելու դէպքից, բայքայիչ է, որովհետև նրա ամբողջ ծանրութիւնը ընկնում է հարստութիւնից զուրկ մեծամասնութեան վրայ։ Թէ որքան ծանր է այդ բեռը, ցոյց են տալիս հետևեալ

*) Տես Դ. Դոբրոխոտով «Պատերազմները»։

թւերը. XVIII և XIX դ. անգլօֆրանսիական պատերազմին միայն Անգլիան ծախսել է $6^1/_2$ միլլիարդ րուբլի։ Ղրիմի պատերազմը Եւրոպային 6 միլլիարդ ֆրանկ նստեց։ 1870 թ. պատերազմը Ֆրանսիային 15 միլլիարդ ֆր., 1878 թ. պատերազմը Ռուսաստանին նստեց 1 միլլիարդ րուբլի։ Միայն Նապօլէոնի կռիւների ժամանակ ազգերի կորուստը հաւասար է ամբողջ Եւրոպայի հողերի արժէքին։

Ո՞րն է գերադասելի

Շատերը գուցէ ասեն թէ, պատերազմները դաստիարակում, զարգացնում են մարդկային հոգու շատ լաւ յատկութիւններ՝ օր. քաջութիւն, անձնազոհութիւն, վեհանձնութիւն և այլն։ Այդպիսիներին կը յիշեցնենք, որ սով, ժանտախտ, խօլէրա—հետևանք են նոյն պատերազմների։ Ուրեմն դրանցից ո՞րն է գերադասելի՝ անհատների բարոյական դաստիարակութիւնը, թէ ժողովրդական դժբաղդութիւնները։

Պատերազմը հարցեր լուծել չի կարող

Երկար ու բարակ վէճերից յետոյ պատերազմասէրները սովորաբար «ցաւ ի սիրտ»

յայտնում են, որ պատերազմը միջազգային հարցերի լուծման միակ միջոցն է։ Թող խօսեն թւերը **). 1496 թ. Ք. ծ. ա. մինչև 1861 թ. Ք. յետոյ, այսինքն 3,357 տարուց, 227 խաղաղ է եղել, իսկ 3130 պատերազմներով։ Այսինքն 13 տարի կռւում են, որ մի տարի խաղաղ ապրեն։ Արժէ՞ արդեօք։ Վերոյիշեալ ժամանակամիջոցում կապւած է 8000 խաղաղութեան միջազգային դաշինք, բայց ապարդիւն։ Եթէ 8000 անգամ պատերազմը միջազգային հարցեր չի լուծել, արդեօք 8001-րդ անգամը կը լուծէ։

Բ. Թ.

**) Վալբեր «Պատերազմ և խաղ.»։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲԺՇԿԱՐԱՆ

Այս կամ այն հիւանդութեան առաջն առնելու ամենալաւ միջոցն է՝ դիմել բժշկի խորհրդին, խնդրել նրա օգնութիւնը, որովհետև միայն նա կարող է ճշտութեամբ որոշել հիւանդութիւնը և գտնել նրա դարմանը։ Իսկ եթէ մի որ և է պատճառով դա անհնարին է, այն ժամանակ մի քանի դէպքերում կարելի է օգտւել հետևեալ խորհուրդներից։

1. **Այրւածք**։ Եթէ այրւած տեղը միայն կարմրել է. անմիջապէս զովացնել սառուցով կամ սառը ջրով և յետոյ վրան դնել քերած գետնախնձոր։ Եթէ վէրքեր են գոյացել, քսել ձէթ, իւղ, կրի ջուր. ձէթի հետ հաւասար չափով խառնած և յետոյ բամբակով փաթաթել։ Երբ այրւածքը ձեռքի կամ ոտի վրայ է լինում, լաւ է վիրաւորւած անդամը բարձր պահել, որ արիւնը այրւած տեղից հեռանայ։

2. **Աղիքի** հիւանդութիւնները մեծ մասամբ լուծողութեամբ են արտայայտւում, Նեարդերը թուլանում են, հիւանդը գունատւում ու լղարւում է, անդադար ծարաւ է զգում, ախորժակը կորցնում է ևայլն։

Պատճառները բազմաթիւ են, որոնցից անկանոն սնունդը և մրսելն ամենից յաճախ են պատահում։

Խնամք: Բացի դեղերից, որոնք կարելի է միայն բժշկի միջոցով ձեռք բերել, մնացած բժշկականությունը նույնն է, ինչ որ ստամոքսի հիվանդությունների ժամանակ: Լավ է փորը տաք պահել և առհասարակ զգուշանալ ցրտից:

3. **Աչքացավ:** Նորածին երեխաները ծնվելուց 1—2 օր հետո հաճախ աչքացավ են ստանում, վարակվելով մորից, դայակից կամ մեկ ուրիշից: Դրանց աչքերը կարմրում են, կոպերն ուռչում և թարախով լցվում: Այդ հիվանդությունը վարակիչ է մեծերին էլ կարող է վարակել եթե նրանք կեղտոտ ձեռքերով իրանց աչքերը տրորեն: Հիվանդության վտանգն այնքան մեծ է, որ վարակվածներից շատերը կուրանում են, եթե կանոնավոր կերպով չեն բժշկվում:

Խնամք: Մինչև բժշկի գալը հարկավոր է աչքերն աղի ջրով կամ ջրախառն բորայի թթուտով— борная кислота—(1 թեյի գդալ՝ ջրի մեջ բաժակին) լվանալ և այնպես ջուրն ածել, որ աչքի մեջը մտնի և բոլոր թարախը միջից հանէ: Լվանալ հարկավոր է շատ հաճախ ժամը 1 անգամ: Եթէ աչքերից միայն մեկն է ցավում, աշխատել, որ լվանալիս ջուրը միւս աչքի մեջ չմտնի, եթէ ոչ առողջ աչքն էլ կը հիվանդանայ: Ուստի լվանալիս պէտք է գլուխը կախել այնպէս, որ հիւանդ աչքը ներքև լինի, իսկ առողջը—վերև:

4: **Արիւնահոսութիւն:** Փոքր վէրքերից հոսող

արիւնը դադարեցնելու համար հարկաւոր է նախ և առաջ վէրքը մաքուր ջրով լվանալ և յետոյ բամբակով կամ մաքուր շորի կտորով պինդ սեղմել և պահել այդպէս մի քանի րոպէ, մինչև որ արիւնը դադարի: Երբ արիւնահոսութիւնը բոլորովին կանգնում է, վէրքը կապով փաթաթել:

Մեծ վէրքերից հոսող արիւնը միայն բժիշկը կարող է կանգնեցնել, սակայն մինչև նրա գալը անհրաժեշտ է գոնէ թուլացնել արեան կորուստը, հում տալով վէրքի վրայ բամբակի կտորներով. եթէ արիւնը չափազանց առատ է հոսում և բարձր ցայտում, անհրաժեշտ է վիրաւորուած անդամը կապերով պինդ սեղմել, բայց անպատճառ վէրքից բարձր:

5. **Բկցաւ:** Հիւանդը կուլ տալիս ցաւ է զգում, ձայնը թանձրանում է, երբեմն ջերմ է լինում, իսկ ականջի առջևի խուլերը ուռչում են: Բերանը հետազօտելիս երևում են կարմրացած և ուռած քիմքը, նշիկները, կատիկը և ըմպանը. տեղ-տեղ երևում են սպիտակ-սպիտակ թաղանթներ, լեզուն ուռչում է և սպիտակ փառով ծածկւում: Հասարակ բկացաւը երբեմն կարելի է շփոթել դիֆտերիտի հետ, ուստի խոհեմութիւնը պահանջում է դիմել բժշկի խորհրդին, որպէս զի յետոյ ցաւալի թիւրիմացութիւն չը պատահի:

Հիւանդութեան պատճառը գլխաւորապէս մրսելն է, բայց ուրիշ հիւանդութիւններն էլ են բկացաւ պատճառում, օր. քութէշը, ծաղիկը և այլն:

Խնամք: Անկողին պառկել. վէրքը կապով փաթաթել, կոկորդը ողողել ջրով, բորակի կամ բերտոլետի թթուտով (1 թէյի գդալ մեծ բաժակ ջրի համար). Ջերմի դէմ քինա ընդունել (1—2 անգամ օրական), փորկապութեան դէմ լուծողականներ: Երբեմն լաւ է ներգործում քրտնելը:

6. **Դիֆտերիա—վարակիչ բկացաւ**: Հիւանդը կուլ տալու ժամանակ ցաւ է զգում: Գլուխը ցաւում է և ջերմ է լինում, բուկը ուռչում և կարմրում է և սպիտակաւուն փառով ծածկւում. այդ փառը երբեմն պոկ է գալիս և նրա տակը վէրքեր են բացւում: Հիւանդութիւնը տարածւում է նոյնպէս քթի, ականջների և կոկորդի մէջ: Շնչառութիւնը սկսում է դժուարանալ, և հիւանդը կարող է մինչև անգամ բոլորովին խեղդւել օդի պակասութիւնից: Դիֆտերիտը վտանգաւոր է նոյնպէս սրտի համար. սրտի թուլութիւն է առաջացնում, որից հիւանդը կարող է յանկարծամահ լինել:

Խնամք: Բժշկւելու գլխաւոր միջոցն է՝ հակադիֆտերիտական սրսկումը: Սրսկումը միայն բժշկի ձեռքով կարելի է անել և որքան շուտ, այնքան լաւ, որովհետև նրա ազդեցութիւնը թուլանում է, եթէ հիւանդութեան սկզբից չէ արւած: Անհրաժեշտ է նոյնպէս քթի և բերանի մաքրութեան վրա հսկել (տես քութէշ):

Սնունդը պիտի լինի թեթև՝ ջրալի կերակուր-

ներ. բուլիօն. սրտի թուլութեան դէմ—գդալով գինի:

Առողջները պիտի հեռու մնան հիւանդից, որ չվարակւեն: Երբ հիւանդութիւնը վերջանայ, հիւանդի շորերը և սենեակը պէտք է լաւ մաքրել (տես «Ծաղիկ»):

7. **Թունաւորումներ**: Թոյները լինում են զանազան տեսակի, քիմիական կամ բուսական: Կան թոյներ որոնք այրում են այն օրգանները, որոնց միջով անցնում են (բերանը, ստամոքսը և այլն) և դրանով մարդուն մահացնում: Միւս թոյները միայն օրգանիզմի մէջ մտնելով են ներգործում, ազդելով սրտի, ուղեղի և այլ օրգանների վրա:

Խնամք: Զանազան թոյների դէմ միջոցներն էլ տարբեր են, այնպէս որ բոլորի համար անկարելի է խորհուրդ տալ. սակայն իբրև ընդհանուր կանոն հարկաւոր է իմանալ, որ պէտք է աշխատել որքան կարելի է շուտ կամ դուրս հանել, կամ թուլացնել ընդունւած թոյնը:

Թունաւորւածին նախ և առաջ խմացնել տաք (եթէ չկայ սառը) ջուր և ապա հաւի փետուրով կոկորդը խտտեցնել, որպէսզի փսխանք առաջանայ: Եթէ հիւանդը արդէն ուշագնաց է եղել, ամբողջ մարմինը ձեռքերով շփել և երեսին սառը ջուր սրսկել: Այրւած օրգանների ցաւը մեղմացնելու համար ընդունել տալ սառը խմիչքներ, սառուցի մանր կտորներ, ձուի սպիտակուց ջրի մէջ հարած (6—10

ձու մի շիշ ջրի համար)։ Ինչպէս վերևում ասացինք, թոյնի տեսակից է կախուած բժշկութեան միջոցը։ Այսպէս օրինակ.

—Մկան դեղով թունաւորուածին պէտք է տալ կաթ և ջրի մէջ հարած ձուի սպիտակուց։

—Ֆօսֆօրով (լուցկիներից) թունաւորուածին արգելուած է կաթ և իւղալի խմիչքները։ Խմացնել սկիպիդար (10—12 կաթիլ) ջրի մէջ խառնած։

Օպիումով (խաշխաշ) թունաւորուածին սև սուրճ (ղաֆէ) խմացնել։

—Թունաւոր սնկերով թունաւորուածը պէտք է զգուշանայ քացախից։

—Կարբոլայով թունաւորուածին խմացնել մանրացրած կաւիճ ջրի հետ խառնած, կաթ, ձուի սպիտակուց ջրախառն։

8. **Թոկով** (չւանով) խեղդուածին ազատել կապից, որքան կարելի է շուտ, զգեստներն արձակել և շնչառութիւնը գրգռել, ինչպէս ասած է ներքևում։

9. **Խեղդուած**։ Ջրի մէջ խեղդուած մարդուն ջրից հանելուց յետոյ, զգեստները հանել, որպէսզի նրան ոչինչ չը ճնշէ. բերանը տիղմից և բորից մաքրել (մատով) և բաց պահել. ապա սկսել շնչառութիւնը գրգռել, դրա համար նախ և առաջ դնում են մէջքի տակ մի բարձ. շորի փաթեթ կամ փայտի կտոր, որպէսզի կուրծքը փքուի և գլուխը յետ ընկնի,

ապա վերցնում են խեղդուածի ձեռքերը, մէկը գլխի յետեւն են քաշում (որ կուրծքը լայնանայ և օդը մէջը մտնի), մէկը փորի վրա են ճնշում (որ օդը դուրս գնայ կրծքից), այդպէս շարունակում են առանց շտապելու, նոյն արագութեամբ, ինչպէս որ մարդը սովորաբար շնչում է և մինչև այն ժամանակ, երբ խեղդուածը կը սկսէ կանոնաւոր կերպով և ինքնաբերաբար շնչել։ Դրա համար հարկաւոր է լինում երբեմն շատ երկար աշխատել, մի ժամ և աւել, սակայն երբէք չպէտք է յուսահատուել. եթէ խեղդուածը կեանքի մի որ և է նշոյլ է ցոյց տալիս, այն ժամանակ կարելի է նրան ուշքի բերել։ Երբ խեղդուածն ուշքի եկաւ, հարկաւոր է նրան փսխեցնել կուլ տուած ջուրը և յետոյ գինի կամ թէյ, օղի խմացնել և տաք անկողնում պառկեցնել։

10. **Ծաղիկը** վարակիչ հիւանդութիւն է. նա երկու ձև ունի—ծանր և թեթև. սկսւում է սաստիկ ջերմով, փսխանքով, մէջքի և գլխի ցաւով. 2-րդ, 3-րդ օրից երեսը և ամբողջ մարմինը ծածկւում է բշտիկներով (պալարներով), 7-րդ, 8-րդ օրը բշտիկները լցւում են թարախով կամ արիւնով (ամենավտանգաւոր ձևը), 10—13-րդ օրը բշտիկները սկսում են չորանալ, իսկ 5—6 շաբաթը նրանք թափւում են, չեչեր թողնելով իրանց տեղը (վարակելու ամենավտանգաւոր ժամանակը)։

Խնամք։ Ծաղկի դէմ ամենալաւ միջոցը պատ-

ւաստումն է. ծաղկից ազատ մնալու համար հարկաւոր է կրկնել պատուաստումը ամէն 7—8 տարին մի անգամ։ Պատուաստած երեխաները կամ ամենևին չեն հիւանդանում, կամ հիւանդանում են շատ թեթև կերպով, ուստի հէնց որ մի ծաղիկ է յայտնւում, անմիջապէս հարկաւոր է առողջներին հիւանդից բաժանել և բոլորի ծաղիկը պատուաստել. հիւանդին պառկեցնել և գլխացաւի դէմ սառուց դնել ճակատին. փըրխանքի առաջն առնելու համար հիւանդը պէտք է սառուցի մանր կտորներ կուլ տայ։ Ջերմի ժամանակ չպէտք քորել և պոկել. մարմինը և երեսը լաւ է ձէթով կամ իւղով (վազելինով) ծածկել։

Երբ մարմինը սկսում է թէփոտուել. հիւանդին պէտք է տաք վաննա նստեցնել և կրկնել այդ մի քանի անգամ։ Երբ թեփոտուելը բոլորովին վերջացած է, այն ժամանակ միայն կարելի է հիւանդին տանից դուրս բերել և առողջների մօտ տանել։ Հիւանդի բոլոր շորերն անհրաժեշտ է տաք ջրի և սապոնի մէջ լաւ եփ տալ, որպէս զի հիւանդութիւնն ուրիշներին չըփոխուի. սենեակն էլ պէտք է լաւ մաքրել և երկար ժամանակ պատուհանները բաց պահել։

11. Կարմրուկը վարակիչ հիւանդութիւն է և գրեթէ անխուսափելի է երեխայական հասակում։ Հիւանդութեան նշաններն են՝ հազ, հարբուխ, բկացաւ, աչքացաւ, ջերմ 3-րդ կամ 4-րդ օրը կաշին դուրս է տալիս բծեր և մի քանի օր այդպէս մնում։ Վերջը

բծերը անհետանում են, իսկ կաշին սկսում է թեփոտուել։

Խնամք: Հիւանդին հէնց սկզբից անկողնում պառկեցնել և մրսելուց պահպանել, լուսամուտի փեղկերը կիսափակ պահել, որովհետև լոյսը ցաւեցնում է աչքերը. հազի դէմ տաք կաթ խմացնել գելտերի ջրի հետ խառնած։ Կերակուրը պիտի լինի թեթև՝ թերխաշ ձու, կաթ, սպիտակ հաց, շորվայ. ծարաւը յագեցնելու համար — լիմոնով և շաքարով ջուր կամ լեմոնադ եայլն։

Եթէ հիւանդը շուտ չի առողջանում — դիմել բժշկի օգնութեանը։

12. Կոկորդի բորբոքումն: Հիւանդը հազում է, ձայնը խռպոտ է դառնում կամ բոլորովին կորչում. կոկորդի մէջ խաղտում է. ընդհանուր առողջութիւնը քիչ է տուժում։

Հիւանդութիւնն առաջ է գալիս երկար խօսելուց կամ երգելուց, մանաւանդ բացօդեայ կամ ծխով և փոշիով լի սենեակում. յաճախ միաժամանակ լինում է և հարբուխ ու բկացաւ։

Խնամք: Նստել տանը, երեխաներին անկողնում պահել, քիչ խօսել, չծխել, տաք խմիչքներ ընդունել [կաթ՝ գելտերի ջրով], վիզը փաթաթել կապով, շնչել աղաջրի գոլորշի։

Երբեմն պատահում է, մանաւանդ գիշեր ժամանակ, որ երեխաները յանկարծակի հիւանդանում են կոկորդի սուր բորբոքումով. սկսւում է խիստ հազ,

շնչառութիւնը ճնշուած է դառնում, երեխան օդի պակասութիւն է զգում, կարծես խեղդւում է։

Այսպիսի յանկարծակի դէպքերում [որոնք միշտ լաւ են վերջանում], հարկաւոր է երեխային տաք գոլորշի շնչել տալ ինքնաեռից, ոտները տաք ջրի մէջ պահել կամ մանանեխի սպեղանի դնել սրունքների վրա։ Հիւանդութիւնը տեւում է մօտ կէս ժամ, երեխան հանգստանում, քնում է և միւս առաւօտ բոլորովին առողջ ու զուարթ վեր կենում։

13. Կապոյտ հազ (Կոկլիւշ) մանկական հասակի վարակիչ հիւանդութիւն է, որ տեւում է սովորաբար 4—5 շաբաթ և մի անգամ լինելուց յետոյ այլեւս չի կրկնւում։ Հիւանդութեան սկզբում ջերմ է լինում, որ 38^{0}—38_{50} վեր չի բարձրանում։ Հիւանդը սաստիկ հազում է և իւրաքանչիւր հազալիս թքում է կպչուն խուխ։ Հազի ժամանակ սուլիչ և վայնասունի նման ձայներ են լսւում։ Այսպիսի բռնկումներ կրկնւում են օրը մօտ 15—30 անգամ. իւրաքանչիւր անգամից յետոյ մի առժամանակ դադար է լինում։ Այդ դադարը ամենանպաստաւոր միջոցն է երեխային կերակրելու համար։

Խնամք: Յատուկ բժշկութիւն չկայ, առողջներին հարկաւոր է հեռացնել հիւանդներից. Ջերմը վերջանալուց յետոյ շատ օգտակար է երեխաներին դուրսը պահել՝ մաքուր օդ շնչելու։ Լաւ է ներգործում քինան, որ հարկաւոր է օրը 2—4 անգամ փոքրիկ

քանակութեամբ խմացնել։ Երեխայի բերանն ամեն անգամ հազից յետոյ պէտք է մաքրել լորձունքից։

14. Հարբուխ է անւանւում քթախորշի լորձամաշկի բորբոքումը, որ առաջ է գալիս թէ մրսելուց, քիթը ծխախոտ քաշելուց, վնասակար գազերից, զանազան հիւանդութիւններից, ինչպէս՝ կարմրուկը, ինֆլուէնցիան, սիֆիլիսը և այլն։ Հարբուխի նշանները ամենքին յայտնի են։

Խնամք: Հարբուխի դէմ տնային միջոցներով կռուելու համար կարելի է միայն խորհուրդ տալ՝ եթէ հիւանդը մրսած է, տաք գոլորշի շնչել, քինա ընդունել և տաք հագնուել, իսկ այն ջրերից և դեղերից, որ շատերը հարբուխի ժամանակ քթով ներս են քաշում բժշկելու համար, մենք խստիւ նախազգուշացնում ենք, որովհետև բազմաթիւ են դէպքերը, երբ քթով ջուր քաշելուց բորբոքւել է ականջի մէջը և լսողութեան համար շատ վտանգաւոր հիւանդութիւն է առաջ եկել։ Ուստի յարմար դէպքերում, երբ երկար ժամանակ չի անցնում. անհրաժեշտ է բժշկին դիմել, որը և կը սովորցնէ, թէ ինչ անել հիւանդութեան դէմ։

Ուրիշ պատճառներից առաջ եկած հարբուխը անցնում է, երբ սկզբնապատճառը հեռացւում է և հիւանդը փոխում է իր կենցաղը։

15. Նւաղած մարդուն անմիջապէս պառկեցնել, զգեստը, գօտին, օձիքը և այլն արձակել, երե-

սին սառը ջուր սրսկել, երեսն ու մարմինը ձեռքերով շփել։ Ուշքի գալուց յետոյ չը պիտի յանկարծ վեր կենալ, այլ մի փոքր պառկած մնալ. լաւ է մի քիչ գինի, օղի, թէյ կամ սուրճ խմել։

16. **Սառած մարդուն** չը բերել տաք սենեակ, այլ հով տեղում, նախասենեակում դնել (ճանապարհին աշխատել մարմինը չծալել, այլ ձիգ պահել)։ Շորերը հանելուց յետոյ, սառը ջրի մէջ դնել կամ ձիւնով տրորել. երբ մարմինը կտաքանայ և անդամները կփափկեն, այն ժամանակ հարկաւոր է նրան մի տաք տեղ պառկեցնել և գինի, օղի կամ տաք թէյ խմացնել։

Սառած մասը կամ ոտը նոյնպէս պէտք է նախ և առաջ սառը ջրի մէջ պահել կամ ձիւնով տրորել և ապա կամաց կամաց տաքացնել. բորբոքուած մասերին քսել ձէթ կամ սագի ճարպ.

17. **Ստամոքսի կատարր** (բորբոքումը) շատ տարածուած ցաւ է. Նրա պատճառը գլխաւորապէս անկանոն կենցաղն է։ Հիւանդութիւնն արտայայտւում է նրանով. որ ստամոքսում ծանրութիւն և ցաւ է զգացւում։ Փորը ուռչում է, հիւանդը կորցնում է ախորժակը և զզւանք է զգում դէպի կերակուրները. յաճախ կապ է լինում։

Խնամք։ Բժշկել կարելի է կանոնաւոր կենցաղով։ Ուտելու ժամանակ պիտի ղեկավարուել որոշ կանոններով։ Վնասակար է շատ ուտելը. լաւ է օրա-

կան 2 անգամ թեթև և 2 անգամ կուշտ ուտել. ուտելիս կերակուրը լաւ ծամել։

Վնասակար են խղալի, թթու, կծու, աղի կերակուրները, մեծ քանակութեամբ կարտոֆիլն ու խմորեղէնը, ալկոհոլը, շատ տաք ու շատ սառը կերակուրները։ Օգտակար են՝ կաթնեղէնը, ձուն թերխաշ, բուլիոնը հաւից և հորթի մսից, հորթի, ճտի և որսի միսը և այլն։ Խմելու համար՝ ջուր, թէյ ոչ շատ, հացը լաւ է սպիտակ տեսակից և կրակի վրա չորացրած։

Հանքային ջրերն էլ շատ օգտակար են կատարրի համար, բայց նրանց գործածութիւնը պէտք է բժշկի հսկողութեամբ կատարուի, ուրեմն հարկաւոր է դիմել բժշկի։

18. **Փորկապութիւնը** մի հիւանդոտ դրութիւն է, ուստի անհրաժեշտ է կռուել, բայց ոչ լուծողականների միջոցով որովհետև ստամոքսը սովորում է այդ դեղին և շուտով լուծողականն էլ կորցնում է իր ազդեցութիւնը։

Խնամք։ Փորկապութեան դէմ ամենալաւ միջոցը կանոնաւոր կենցաղն է։ Առաւօտ վեր կենալիս՝ խմել մի բաժակ սառը ջուր և յետոյ դուրս գալ մի փոքր զբօսնելու. օրւայ մէջ լաւ է ֆիզիքական աշխատանքով կամ մարմնամարզութեամբ պարապել. ուտել մրգեղէն, մեղր, կանաչեղէն և առհասարակ ամէն տեսակ կոպիտ կերակուր և սև հաց։ Մարմինը

տաք ջրով շփել, փորին մասսաժ անել և որոշ ժամին ամենայն օր աշխատել դուրս գալ հարկաւորութեան համար. եթէ մինչև անգամ պահանջ չզգացւի։ Լուծողականներից խուսափել և գործածել միայն անհրաժեշտ դէպքերում։

19. **Փչացած օդից** օր. վառարանը ժամանակից շուտ ծածկելուց) ուշաթափուածին մաքուր օդի մէջ դուրս բերել, մարմինը տրորել ձեռքերով և շնչառութիւնը գրգռել (տես «Խեղդուած»)։

20. **Քոսախտը** (քոսը) առաջ է գալիս աչքով դժւար նշմարելի մի մակաբոյծից—քոսատիզից, որը կաշու մէջ բնակւելով և այնտեղ շարժւելով, անտանելի քոր է պատճառում։ Կեղտը և հակառողջապահիկ կեանքը նպաստում են հիւանդութեան տարածւելուն։ Վարակիչ լինելով՝ քոսախտը երբեմն ընկնում է ընտանիքի բոլոր անդամների վրա։ Հիւանդութիւնը տարածւում է անմիջական շփումից կամ շորերի և անկողնի միջոցով։ Հիւանդութիւնից ազատւելու համար պէտք է, որ բոլոր հիւանդները միաժամանակ սկսեն բժշկութիւնը, եթէ ոչ հիւանդ մնացածները նորից կը վարակեն բժշկւածներին։

Խնամք։ Վերցնել մէկ մաս ծծումբ, վեց մաս ճարպ (խոզի կամ ոչխարի), լաւ խառնել, տրորել և քսել այդ օծանելիքը կաշու հիւանդ մասերին 2—3 երեկոյ իրար վրայ, յետոյ լուանալ ամբողջ մարմինը սապոնով ու տաք ջրով, որով և վերջանում է բժշկութիւնը։

Անհրաժեշտ է նոյնպէս լուանալ և մաքրել բոլոր հագնելիքը և անկողինները, որպէս զի մէջը քոսատիզեր չմնան և հիւանդութիւնը նորից չըսկսւի։

21. **Քութէշը** վարակիչ հիւանդութիւն է. սկսւում է ջերմով, կաշին դուրս է տալիս մանր բծեր, որոնք տարածւում են ամբողջ մարմնի վրա, ազատ թողնելով միայն չանը, քիթը և շրթունքները. բուկը ցաւում է, միջի նշիկները ուռչում են։ Մի քանի օրից յետոյ ջերմը թուլանում է, իսկ դուրս տուածը անհետանում. 10—12-րդ օրը կաշին սկսում է լայն շերտերով թեփոտւել. 2—3 շաբաթից յետոյ թեփոտւելը վերջանում է և հիւանդը կարող է քութէշից առողջացած համարւել. սակայն վտանգը դեռ անցած չէ, որովհետև քութէշը՝ երբև հետևանք, զանազան հիւանդութիւններ է առաջացնում, շատ յաճախ երիկամունքների բորբոքում։ Այդ պատճառով առողջանալուց յետոյ էլ, 2—3 շաբաթ շարունակ, հիւանդը պէտք է իրան զգոյշ պահէ, չմրսի, որովհետև երիկամունքների բորբոքումը հէնց այդ ժամանակ է յայտնւում։

Խնամք։ Բժշկութեան համար գլխաւորն է մաքրութիւնը և պատշաճ սնունդը։ Բերանը անհրաժեշտ է օրական մի քանի անգամ ողողել կամ աղաջրով, կամ ջրախառն բորայի թթւուտով (борная кислота) 1 թէյի գդալ՝ ջրի մեծ բաժակի համար։ Մաքուր պէտք է պահել նոյնպէս քիթը և ականջները։

Մարմնին քսել տաք ձէթ։ Մնունդի համար վերցնել կաթնեղէնը. որ ամենից ապահովն է երիկամունքի համար։ Միս կամ բուլիօն ամենևին չտալ, խմելու համար գործածել հասարակ ջուր կամ լիմօնադ։ Ճտի միսը կարելի է տալ միայն հիւանդութեան չորրորդ շաբաթից. երբ կաշին սկսում է թեփոտուել, հարկաւոր է հիւանդին 4—2 օրը մի անգամ տաք վաննա նստեցնել (15—20 րոպէ) և ամէն ջանք գործ դնել, որ տաք ջրից յետոյ հիւանդը չը մրսի։ Եթէ քութեշն առանց բարդութիւնների է, հիւանդը կարող է երեք շաբաթից յետոյ ոտքի կանգնել, իսկ տանից դուրս գալ կարող է միայն թէփը վերջացնելուց յետոյ։ Քութէշի ժամանակ առողջ երեխաներին պէտք է, որքան կարելի է, շուտ հեռացնել, իսկ երբ հիւանդը լաւացել է, նրա շորերը այրել կամ եփ տալ սապնաջրի մէջ. սենեակը լաւ մաքրել։

22. Օձի խայթոց։ Կծած անդամը վէրքից բարձր պինդ կապել, վէրքը ծծել, որ թոյնը դուրս գայ և կարմրած երկաթով այրել, հիւանդին քրտնեցնել և օղի կամ գինի խմացնել։

Բժ. Լ. Քալանթարեան

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Լաւ կարելի է մարսել միայն լաւ ծամուած կերակուրը. իսկ լաւ կարելի է ծամել միայն առողջ ատամներով։ Փտած ու ցաւող ատամներ ունեցողները ստիպուած են կուլ տալ չծամուած պատառներ, որոնք շատ անգամ մնալով ստամոքսի կամ աղիքների որևէ մասում փտում են, գրգռում նրանց և ժամանակի ընթացքում առաջ բերում ստամոքսի, կամ աղիքների բորբոքում։ Բացի դրանից կերակուրը շաղախուելով փտած ատամների խոռոչներում գոյացող վնասակար հիւթերի հետ, վարակում են մարսողութեան գործարանները։ Ահա այդ պատճառով ամէն մարդ պէտք է լաւ խնամք տանի իր ատամների վրայ, օգտուելով ի միջի այլոց հետևեալ խորհուրդներով.

1) Ատամների փչանալու գլխաւոր պատճառներից մէկը թթւուտն է, որը մտնում է բերանը կամ թթւուտ պարունակող նիւթերի հետ (օր. թթու քացախ, խակ մրգեր, խաղող, ելակ) կամ զանազան խմորեղէնների ու քաղցրեղէնների հետ, որոնց մնացորդները թուքի ազդեցութեան տակ առաջացնում են թթւուտ, իսկ վերջինը հալում է ատամի ամենակարծր ար-

տաքին մասը—էմալը։ Անհրաժեշտ է չափաւորել վերոյիշեալ նիւթերի գործածելը, իսկ գործածելու դէպքում ուտելուց յետոյ լաւ լուանալ բերանը։

2) Յանկարծակի կերպով տաքից դէպի ցուրտը և ցրտից դէպի տաքը անցնելը, յաճախ առաջ է բերում, ատամի, նեարդերի ու բերանի լորձաթաղանթի բորբոքումն։ Բացի դրանից այդ յանկարծակի փոփոխութիւնը առաջացնում է ճեղքուածքներ թոյլ ատամների էմալում, իսկ ճեղքուածքների միջով արդէն հեշտութեամբ են մտնում թթուուտն ու միկրոբները, որոնք քայքայում են ատամները։ Շատերի ատամները փչանում են չափազանց տաք թէյ գործածելուց։

3) Ատամների առողջութեան ու գեղեցկութեան համար անհրաժեշտ է օրական երկու անգամ՝ գիշերը քնելուց առաջ և առաւօտեան վեր կենալիս սրբել ատամները խոզանակով ու ջրով. իսկ ճաշից յետոյ լաւ լուանալ ու ատամնափորիչով հեռացնել ատամների արանքներից կերակրների մնացորդը։ Քնելուց առաջ մաքրելը մեծ նշանակութիւն ունի, որովհետև բերանի անշարժ լինելու պատճառաւ կերակուրի մնա-

ցորդը աւելի հեշտ է փտում ու թթւում գիշերւայ ընթացքում։ Հարկաւոր չէ ամենայն օր ատամի փոշի գործածել. շաբաթական 2—3 անգամ նրանով սրբելը միանգամայն բաւական է։

4) Ատամի խոզանակի պնդութիւնը պէտք է զանազան լինի, զանազան մարդկանց համար։ Մինչև 14 տարեկան հասակը պէտք է տալ 2—3 շարք մազով փափուկ խոզանակ, իսկ յետոյ աստիճանաբար կարելի է անցնել աւելի կոշտի։ Նպատակայարմար է մազի կողմից փոս ունեցող խոզանակի գործածելը, որովհետև այդպիսին միանգամից կսրբէ մի քանի ատամներ։ Ատամները սրբելիս խոզանակը պէտք է շարժել ոչ հորիզոնական այլ վերևից ներքև, այսինքն լնդերից դէպի ատամի ծայրերը։ Հորիզոնական շարժելիս սրբւում են ատամների միմիայն դուրս ընկած մասերը, մինչդեռ արանքները աւելի կեղտոտւում են։ Սրբելիս չպէտք է բաւականանալ ատամների միմիայն արտաքին մասով, այլ պէտք է լաւ սրբել նաև յետևի մասը, որը աւելի է կեղտոտւում։

5) Ամենալաւ միջոցը լնդերքի թուլութեան ու նրանցից տեղի ունեցող արիւ-

նահոսութեան դէմ — ատամի խոզանակն է։ Պատրաստի ծախուող հարիւրաւոր էլիկսիր-ներից ոչ մէկը չի կարող նրա տեղը բռնել։ Ատամները սրբելիս խոզանակով պէտք է քիչ տրորել լնտերքը, որով ուժեղանում է արեան հոսանքը լնտերքի մազային անօթ-ներում ու նպաստում նրանց սննդառու-թեան ու պնդանալուն։

6) Բերանի անմաքուր պահելու հե-տեւանքներից մէկը ատամի քարի գոյանալն է, որը ժամանակի ընթացքում հաւաքուե-լով ատամների վրա՝ հեռացնում է նրանցից լնտերքը, թուլացնում, շարժում ատամները ու բերանից գարշելի հոտ արձակում։ Ան-հրաժեշտ է ատամները սրբելով քարի գո-յանալու առաջն առնել. իսկ եթէ արդէն գոյացել է դիմել ատամի բժշկին ու մաք-րել տալ։

7) Պէտք է խուսափել ատամի պատ-րաստի փոշի առնելուց, որովհետեւ այդ փո-շիներից շատերի բաղադրիչ մասերի մէջ մտնում են նիւթեր, որոնք միանգամայն վնասակար են ատամներին։ Ամենատարած-ուած փոշին քիմիապէս մաքրուած կաւիճն է (химически чистый) անուն, որը ատամի էմալից պինդ լինելով կարող է մաշել, փը-

չացնել նրան. այդ պատճառով անհրաժեշտ է նրան խառնել բնածխատ մագնիսի (уг-лекислая магнезія) հետ, որը աւելի փա-փուկ լինելով չի փչացնում էմալը։ Համի հոտի ու հակաբակտերիական յատկութեան համար լաւ է աւելացնել մի քանի կաթիլ պիտնային իւղ (мятное масло)։

8) Աւելի վնասակար է պատրաստի էլեկսիրներով բերանի ողողելը, որոնք գը-րաւելով իրանց համովն ու հոտովը քայքա-յում են գործածողների լնտերքն ու ատամ-ները։ Առողջ ատամներ ու լնտերք ունե-ցողների համար աւելորդ է որեւէ դեղ գոր-ծածելը, կարեւորութիւն ունեցողներ կարող են գործածել ոսկէ բորակական թթւուտ (борная кислота) հալելով մէկ թէյի գդալ մէկ բաժակ տաք ջրում։ Լնտերքի թուլու-թեան դէպքում կարելի է աւելացնել կէս գդալ տանի (танинъ)։

9) Բերանից վատ հոտ գալը առաջա-նում է բերանը կեղտոտ պահելուց, փտած ատամներից, թուլացած լնտերքից, կոկորդի և ստամոքսի հիւանդութիւններից և արեան ընդհանուր պակասութիւնից։ Նրա առաջն առնելու համար անհրաժեշտ է գտնել սկզբ-

նապատճառը, որի հեռացնելովը կանհետանայ և վատ հոտը։ Զանազան ողողելիքները կարող են միայն շատ կարճ ժամանակով ազդել, որովհետև նրանք չեն կարող ոչնչացնել իսկական պատճառը։

10) Ատամների առողջութեան համար անհրաժեշտ է չթողնել նրանց անգործ, հանգիստ, այլ որքան կարելի է բանեցնել, ծամելով ամուր կտորներ ու անպատճառ երկու կողմն էլ, որով աւելի ոյժ կստանայ արեան հոսանքը դէպի բերանի խոռոչը ու կը նպաստէ նրա կանոնաւոր սննդառութեանը։ Բայց ամուր կտորներ ասելով չպէտք է հասկանալ ընկոյզ, զանազան մրգերի կորիզներ, շաքար և այլն, որոնք կարող են էմալի մէջ ճեղքուածքներ առաջացնել։

Ատամնաբոյժ Ս. Կաճկաճեան

ԻՆՉՊԷՍ ՊԱՇՏՊԱՆՒԵԼ ԽՈԼԵՐԱՅԻՑ

Երբ մի քաղաք կամ գիւղ լուր է առնում, որ խոլերան *) մօտենում է, բնակիչները պէտք է հաւաքւին և միասին քննեն իրանց դրութիւնը։ Գրագէտները, օրինակ

*) Քաղւածք բժ. Արծրունու «Խոլերա» գրքոյկից։

ուսուցիչները, քահանաները պիտի ժողովրդի մէջ կարդան գրքոյկներ խոլերայի մասին և բացատրեն, թէ ինչ օգուտ ունին իշխանութեան ու բժիշկների առաջարկած միջոցները։ Իսկ ժողովուրդը պարտաւոր է կատարել այդ բոլոր խորհուրդները և պահանջները, որովհետև ամէն ինչ դրւում է ժողովրդի օգտի համար։

Ամէն մէկը պարտաւոր է զգոյշ լինել և չընդունել իր մօտ կասկածելի տեղերից եկածներին և առհասարակ չպիտի որևիցէ յարաբերութիւն ունենայ նրանց հետ։

Փողոցները և տները պէտք է մաքուր պահել, ոչ ոք չպիտի փողոցը կամ բակը գցի իր անմաքրութիւնները, իր զիբիլն ու աղբը, այլ պարտաւոր է հաւաքել արկղների մէջ և ամէն օր տանել քաղաքից կամ գիւղից դուրս և թաղել հողի մէջ, նշանակւած տեղերում։

Բնակիչների ունևոր մասը, իր սեփական օգտի համար, պիտի օգնի աղքատ մասին, բաց անելով թէյարաններ, ձրի կամ էժանագին ճաշարաններ, հրաւիրելով բժիշկներ կամ ֆելդշերներ ժողովրդին ձրի բժշկական օգնութիւն հասցնելու համար։

Ես ասում եմ «իր սեփական օգտի համար», որովհետև պաշտպանելով աղքատներին վարակումից, հարուստները դրանով իսկ ազատում են իրանց։ Ոչնչացնելով վարակիչ օջախները, հարուստները իրանց սեփական կեանքն են պաշտպանում։

Խոլերան երբ երևում է մի տեղ, բնակիչները չպիտի սարսափահար լինեն և փախչեն, ընդհակառակը, ամենքը պիտի խմբուեն՝ ընդհանուր թշնամու դէմ կռուելու համար։

Առաջին գործը պէտք է լինի հեռացնել հիւանդներին իրանց տներից և տանել հիւանդանոցները, յետոյ անհրաժեշտ է ախտահանել նրանց բնակարանները։ Իսկ եթէ այդ տեղում չկայ հիւանդանոց և հիւանդը պէտք է թողնուի տանը, այդ դէպքում պէտք է ձեռք առնել հետևեալ միջոցները։

1. Հիւանդի դուրս գնացածը և փսխածը ոչ մի դէպքում չպէտք է փողոց կամ բակ թափել, այլ պէտք է հաւաքել առանձին ամանների մէջ և թափել առանձին խոր փոսերի մէջ, որոնք փորւում են բակում (ջրհորներից հեռու)։ Ամէն անգամ էլ այս աղտոտութիւնների վրա պէտք է ածել թարմ

հալեցրած կիր և չոր հող։ Աւելի լաւ կը լինի տանել անմաքրութիւնները քաղաքից դուրս, կամ գիւղից դուրս, թափել յատկապէս փորած փոսերի մէջ և նոյնպէս ծածկել կրով և հողով։

2. Չի կարելի խոլերայով հիւանդի սպիտակեղէնը և շորերը լուանալ այն գետում, որից բնակիչները ջուր են վերցնում։

3. Անհրաժեշտ է, որ հարևանները ոչ մի յարաբերութիւն չունենան վարակուածի հետ.—ոչ իրանք գնան այնտեղ, ոչ էլ ընդունեն այնտեղից եկածներին։

Ծանօթութիւն.— Հիւանդատեսութեան կարելի է և անվնաս է գնալ միայն այն դէպքում, երբ զգուշութեան բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են առնւում։ Այդ միջոցները սրանք են. հիւանդի մօտ մտնելիս պիտի հագնել առանձին շապիկ (խալաթ), որը պաշտպանում է նրան հիւանդի վարակիչ աղտոտութիւններից։ Դուրս գալու միջոցին շապիկը պիտի հանել, իսկ եթէ այցելողը շապիկ չի հագել, պիտի փոխէ շորերը։ Չպէտք է դիպչել ոչ հիւանդին, ոչ էլ նրա իրերին։ Հիւանդի մօտից դուրս գալիս պէտք է լուացուել սապոնով և տաք ջրով, ապա և մի որ և է ախտահանող դեղով։

4. Ամէն մէկը պարտաւոր է իր առողջութեան վրա հսկել, հէնց որ մի ամենա-

փոքրիկ տկարութիւն, փսխում կամ փորլուծութիւն ունենայ, պիտի դիմէ բժշկի։

5. Չպէտք է թոյլ տալ ոչ մի չափազանցութիւն ոչ ուտելու, ոչ խմելու և ոչ էլ աշխատելու մէջ, իսկ միւս բաներում չպէտք է փոխել ապրուստի առաջւայ եղանակը։ Եթէ նա կանոնաւոր է եղել։ Կերակուրը պէտք է հեշտ մարսուող լինի և չափաւոր։ Դժուար մարսուող կերակուրները, օրինակ հում ընդեղէնները (բողկ, գազար) խոզի միսը, խմոր հացը խիստ արգիլւած են։

5. Հում մրգեր խոլերայի ժամանակ կարելի է գործածել միայն այն ժամանակ, երբ լւացւում են մաքուր, եփ տւած ու սառցրած ջրի մէջ։ Աւելի լաւ է վերցնել մէկ թէյի գդալ սալիցիլեան կամ լիմօնի թթուուտ, խառնել մի շիշ ջրի մէջ և դրանով լւանալ մրգերը։ Իսկ եթէ չի կարելի այս զգուշութիւնները գործ դնել, աւելի լաւ է առժամանակ մրգեր բոլորովին չուտել։

Թոյլատրւած ուտելիքները, օրինակ՝ լաւ պանիրը, կարագը, խոզի ապուխտը պէտք է պահւեն ծածկւած ամանի մէջ, որպէս զի ճանճերը վարակի թոյնը չնստեցնեն նրանց վրայ։

8. Ժողովրդի մէջ խօսք կայ թէ սխտորը պահպանում է խոլերայէ վարակւելուց, ուստի շատերը սխտոր են լցնում իրանց գրպանները և ուտում մեծ քանակութեամբ։ Այդպիսի քանակութեամբ սխտոր ուտելը վնաս է, որովհետև սխտորը գրգռում է ստամոքսն ու աղիքները, ծարաւ է առաջացնում և հարկադրում է շատ ջուր խմել։

9. Խոլերայի ժամանակ ամենալաւ խմելիքը եռացրած և ապա սառցրած ջուրն է։ Ջրին կարելի է աւելացնել քիչ գինի կամ որ և է թթւուտ (լիմօն) կամ թթւասերուց (նշան, հոնի)։ Աղային ջրերը (սոդայի, սելտերեան) վնասակար են։ Պէտք է խուսափել շատ սառն խմիչքից, պաղպաղակից և այլն։

10. Փորն ու ոտները պէտք է տաք պահել։ Չի կարելի քնել խոնաւ տեղ, պառկել խոնաւ հողի վրայ։ Խորհուրդ են տալիս գործածել բրդէ կամ ֆանելէ փորկապ։

11. Սովորած մարդիկ կարող են լողանալ գետում տաք եղանակներին, եթէ միայն գետը չի անցնում քաղաք վարակւած թաղերի միջով։ Լողանալ կարելի է միայն ուտելուց 3—4 ժամ յետոյ։

Մինչև բժշկի գալը։ Խոլերայի ժամանակ ստամոքսի ամեն տեսակ խանգարուածները պէտք է լուրջ կերպով բժշկել։ Մեր կողմից տալիս ենք հետևեալ խորհուրդները.

1. Հիւանդին իսկոյն անկողին պառկեցրէք փորին մանանեխ (горчичник-sinapisme) դրէք, կամ դրէք կանեփի սերմից փաթեթ, կամ թէ չէ մի պարկ, որի մէջ կը լցնէք տաքացրած աւազ կամ թեփ։ Ժողովուրդը սիրում է տաքացրած աղուր ու խոտ, դրանք էլ լաւ են։ Կարելի է նոյնպէս հիւանդի ոտների տրանքը ու կողքերին եռման ջուր լցրած շիշեր շարել, որոնք պէտք է փաթաթուած լինեն մաքուր շորով։

2. Եթէ հիւանդը փսխում է կամ լուծք ունի, տուէք խմելու շաքարաջուր լիմոնի կամ նռան հիւթով, իսկ աւելի լաւ կլինի, եթէ խմացնէք նրան մի բաժակ ջուր որի մէջ կաթացրէք 10—15 կաթիլ աղաթթուտ (соляная кислота—)։ Եթէ փսխելը չի դադարում, կտոր կտոր սառոյց տուէք կուլ տալու, իսկ եթէ այդ էլ չի օգնում և, աւելի ևս, եթէ լուծել է սկըսում, պէտք է տաք բոտկինի կամ ինօզեմցեվի կաթիլներ (հասակաւորներին 20—25

կաթիլ ջրով երկու երեք ժամը մի անգամ, և եթէ փսխելը յաճախ է կրկնւում, նոյնիսկ ժամը մէկ անգամ)։

3) Եթէ հիւանդի ոտերն ու ձեռները ձգձգւում են (որ մեծ ցաւեր է պատճառում նրան) պէտք է ցաւող անդամը տրորել մի կտոր շորով, որ պիտի թաթախել մանանեխի կամ քափուրի սպիրտի մէջ։

4) Շնչարգելութեան ու սրտի բաբախման դէմ գործ են ածում Վալերիան և Հոֆմանի կաթիլներ (15—20 կաթիլ օրական մի քանի անգամ), իսկ նւաղութեան և ուշագնացութեան դէմ, բացի այդ, պէտք է նաշադրի ոգիով (нашатырн. спиртъ) հոտ տալ քթին։

5. Եթէ հիւանդի անդամները սառել են պէտք է տաքացնել տաք ջրի շիշերով։

6. Երբէք չպէտք է ականջ դնել հէքիմներին և պառաւներին, որոնք իրենց տգէտ խորհուրդներով ու վնասակար միջոցներով կորցնում են ժողովրդին, Օրինակ, նրանք հիւանդից արիւն են առնում, այն ինչ այդ չափազանց վնասակար է, որովհետև աւելի ևս թուլացնում է հիւանդին և ուղղակի կարող է սպանել նրան, քանի որ առանց արիւն առնելու էլ հիւան-

ղը շատ ջուր է կորցնում լուծելիս ու փըսխելիս և նրա արիւնը արդէն թանձրացած է։

Պէտք է խոյս տալ նմանապէս և զանազան պառաւական բոյսերից ու «քոլերից», որոնցից միայն վնաս կայ և երբեք օգուտ։

Բժ. Վ. Արծրունի

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՀԱՅՈՑ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Կամաւորական շարժումը, որի վկաները հանդիսանում ենք մենք, ունի խոր արմատներ անցեալում։

Նա ծագում է այն ժամանակից իվեր, երբ հայերը արթնանալով մահմետական դարաւոր լծից, զգացել են ռուսների մէջ այն ոյժը, որը պիտի ազատէր նրանց ստրկութիւնից։ Այն ժամանակից իվեր միայն մենք սկսեցինք ապրել նորմալ կեանքով և ստեղծել նորից կենսակրթական արժէքներ։ Այն պայմանները, որոնք մեզ

բերում էին նոր կեանք և մարդավայել գոյութիւն, կործանիչ էին աւազակաբարոյ նոմադներին և մահմետական գերիշխանութեան։ Հայերը դարձան գիտակցաբար ռուսաց տիրապետութեան տարածման նպաստող գործոններ։

Բարձրագոյն հրամաններով հաստատում է հայերի դարաւոր հաւատարմութիւնը դէպի Ռուսաստան Ալեքսանդր I-ի 1813 թ. սեպտ. 15 և Նիկոլայ I-ի 1827 թ. փետր. 2. հրամաններով հաստատում է «անսասանն հաւատարմութիւն» և օրինակելի կայունութիւն հայ ժողովրդի, երբ թեթեւամտութիւնը և անպարկեշտութիւնը ուզում էին խախտել Վրաստանում մեզանից հաստատուած խաղաղութիւնը ոչինչ չը խնայելով մեզ ծառայելու համար։ «Հայ ժողովրդի այս հաւատը», շարունակում է հրամանը, «պարտաւորեցնում է մեզ վըկայել ամբողջ աշխարհի առաջ մեր շնորհակալութիւնը ի յիշատակ ժառանգների»։ 1827 փետր. 2-ի հրամանը վկայում է հայերի մատուցած մեծ ծառայութիւնները պարսիկների յանկարծակի յարձակման ժամանակ։ Ռուսաց կայսրը անուանում է հայերին «Մեր սրտին սիրելի հայկական ժո-

զովուրդ», իսկ կոմս Պասկևիչը «Մեր քաջարի դաշնակիցներ և եռանդոտ մասնակիցները»:

Մատուցած ռազմական ծառայութիւնները կայանում էին համ ազգաբնակութեան օգնութեամբ համ էլ կամաւորական խմբերով: Պատմութիւնը մեզ տալիս է մի շարք անուններ՝ Տարաշ Օրբելեան Զանգեզուրցու, Իզբաշ Մելիք Աւան Ղարաբաղի խանի, որը իւր քաջութիւնների համար ստացել էր գեներալի աստիճան, եղբայր Թարխանեանների, եղբայր Յովհաննէս և Յակոբ Աթաբէգեանների և էլի ուրիշ անուններ՝ նրանց մէջ մի կնոջ Մանուշակի և արքեպիսկոպոս Գրիգոր Մանուչարեանի, որը իւր հերոսութիւնների համար ստացել է Գէորգի, Վլադիմիրի և Աննայի շքանշանները:

Հետաքրքիրն էն է, որ այն ժամանակներ էլ նոյնպէս հայ կամաւորական խմբերը եղել են նախանձի և զրպարտութեան առարկա հայ ժողովրդի թշնամիների կողմից և Ղարաբաղի հերոս Վանի Աթաբէգեանի դէմ մինչև անգամ դատ է եղել, որը վերջացել է նրա արդարացումով:

Այն ժամանակները մեր խմբերը հիմնըւած են եղել նոյն ազգային հիմքերի

վրա, ինչպէս և այժմ: 1827 թ. հայ օպոլչենիէի կազմելը եղել է Ներսէս արքեպիսկոպոսի ձեռնէրեցութեամբ: Մարտի 30-ին սրբազանը սմոտր է արել օպոլչենիէին փոխարքայի պալատի առաջ թուրը ձեռին: Պէտք է լինէր մի քանի գումարտակ 1000-ական հոգով: Գործը յանձնւած է եղել կոմիտէին, որ նախագահն զինւորական նահանգապետ Սիպեագինն էր, փոխ նախագահ հոգևոր դպրոցի վերատեսուչ Հայր Յարութիւն Ալամդարեանը և մի քանի պատուաւոր քաղաքացիներ: Խմբերի կազմելու վերաբերմամբ կայացել է բարձրագոյն հրաման: Հրատարակւած է եղել նաև յատուկ առանձին կոչ, որի մէջ հայերին յայտարարւում էր, որ քանի որ «հայերը աչքի են ընկել պարսիկների յարձակման ժամանակ քաջութեամբ և անսահման հաւատարմութեամբ, կայսրը, գնահատելով ցոյց տըւած հաւատարմութիւնը ցանկացել է, որ կազմւի հայերից առանձին սեփական գունդ իւր դրօշակներով իրենց ճնշւած եղբայրներին օգնելու և հայրենիքը պաշտպանելու համար»:

Հայ գնդերի համար հրատարակւած է եղել առանձին կանոնադրութիւն, որով

խումբերը կազմւում էին պատերազմի ժամանակով և ունէին սպայական կազմ հայերից զաւրեատ-օֆիցերական աստիճաններով։ Գրւել են մինչև 2000 հոգի գլխաւորապէս պարսկահայերից։ Բացի դրանից եղել է առանձին Ղարաբաղի միլիցիա։

Հայ կամաւորական գնդերի աչքի ընկնող գործողութիւնների մասին վկայում են ռազմա-պատմական դօկումենտներ և ռուս պատմագիրներ։

Նոյնանման տրամադրութիւն հայ ժողովուրդը ցոյց է տւել 1877—1878 ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, միայն ուրիշ ձևով։

Մեր այժմեան կամաւորական շարժումը աւելի նման է 1827 թւականին։

Պատմութիւնը կրկնւում է։

Գ. Խատիսեան

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ներկայ համաշխարհային պատերազմը սկսւեց փոքր ազգերի ազատագրութեան դրօշակի տակ։

Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան զանազան առիթներով յայտարարեցին, որ այս պատերազմը մղւում է յանուն արդարութեան և իրաւունքի, որ այլևս վերջ պի-

տի տրւի պրուսական միլիտարիզմին և նրա գռեհիկ բռնապետութեան։

Տրորւած Բելգիան պիտի վերականգնւի իր սահմանների մէջ. Սերբիան պիտի ստանայ իր ազգային պահանջները և միւս իրաւազուրկ ազգերը պիտի թօթափեն իրանցից բռնութեան լուծը և վայելեն պիտի ազատութեան լոյսը։

Դարերի նահատակ և միշտ դէպի ազատութեան արեգակը ձգտող հայ ժողովուրդը, որ այնքան մաքառել և անչափ զոհեր էր տւել ազատութեան մողոքին, այս անգամ ցնցւեց իր հոգու բոլոր թափով։ Նրան մի պահ թւաց, որ պետական մարդկանց քաղցր խոստումները իսկապէս անկեղծ են և արժանի վստահութեան, որ իր ազատութեան ժամը հնչել է։

Եւ հայ ժողովուրդը՝ առանց վերապահութեան իրեն նետեց համայնաւեր փոթորկի գիրկը։ Նա չտատանւեց, ընտրութիւն չարաւ, քաղաքական հեռաւոր հաշիւների մէջ չմտաւ։ Նրա համար պարզ էր, թէ իրաւունքն ու արդարութիւնը, նրա կարծիքով, հանդիսանում են նաև այն ոյժը, որ անպատճառ պիտի յաղթէ։ Եւ անխախտ իր հաւատի մէջ՝ հայ ժողովուրդը իր մասնակցութիւնն ևս բերեց աշխարհասասան պատերազմին։

Հազիւ թէ մի ազգ այնպիսի բուռն ու անկեղծ խանդավառութեամբ մասնակցած լինի այս պատերազմին, ինչպէս հայը։ Իր ունեցած ամբողջ կարողութիւնը—նիւթական ու հոգեոր—նա դրեց պատերազմի սեղանի վրա։ Եւ տակաւին շարունակում է դնել նոյն եռանդով և միևնոյն անկեղծութեամբ։ Եւ դեռ շատ վաղաժամ է հաշւելու ամբողջ պատկերը ներկայացնելու հայ ժողովրդի աջակցութիւնը ազգերի ներկայ պայքարին։

Ամենից առաջ և ամենից շօշափելի կերպով, ի հարկէ, աչքի են ընկնում հայ կամաւորական գնդերը, որո՛նց միջոցով հանդէս եկաւ հայ մարտական ոյժը։ Կամաւորական եօթը գնդեր՝ Օլթիից մինչև Ռեւանդուզ՝ կողք-կողքի ռուս զինւորի հետ՝ կուրծք տւին տաճկական զրոհին, հարւածեցին նրան և անփոխարինելի զոհեր տւին։ Քեռի, Խեչօ, Սաֆար, Արտաշէս և ուրիշ հարիւրաւոր կտրիճ հերոսներ, որոնց արիւնով նւիրագործւեցին այն բազմաթիւ փայլուն յաղթանակները, որո՛նք հրեղէն տառերով քանդակւեցին պատմութեան էջերում։ Դեռ ապագային է վերապահւած ցոյց տա-

լու այն դերը, որ կատարեցին մեր գնդերը ռուս զէնքի յաջողութեան համար։ Այդ գնդերը դուրս եկան հայ ժողովրդի ծոցից և ապրեցին նրա շնչովը ու նիւթական օժանդակութեամբ։

Կամաւորական գնդերին զուգահեռաբար՝ հայ ազգը բոլոր հնարաւոր միջոցներով օգնեց պատերազմի գործին և, մանաւանդ, պատերազմի զոհերին։ Գրեթէ բոլոր հայաբնակ քաղաքներում հայերի միջոցներով բացւեցին հիւանդանոցներ՝ զինւորները խնամելու համար։ Պետրոգրադից մինչև Երևան այդպիսի հիմնարկութիւնների թիւը տասնեակներով կարելի է հաշւել։ Եւ հայ բժիշկը, հայ գթութեան քոյրը սիրով խնամում են հիւանդ ու վիրաւոր զինւորներին։

Քաղաքների Միութեան հաստատութիւնների մէջ հայ մասնակցութիւնը ամենագործօն դերն է կատարում Կովկասեան ռազմաճակատի թիկունքում ու առաջաւոր գծերում։

Պատերազմի գնացած զինւորների ընտանիքների և որբերի պահպանման ու նպաստի գործին ամեն կերպ ոյժ է տալիս հայ ժողովուրդը։ Մասնաւորապէս խոշոր է

այս խնդրում հայ գիւղացու մասնակցութիւնը։

Հայ աշխատաւոր գիւղացին, սակայն, աւելի մեծ ու պատուաւոր դեր ունեցաւ և դեռ շարունակում է ունենալ պատերազմից վնասուածների և, յատկապէս, տաճկահայ գաղթականներին պատսպարելու և օժանդակելու գործի մէջ։ Ինքը չքաւոր ու տընաքանդ՝ իր բերնի վերջին պատառը չխընայեց օգնելու համար պատերազմի արհաւիրքին մատնուած սահմանի միւս կողմից եկող իր եղբօրը։

Պատերազմի առթիւ, հայերի ջանքերով ու միջոցներով, կեանք առին մի շարք հանրօգուտ հաստատութիւններ—որբանոցներ, կրթարաններ, բուժարաններ, սննդատու կայաններ սանիտարական գընացքներ, նպաստաբաշխ մարմիններ և այլն, որոնց բոլորի նպատակն էլ, այս կամ այն ձևով, պատերազմին կամ պատերազմի զոհերին օգնելն է։

Եւ, վերջապէս, այս բոլոր կամաւոր օժանդակութեան վրա պէտք է աւելացնել և այն մասնակցութիւնը պատերազմին, որ անում է հարիւր հազարից աւելի հայ զինուորութիւնը և թիկունքում պարտաճիր աշ-

խատանք կատարող հայ գիւղացիութիւնը։ Գերմանական ռազմաճակատում և Հայաստանի լեռների վրա հայ զինուորն ու սպան՝ ռուս զինուորի հաւասար եռանդով ու զոհաբերութեամբ՝ գործում են յանուն այն սկզբունքների, որոնք պատերազմի առաջին օրերում այնպէս բարձրագոչ յայտարարեցին ի լուր աշխարհի։

Այդ սկզբունքները դեռ կան, դեռ չեն ծածկուած մոռացութեան մամուռով, իսկ յոյսի ու յուսահատութեան արանքներում գալարւող Սերբիայի, Լեհաստանի ու Բելգիայի կողքին մնում է աւերակ և արիւնաքամ Հայաստանը: Եւ նրա բնաւեր, յոշոտուած և աշխարհի բոլոր ծայրերը ցրուած զաւակները շարունակում են երազել իրենց միակ երազը,—

Տեսնել Հայաստանը ազատուած Թիւրքիայի ճանկերից։ Ս. Վրացեան

ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

(Պատմական ակնարկ *)

Ազգութիւն չմնաց Տաճկահայաստանում, որ չճնշուէր. ժողովուրդ չմնաց, որ չը խեղդուէր, խօսք, կարծիք, իրաւունք, օրէնք չր մնաց—նոյնիսկ սուլթանական գահերից հռչակուած—որ չը տրորուէր: Եւ շնորհիւ այդ ճնշումների ու հալածանքների, ազատութեան ոգին XIX-րդ ռուսատաճկական պատերազմի օրերին—1877 թ. ոտի կանգնեցրեց ազգերի ամբողջ շարան—Սերբիա, Ռումինիա, Բուլգարիա և այլն, որոնք մինչև այն՝ տանջւում էին ասիական բիրտ լծի տակ, այժմ ձեռք բերին՝ անկախ ու ինքնավար հայրենիք:

Այո, 1877 թուի պատերազմը ազգերի ազատութեան պատերազմ կարելի է անուանել: Այդ պատերազմին չը մասնակցեց Յունաստանը, որը բարւոք համարեց չեզոքութիւն պահպանել: Բայց չէ՞ որ ասիական անտանելի բռնութիւններն ու անասելի հարստահարութիւնները չէին կարող հանգիստ տալ յունական ազգասէր ժողովրդին:

Իւ ահա 1897 թ. բռնկւում է ապս-

*) Տես 1915 թ. «Տարազ» № 3 աւելի մանրամասն: Ծ. Ա. Թ.

տամբութիւնը, որը դժբախտաբար յաջող ելք չունեցաւ. այլ մի քանի տասնեակ հազար զոհ: Իսկ սուլթանական կառավարութիւնը գոհ էր, որ կարողացա «ճնշել ու խեղդել» ապստամբութիւնը, որը 20 տարուայ լուրջ պատրաստութիւն ունէր:

Բայց չէ՞ որ բռնութիւններով չէ կարելի հանգստացնել ժողովրդական շարժումները, այլ միայն բաւարարելով նրա արդարացի պահանջները: Բայց տաճկական բռնակալութիւնը որտեղից էր հասկանում այդ տարրական ճշմարտութիւնը՝ նա շարունակում էր՝ սուր, բանտ, կախաղան և այլն:

Այդ բոլորի վրէժն էր, որ գումարուած 15 տարուայ ընթացքում՝ ծնունդ տուին նոր ապստամբութեան, որը ստացաւ այն, ինչ որ ստացել էին հարևան ազգութիւնները—1877 թ., իսկ իրենք 1912 թ. այն է՝ ուղիղ 35 տարուց յետոյ:

Ռուսաստանում հայկական հարցը իր ծագումն է առել Պետրոս Մեծի օրով: Հանճարեղ միապետը հակւած դէպ արևմուտք, ոչ մի դէպքում չէր կարող անտես առնել այն վիթխարի ժայռը, որի անունն է տաճկական միապետութիւն, կամ աւելի ճիշտը,

տաճկական բռնապետութիւն։ Եւ ահա 1722 թւին փորձ անում քանդել այդ ժայռը և ճանապարհ հարթել դէպի հարաւ։

Եւ իսկապէս այդ ժայռն է, որ բաժանում է քրիստոնեայ Կովկասը՝ Պարսկաստանից և քրիստոնեայ Բալկանը՝ Թիւրքիայից։ Հէնց այդ վիթխարի ժայռն է, որ առաջ բերեց Բալկանեան քրիստոնեայ պետութիւններ՝ Սերբիա, Ռումինիա, Բուլգարիա և այլն, հարցին, իսկ Հայաստանում՝ հայկականը։ Եւ ահա Պետրոս Մեծի սկսած գործն ու պրոպագանդան լայն չափերի ու դրական հետևանքների հասաւ Եկատերինէ կայսրուհու օրով 1796 թ.։ (1796 թիւը) Տաճկաստանում տառապող քրիստոնեայ ժողովուրդների ազատութեան ու ըմբոստութեան ոգի բերողն էր։ Այո, այդ թւականին էր, որ ռուսաց զօրքը կամաց-կամաց շարժւում էր դէպի տաճկական սահմանները և Եկատերինէ կայսրուհու կոչը ուղղւած քրիստոնեայ ազգութիւններին,—կոչ ապստամբութեան, կոչ ըմբոստացման ընդդէմ սուլթանական արիւնախում կառավարութեան։

Շնորհիւ այդ կոչի՝ յուսոյ ու լուսոյ ճառագայթները երևան եկան բռնութիւնից թմրած ու մոլորւած ազգութիւնների մէջ։

Հայ ազգն էլ ունէր իր ցաւն ու ազատման խնդիրը, որ արքեպիսկոպոս Արղութեանի ձեռքով ներկայացրին կայսրուհուն՝ հայկական ինքնավարութեան ծրագիրը։ Այդ ծրագրի իրագործումը լոկ հայերի շահերի տեսակէտով չէր կազմւած, այլ նկատի էր առնւած նաև այն մեծ օգուտը, որը պիտի շահէր Ռուսաստանը՝ կազմակերպելով իր սահմանների վրայ, որպէս ուժեղ ամրոց մահմեդականների դէմ։

Այդ ծրագիրը հաւանութիւն գտաւ Պետրոգրադում։

Բայց, դժբախտաբար հայկական ծրագիրները իրագործման բախտին չարժանացան։

Կայսրուհու մահը, 1796 թ., և յաջորդող քաղաքական փոփոխութիւնները՝ վերջ դրին յառաջ եկած ազգային հարցերին, լուսաբեր ու վառվռուն յոյսերին։

Տարիներ անցան և վրա հասաւ 1826—28 թ., բռնկվեց ռուս-պարսկական պատերազմը և հայերը, այս անգամ էլ, ինչպէս ամեն ժամանակ, ցոյց ուին իրենց հաւա-

տարմութիւնն ու բարեկամութիւնը։ 1827 թ. ինչպէս մեր օրերում, ժողովրդի ոգեւորութեանը չափ չկար, որի շնորհիւ Թիֆլիսում կազմակերպուեց առաջին հայկական զօրագունդը։ Կամաւորների թիւը օրստօրէ աճում էր ու բազմանում։ Աննման Ներսէս Աշտարակեցին էր, որ ձին նստած եկաւ դէպի կամաւորները, մի ձեռին խաչ, միւսում սուր։ Մի գողտրիկ ու ոգեւորիչ ճառ արտասանեց, որի ազդեցութիւնը մեծ էր։ Իսկ մի քանի օրից յետոյ վանքի մայր եկեղեցում մեծ հանդիսով օծուեց հայկական գնդի դրօշակը։ Հէնց այդ օրն էր, որ տարածուեց ռուսաց բանակի ընդհանուր հրամանատարի շրջաբերականը, ուղղուած հայ ժողովրդին, որ վերջանում էր այս խօսքերով.

«Հայեր, ձեր եռանդը արժանաւորապէս վարձատրուած է։ Մեծ Կայսեր ողորմած աչքը աչքը դարձած է դէպի ձեզ։ Դուք կունենաք ձեր «դրօշակի“ տակ սեփհական զօրագնդեր։ Ձեզ շնորհուած է զէնք, որպէս զի դրանով օգնութեան հասնէք ձեր ճնշուած եղբայրներին, ապահովութիւն տաք ձեր ընտանիքներին և գրաւելով կայսերական շնորհները՝ պաշտպան հանդիսանաք հայրենիքին“։

Եւ ահա 1827 թ., մայիսի 17-ին հայկական զօրագունդը բաղկացած մի քանի հազար հոգուց, ճանապարհ ընկաւ դէպի պատերազմի դաշտը։ Ճանապարհին հայ ազգաբնակութիւնը մեծ ոգեւորութեամբ ու հիւրասիրութեամբ էր ընդունում կամաւոր եղբայրներին և նրանց շարքերը ստուարացնում նորանոր կամաւորներով։

1828 թ. պատերազմը վերջացաւ յօգուտ Ռուսաստանի։ 25-ին յունուարի Ներսէսը արժանացաւ շքանշանների հետ միասին՝ Նիկոլայ կայսեր շնորհակալութեան ու երախտագիտութեան հրովարտակին, ուրեմն, այս անգամ էլ այսպէս վերջացաւ— այն է՝ շքանշանով ու շնորհակալութեան հրովարտակով։ Անցնում էին տարիները, իսկ տաճկահայի ցաւին ու տանջանքին ոչ մի ելք, ոչ մի թեթեւացում, այլ ընդհակառակը աւելի էր սաստկանում հարկերի աւելացումն ու բանտերի քանակը՝ հայերին ճնշելու համար։

Ներսէս Աշտարակեցին, որ այնպէս ոգեւորուած գործում էր ու յոյս դնում թէ կը լուծուի հայկական խնդիրը, յուսախաբուեց։ Վրա հասաւ 1857 թ. և Ներսէսն անողա-

սելի կերպով վախճանւեց՝ դերեզման իջեցնելով այնքան փայփայած ու սիրած հայկական հարցի ծրագիրը: Այս անգամ էլ, ինչպէս անցեալներում, հայկական ինքնավարութեան խափանումը ոչ մի դրգիռ ու թշնամութիւն առաջ չը բերեց: Իսկ ինչ էր անում կովկասահայը: Կովկասի հայերը անմասն չէին դէպի իրենց եղբայր տաճկահայերը, նրանք գրում, խօսում, բողոքում ու քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը գրաւում:

Հէնց այդ գրողներից ու գործողներից ամենատաղանդաւորն էր մեր շնորհալի հրապարակախօս ու համարձակ հասարակական գործիչ հանգուցեալ Գրիգոր Արծրունին: Նա էր, որ ձեռնարկեց կազմել մի ուղերձ հայ հասարակութեան կողմից ուղղած Ալեքսանդր II-ին, խնդրելով Նրան օգնութեան հասնել տաճկահայ տառապող ժողովրդին:

Ուղերձը կազմւեց, որի բովանդակութիւնը այս է. «Ձերդ Կայսերական Բարձրութիւն, բնակւելով ռուսաց կառավարութեան հովանու ներքև և վաղուց արդէն վայելելով՝ մեզ համար թանկագին պետութեան հովանաւորութեան տակ հանգստու-

թեան և խաղաղութեան բոլոր պարգևները, մենք Թիֆլիս քաղաքի բնակիչ հայերս, դրդւած քրիստոնէական մարդասիրութեան զգացմունքից, չենք կարող անտարբեր մընալ դէպի այն անհերևակայելի տանջանքները, որ կրում են ասիական Թիւրքիայի սահմաններում բնակւող մեր ցեղակիցները և համադաւանները, ուր ոչ անհատը, ոչ սեփհականութիւնը, ոչ կրօնը, ոչ քրիստոնեաների կեանքը և ոչ նրանց ընտանիքի կանանց և աղջիկների պատիւը ոչնչով չէ ապահովւած: Գիտենալով թէ որքան մեր սիրելի Թագաւորը և ամբողջ Ռուսաստանը անսահման համակրում են Թիւրքահպատակ քրիստոնեաների վիճակին, մենք թէ արիւնակից և թէ կրօնակից մեր եղբայրների դրութեան բարւոքման ամբողջ յոյսը դընում ենք Ռուսաստանի հզօր հեղինակութեան ուժի վրայ և ապաւինում ենք մի միայն ինքնակալ կայսրին:

Քրիստոնէական մարդասիրութեան, խոր ցաւակցութեան զգացմունքը դէպի մեր եղբայրները՝ դրդեց մեզ դիմել Ձերդ Կայսերական Բարձրութեան Օգոստափառ միջնորդութեան և ամենահաւատարմաբար խնդրել Ձերդ Բարձրութիւնը՝ արկանել Թագա-

ւոր կայսրի ոտների մօտ մեր ամենահպատակ խնդիրը՝ պաշտպանել իր հզօր ձեռքով Թիւրքիայի այլևայլ քրիստոնեաներին հաւասար կերպով, մահմետականութիւնից միշտ ճնշուած հայոց ազգը, այն միջոցներով, որ նախախնամութիւնը յանձնել է Նորին Մեծութեանը և որ նա աւելի յարմար կը համարի»։ Որպէս համակրանքի նշան, կայսրը հեռագրով յայտնեց. «Շնորհակալութիւն Թիֆլիսի հայ ազգաբնակութեան“։

Հէնց այդ օրերն էր, որ Ռուսաստանը պատրաստւում էր պատերազմել Տաճկաստանի հետ։ Պատերազմը սկսւեց։ Ռուսաց բանակը հայ գեներալների հրամանատարութեամբ մտան Թիւրքաց Հայաստան։ Ի՞նչ ասել կուզէ, որ տաճկահայերի ուրախութեանն ու վառվռուն յոյսերին չափ չը կար՝ երբ տեսան զօրքի ներս մտնելն ու յաղթական քայլերը։ Նրանք երազում էին ազատ Հայաստան, ինքնավար հայրենիք, բայց այս անգամ էլ հարցը մնաց չլուծուած։

Պատերազմը վերջացաւ 1878 թ. ռուսաց քաջ զօրքերի թափած արեան շնորհիւ,

ստորագրւեց Սան-Ստեֆանօյի դաշնագրի 16 յօդուածը, որը կարճ կեանք ունեցաւ։

Այս է յօդուածը. «Որովհետև ռուսաց զօրքերը Հայաստանի մէջ գրաւած երկիրներից յետ քաշւելուց յետոյ՝ յիշեալ տեղերում կարող են կռիւներ ու խառնակութիւններ տեղի ունենալ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւնները կարող են խանգարել, Բարձրագոյն Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարենորոգումները, որ տեղական պիտոյքները պահանջում են հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քիւրտերի ու չերքեզների դէմ»։

Հայերը գոհ էին և ուրախ։ Բայց ցաւօք սրտի, այդ ուրախութիւնը երկար չը տևեց։ Գերմանական մայրաքաղաքում Բերլինում գումարւեց վեհաժողով։ Այդ ժողովում քննութեան առնւեց 16-րդ յօդուածը, որի հետևանքը այն եղաւ, որ կազմւեց 61-րդ յօդ. անգլիական ներկայացուցիչներն էին, որոնք պահանջում էին, որ դուրս բերւի Հայաստանից ռուսաց զօրքը և ստեղծեցին 61-րդ յօդ., որի բովանդակութիւնը այս է. «Բարձրագոյն Դուռը յանձն է առ-

նում անյապաղ գործադրել այն բարւոքումները ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պէտքերը հայոց բնակած նահանգների մէջ և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չերքեզների ու քիւրտերի դէմ։ Բարձրագոյն Դուռը այս նպատակի համար ձեռք առնւած միջոցները պարբերաբար պիտի ծանօթացնէ պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ։

Անցնում էին տարիները, հայը բողոքում էր հրդեհների ու սպանութիւնների դէմ, հայը աղերսում էր ազատութիւն ու անկախութիւն բռնակալական անտանելի լծից, բայց ով էր լսողը։ Ահա հասաւ ժամը՝ 1914—15 թիւը, որ Ռուսաստանը դուրս է եկել պատերազմի Թիւրքիայի դէմ, որով պիտի լուծւի հայկական խնդիրը։

Զւարթ օրեր են, թէպէտև ծանր, թէպէտ տանջանքներով ու արիւնով լի։ Հայ ժողովուրդը ներշնչւած յամառ, անյաղթելի ոգով յառաջ, միշտ յառաջ է սլանում դէպ լուսաբեր ազատութիւնը, դէպ ազգային ինքնաճանաչութիւնն ու գիտակցութիւնը, դէպի հայկական անկախութիւնն ու ինք-

նավարութիւնը, որոնց համար արժէ և պէտք է զոհաբերել ամէն բան՝ թէ երիտասարդ կեանքեր, թէ հարստութիւն, քանի որ առանց ազատութեան աննշան են բոլորը։

Հայրենիքի ոգին երևան է գալիս այսօր՝ աւելի մեծացած աւելի հասունացած ու ամբողջացած՝ այն սարսափելի թալանի ու աւերի, սպանութեան ու բռնութեան տակ, որոնք նպատակ ունէին բնաջինջ անել հային իր հարցով։

Բայց ի զո՜ւր։

Հայ ժողովուրդը ոտքի է կանգնել՝ յանձին իր քաջերի՝ զէնքի ոյժով իր դարաւոր հարցն է լուծում, կոչելով՝

Ազատւի՛ր հայկական հայրենիք մեր պլակների ու արեան գնով։

Միայն հայի ոյժով չէ, որ պիտի ազատւի Հայաստանը, այլև ռուս զօրքի, որ առիթ ստեղծեց հրդեհի բռնկման, որը դարեր շարունակ վառւել էր, բայց չէր այրւել, բայց այս անգամ պիտի այրւի ու ոչնչանայ հայկական հարցը՝ կեանք տալով հայկական ազատագրման։

XVI թ. ընթանում է արեան ու արտասուքի միջից՝ անտարբեր ու սառն դէպի

ամուսնացուրկ հարսները, երեխայակորոյս մայրերն ու կռւի դաշտում փռուած հայրենասէր մարտիկների դիակները: Բայց նա կը տայ ու բարձրացնէ այն ազգերին, որոնք ըմբոստութեան ու ազատութեան ոգով լցուած կռւում են անդաւաճան կերպով, ինչպէս ուրիշ ազգեր իր ժամանակին, կռուել ու ազատուել են տաճկական արիւնարբու լծից:

Ուրեմն յառաջ ու յառաջ, նշանաբան ունենալով հանճարեղ Գէօթէի խօսքերը՝ նա է միայն արժանի ազատութեան և կեանքի, ով որ ամէն օր կռւով նուաճում է նրանց:

Ա. Թոփչեան

ՀԱՅԵՐԸ

ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Ինչպէս յայտնի է, Թիւրքիայում կանոնաւոր վիճակագրութիւն չը կայ, ուստի և դժուար է ճշդութեամբ ասել, թէ որքան հայ կայ այդ երկրում: Թիւրք կառավարութեան տեղեկութիւնները այդ մասին չափազանց անվստահելի են ու անճիշդ, որովհետև թւերն ու փաստերը յարմարցնում է իր քմահաճոյքին: Մնում է օտար հեղինակների ուսումնասիրութիւնները, սակայն դըրանք էլ միատեսակ եզրակացութեան չեն յանգում:

Այսպէս, օրինակ, հայերի թիւը Թիւրքիայում հասնում է.

Ըստ Տրոտտէրի	780,750
» Րօլէն Ժակմէնի	1 330,000
» Քինէի	838,126
» Գեներալ Զէլէնոյի	913,875
» Պրոֆ. Զուպանի	921,000
» " Վամբէրիի	1,131,125

» Լինչի 1,058,484:

Ուբենի ամենաշատը 1,330,000-ի է հասնում:

Դժբախտաբար հայկական աղբյուրներն էլ ցանկալի պատասխան չեն տալիս և գարձեալ հակասում են միմեանց: Այսպէս, օրինակ. պ. Մ. Ա. Թ.-ի *) կազմած ցուցակով Թիւրքիայում 1,150,000 հայ կայ, իսկ Կ. Պոլսի պատրիարքարանի տեղեկութիւններով – 2,500 000.

Որքան էլ լաւատես լինենք, բայց և այնպէս դժւար է ենթադրել, որ Թիւրքիայում մէկուկէս միլլիոնից աւելի հայ լինի:

Սակայն այդքանն էլ բաւական խոշոր ույժ է մի ժողովրդի քաղաքակրթութիւնն ապահովելու համար:

ՀԱՅԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Վիճակագրական վերջին տեղեկութիւնների համեմատ. (առ 1 յուն. 1914 թ.) հայերի թիւը Կովկասում հետևեալ պատկերն է ներկայացնում:

*) «Հայերն ու նրանց դրացիները»:

Երևանի	597,219	Սև ծովեան	16,758
Կարսի	113,918	Թիֆլիսի	394 015
Բաթումի	20,124	Գանձակի	396,815
Քութայիսի	7,646	Դաղստանի	4,830
Բագուի	123,476	Զաքաթալ.	2,902

Ամբողջ Անդրկովկասում՝ 1,685.935:

ՀԱՅԵՐԻ ԱՊԱԳԱՆ

Պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ պետութիւններն ու կառավարութիւնները առաջ են գալիս և նորից անհետանում, բայց դեռ չէ եղել մի ազգ, որ ոչնչացած լինի, եթէ միայն ենթարկւած չէ ինքնամոռացութեան և ինքնասպանութեան:

Մի այնպիսի ազգութիւն, որպիսին հայկական ազնիւ ազգն է, որ ոչ միայն փառապանծ անցեալ ունի, այլ և իսկապէս թանկագին երկերով հարուստ գրականութիւն, չէ կարող ոչնչանալ, այլ ընդհակառակը՝ ինքնագիտակցութեամբ և ինքնավստահութեամբ սպասել իր վերջնական ազատութեան օրերին: Եւ իսկապէս, մի նշանաւոր ազգ է հայութիւնը: Ո՞վ գիտէ, գուցէ նա մի զօրեղ տիրապետող լինէր,

եթէ հին դարերի ընթացքում իր արեւելեան և հարաւային հարեւանների կուլտուրայի հոսանքին միանար:

Սակայն նա կրակապաշտութեան ու կիսալուսնի փոխարէն խաչը ընտրեց: Խաչը բերեց նրա համար բազմաթիւ հալածանքներ ու տանջանքներ: Բայց դա ծառայեց իբրև մի բուժիչ միջոց հոգեկան ազատութեան:

Հայկի ազնիւ զաւակներ, Խաչի միջոցով է, որ դուք մեր եղբայրն էք դարձել և արեւելեան քաղաքակիրթ ազգութիւնների կարգն էք դասուել:

Եւրոպան չէ կարող ձեզ մոռանալ: Եւ քանի որ իսլամական արեւելքը հիւծւում ու քայքայւում է, որովհետև նա չկարողացաւ ժամանակակից քաղաքակրթութիւնը ընդգրկել ու մշակել—մարսել, հայեր, ես այդ կարող եմ ապահովապէս նախօրօք ասել, պիտի ծաղկեն նոր կեանքի համար, որովհետև նրանց նոր քաղաքակրթութիւնը ընդունելու համար հողը արդէն նախապատրաստուած է և ինչպէս նրանց նորագոյն գրականութիւնն է ցոյց տալիս, այդ քաղաքակրթութիւնը աջողութեամբ զարգանում է:

Հայերը պէտք է լինեն այն, ինչ որ բնութիւնն ու աստուածասիրութիւնն է որոշած։ Դր. Ֆրիդրիխ Միլլէր

ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

ԱՐԻՒՆՈՏ ՅՈԲԵԼԵԱՆ

Հայկական ջարդերի քսանամեակի առիթով

(1896—1916)

«Յառաջ, ինչ հոգ որ ընկնողներ կան. մահը ոչինչ է, կեցցէ գերեզմանը, եթէ հայրենիքը կենդանի դուրս պիտի ելնի նրանից: Յառաջ»:

Կեանքի անախորժ ծամածռութիւններէն մէկն ալ, թէ ճակատագրի դաժան հեգնանքներէն մինը, որ այսօր մենք ի տես ծխացող, արիւնաքամ ու մարդակուրկ հայ-

րենիքին ենք ստիպուած անդրադառնալ՝ մեր կորուստներին, վերյիշել անհաւասար պայքարին մէջ ընկած հերոսներուն, և կամ հայրենիքի 300 հազար ողջակէզներուն…

Քսան երկար ու ձիգ տարիներ հայութիւնը անց է կացրել յուսի աղօտ ճառագայթների ու արիւնի վտակներուն մէջ այն օրից, երբ մահու և աւերածութեան զարհուրելի հրեշտակը իր թևերը տարածեց ամբողջ Հայաստանի վրայ։

Քսան տանջալից տարիներ են անցել այն օրից, երբ արիւնարբու մարդ-գազանը, քաջալերուած հանդիսատեսի դերում կանգնած դիպլոմատիայի կողմէն, ազատ ու համարձակ իր արիւնաներկ թուրը իջեցրեց հայութեան գլխին…

Ու երբ հարիւր հազար դիակների բուրգերն ու արիւնի վտակները եղան պատասխան՝ հայ ժողովրդի մարդավայել կեանքի պահանջին…

Արիւն արցունքի հեղեղներով ոռոգեց առանց այն էլ արիւնով սնուած հայրենիքը…

Սրի ու հրի բաժին դարձան Զուլումի Երկրի շէն գիւղերն ու քաղաքները, ու այրուող դիակների հոտով լի ծուխը՝ վրէժի

ու անէծքի մրմունջներուն հետ նորէն պալան-պալան վեր ելաւ ծածկելու անզգայ երկնքի երեսը, աւելի ևս սևացնելով առանց այն էլ սև ու մահագուշակ Հայոց Երկինքը…

Զարագուշակ, սոսկալի տարի էր այդ տարին…

Ու հազարաւոր սգաւոր մայրեր ողբացին իրենց սիրասուն զաւակները։

Հազարաւոր մատղաշ կեանքեր սուրբ վրէժի երդումը արեցին…

Չտեսնուած ոճիր էր կատարուածը… Ու երկինքն անգամ սոսկաց…,

Հրճւում էր միայն սուլթանական արիւնաներկ գահին բազմած Մեծ Մարդասպանը։

Վերջապէ՞ս…

Վերջապէս հասած կը կարծէր իր նըպատակին, մեռցուցած կը կարծէր հայութիւնը, որ այնքա՜ն ահ ու սարսափ էր պատճառել իրեն։

Բայց սխալուած էր նա, ու անկարելին կարելի ենթադրել…

Հեշտ բան չէր սպանել մի ժողովուրդ, որ դարեր շարունակ իր հուժկու կուրծքով

կարողացել էր դէմ դնել իր բազմաթիւ ու բազմալեզու դաժան թշնամիներուն։

Մերթ Աստծուն աղօթելով, մերթ դաժան ճակատագիրն անիծելով՝ Հայը փարած իր օրօրին, իր օճախին, ստրկութեան ծանր լուծը անմռունչ կրելով, անցել էր դարերի անվերջ շարքերէն, պահպանելով իր հոգու արիութիւնն ու ազգային վեհութիւնը...

Ու անհամ մարդ-բորենիները չէին, որ պիտի կարողանային սպանել այդ եզակի մարտիրոս ժողովուրդը։

Այո, մեծ սխալ գործեց արիւնաներկ Սուլթանը...

Հարուածը շատ էր ծանր, զոհերը շատ էին բազմաթիւ, շատ էին թանկագին...

95—96 Թ. ի ջարդերը արթնացրին հսկայ-ժողովրդին իր ստրկական քնից։

Ու մարդկութեան լաւագոյն մասը յուզմունքի ու հիացումի զգացմունքով հանդիսատես եղաւ այդ սարսուռ կարծուած ժողովրդին յեղափոխական երկունքին։

Սոսկաց Հրէշ-Սուլթանը։

Եւ Հայրենիքի արիւնլուայ աւերակների մայր խորքերէն դուրս եկան վրէժով

լեցուած, հայրենիքի վէրքերով խոցուած հայդուկային խմբերը...

Ու յուսահատական ճիչերի, լաց ու կոծի միջից աւելի ու աւելի ստէպ սկսին լսել ֆիդայու սրտապնդիչ ու ահեղ կոչիւնները...

Եւ Հայրենիքէն փախչող թուլամորթների փոխարէն, հայութիւնը շարան, շարան զուլումի երկիրը ուղարկեց իր լաւագոյն զաւակները, կորուստէն փրկելու իր լաւագոյն սրբութիւնները։

Ու հեռու քաղաքակիրթ մարդկութեան աչքերէն, Ալբիոնի նաւերուն համար անմատչելի լեռնագագաթներուն վրայ հայութիւնը սկսեց իր անհաւասար պայքարը՝ իր ազատամարտը։

Ու այդ մարտին մէջ նա զոհեց շա՛տ ու շատ հազար հազար թանկագին կեանքեր, որ գերմանական անամօթութիւնը պօմէրանեան զինուորի ոսկրներուն հետ անգամ չուզեց հաւասարեցնել։

Մարդկային պատմութիւնը չի ունեցել աւելի դաժան էջ։

Բայց չը յուսահատուենք... Հիւանդ մարդը իր օրհասական գալարումների մէջն է...

Ու այսօր, նորէն արիւնոտուած ու յօշոտուած Հայրենիքէն հեռու վտարանդի ծնկաչոք խոնարհի հայ ժողովուրդն, այն 300 հազար Ողջակեզներուն սուրբ յիշատակին առաջ, որոնք իրենց արիւնով ու յօշոտուած դիակներով քո ազատամարտիդ սկիզբը դրին ու ստրկական քնից արթնանալու պատճառը դառան..

Փա՛ռք նրանց յիշատակին…

Ա՜հ, գիտեմ յոգնած ես ազգ իմ բազմատանջ: Գիտեմ, յոգնած, տանջուած ու լքուած է՝ հոգիդ անվերջ արիւնէն, անվերջ աւերածութիւններէն… Գիտեմ, ծանր, տանջալից էր անցածդ ճամբէն… Բայց յուսահատուել մեղք է՝ քայլէ՝ աշխուժով ու յոյսով լի քայլէ նորէն դէպի արիւնաքամ Հայրենիքդ, որի իւրաքանչիւր անկիւնը արիւն արցունքով ցողեցիր:

Մօտ է արշալոյսը, մօտ է ազատութեան ու վերածնութեան սրբազան օրը:

Բ. Թոփչեան

ԳԵՂԱՐԻ ԵՍՏԱԿԱՆ

Գ Ե Ղ Ա Ր Ի Ե Ս Տ

(Տարրական տեսութիւն)

Արուեստ, գեղեցիկ արուեստ կամ գեղարուեստ միեւնոյն նշանակութիւնն ունին. վերջինս աւելի գործ է ածւում որպէս հաւաքական անուն բոլոր արուեստների. օրինակ՝ գիտութիւն և գեղարուեստ, գրականութիւն և գեղարուեստ, գեղարուեստի պատմութիւնը, գեղարուեստի տեսութիւնը, փոխանակ ասելու արուեստների տեսութիւնը, բայց երբ խօսքը վերաբերում է արուեստներից որևէ մէկին, այսինքն գեղարուեստի մի ճիւղին, գրում ենք բեմական արուեստ (փոխանակ բեմական գեղարուեստ), ճարտարապետական արուեստ, տաղաչափական արուեստ, նկարչական արուեստ և այլն:

Արուեստները թւով համարւում են 5. այսինքն գեղարուեստն ունի 5 գլխաւոր

ճիւղ, որոնք են՝ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ և ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ: Առաջին երկուսը, այսինքն բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը մօտ են միմեանց և կազմում են մի առանձին խմբակցութիւն և կոչւում են ձայնական կամ հնչիւնական արւեստներ. միւս երեքն էլ, այսինքն նկարչութիւնը, ճարտարապետութիւնը և արձանագործութիւնը միմեանց հետ նկարչական մօտիկութիւն ունին, կազմում են այլ խմբակցութիւն և կոչւում են պատկերաւոր արւեստներ: Առաջին խմբի արւեստները մենք լսում ենք, երկրորդ խմբինը տեսնում: Մեր զգայարաններից առաջինում լսողութիւնն է դեր խաղում, երկրորդում՝ տեսողութիւնը: Կոյր մարդը կարող է բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը լսել և հասկանալ աչքերն առողջ մարդու չափ. բայց նա չի կարող տեսնել և դիտել պատկերներ, շէնքեր և արձաններ, ինչպէս որ խուլ մարդը չի կարող լսել երգ ու երաժշտութիւն: Բացի այս, առաջին խմբի արւեստները իրական նիւթ (ատաղձ, քերեստէ, մատերիալ) չունին, այսինքն բա-

նաստեղծը կամ երաժիշտը պէտք չունի որ և է նիւթի, ատաղձի, որ այդ նիւթից ստեղծագործէ իր երկերը. նրանց նիւթը բառեր և հնչիւններ են և նրանց ստեղծագործ աշխատանքները կարող են բանաւոր աննիւթ կերպով յօրինւել և տարածւել. ապա երբ գրի են առնւում քերթւածներն ու եղանակները, նրանք արդէն պատկանում են գրականութեան: Ջութակահարի կամ դաշնակահարի նուագածութեան համար անհրաժեշտ են ջութակը կամ դաշնամուրը. բայց այդ նւագարանները միջոց են միայն արտայայտելու արւեստագէտի շնորհքը: Նւագածութիւնից յետոյ գործիքները մնում են նոյնը և կարող են ծառայել ուրիշ երաժիշտների. մինչդեռ երկրորդ խմբին պատկանող արւեստներին անհրաժեշտ են անմշակ, կոպիտ նիւթեր, որ այդ նիւթերից արւեստագէտն յօրինի կամ ստեղծագործէ իր աշխատանքը. օրինակի համար նկարչին անհրաժեշտ են պաստառ և ներկեր, ճարտարապետին քար, փայտ, երկաթ, կիր ցեմենտ և այլն, արձանագործին կաւ, մարմարիոն, գրանիտ, պղինձ և այլն:

Բացի այս արուեստներից գեղարուեստ ունի և այլ ճիւղեր որոնք կազմուած են մեկ ծանօթ այս կամ այն արուեստների միացումից. այդ բաղկացական արուեստների խմբերին պատկանում են բեմական արուեստը (նեղ մտքով դրաման) կամ թատրոնը օպերետը, պարը կամ բալետը։ Այս կարգի արուեստներին գլխաւոր նիւթ է ծառայում ինքը մարդը. այսինքն արուեստագէտը իր ստեղծագործութեան նիւթ է ծառայեցնում ինք իրան, իսկ միւս արուեստները իրանց խառնուրդով գալիս են միայն լրացնելու կամ զարդարելու այդ արուեստը։ Օրինակ դրամատիկ արուեստը, թատրոնը միացումն է բանաստեղծութեան (դրաման, պիեսը) նկարչութեան (բեմյարդարութիւնը և միմիկան) արձանագործութեան (դերասանի խաղը և շարժումը)։ Օպերան միացումն է բանաստեղծութեան (նիւթը կամ լիբրետտօն) երաժշտութեան (կոմպօզիցիան և օրքեստրովկան) և բեմական արուեստի։ Բալետը կամ պարը առանձին վերձրած, միացումն է երաժշտութեան և արձանագործութեան (նւագածութեան և պարողների պլաստիկ շարժումները)։

Արուեստներից իւրաքանչիւրն ունի իր

ստորաբաժանումները – բանաստեղծութիւնը բաժանուած է երեք գլխաւոր մասերի՝ վիպական (էպօս), քնարական (լիրիք) և թատերական (դրամա)։ Երաժշտութիւնը բաժանուած է երկու գլխաւոր մասերի ձայնական (վօկալ) և նւագարանային (ինստրումենդալ). Նկարչութիւնը բազմաթիւ ճիւղեր ունի, որոնցից գլխաւորներն են դիմանկարչութիւն (պօրտրետ), կենդանային նկարչութիւն (մանր), տեսարանային նկարչութիւն (պէյզաժ) և այլն։

Ճարտարապետութիւնը նոյնպէս բաժանւում է մի քանի գլխաւոր ծիւղերի, որոնցից միայն քաղաքացիական ճարտարապետութիւնն է մտնում գեղարուեստի մէջ, որովհետև ունի գեղեցիկ, գեղարուեստական հիւսւածք. Մնացած հիւղերը զինուորական, ճանապարհների և այլն, դուրս են գեղարուեստից և մտնում են ճարտարարուեստի (ինժիներական) մասի մէջ։ Արձանագործութիւնը բաժանւում է երկու գլխաւոր մասերի՝ ծեփելու. կարելու և քանդակելու բաժինների։ Ծեփում են փափուկ նիւթերից, մոմից պլաստեսինից և կաւից. ու երբ պատրաստ է լինում, նրան ծառայեցնում են որպէս կաղապար և ձուլում են

մետաղից. իսկ քանդակում են կարծր նիւթերից մարմարիօնից, գրանիդեայ և այլ տեսակի քարերից։

Մեր կազմած համառօտ տեսութիւնը գեղարուեստի արտաքին տեխնիքական հասկացողութեան մասին է։ Գեղարուեստի ներքինը, նրա էութեան մասին, նրա ինչ լինելը, նպատակը, նրա փիլիսոփայութիւնը, գեղեցիկ և ճաշակի գաղափարը, բոլորը միասին վերցրած, կազմւած մի առանձին վերացական գիտութիւն որ կոչւում է գեղագիտութիւն (էսթետիկա), սակայն այդ մասին տարրական գիտելիքներ կտանք ուրիշ անգամ։

Գ. Լեւոնեան

Թիֆլիս, 15 սեպտ. 1916

ՕՐՈՒԱՅ ՀԱՐՑԵՐ

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՍՊԱՌՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ո՞ւմ յայտնի չէ, թէ որքան դժւար է գոյութեան կռիւը, ով չգիտէ, թէ որքան ծանր է օրական ապրուստ ձեռք բերելը։ Եւ այդ դժւարութեան ու ծանրութեան լծի տակ տքնում են հազարաւոր ու միլիոնաւոր մարդիկ, տքնում է ժողովրդի մեծամասնութիւնը։

Ի՞նչ անել. ումից օգնութիւն խնդրել, որտեղ փրկութիւն գտնել։

Մեր ժամանակներում հրաշքներ չեն կատարւում. երկնքից մանանայ չի թափւում. ունեւոր մարդիկ էլ չափազանց քարասիրտ են, չափազանց եսական։

Ի՞նչ անել։

Ահա մի ծանր հարց, որի լուծումը կարելի է գտնել միայն համերաշխութեամբ, փոխադարձ օգնութեամբ։

Ազուր չէ ասւած, թէ «թշւառին միշտ թշւառն է կարեկից», և գործերն ցոյց են տալիս, որ միացած

ուժերով կարելի է շատ բաներ իրագործել, շատ բարիքներ առաջացնել: Այն, ինչ որ անհնարին է անհատի համար, շատ հեշտ իրագործելի է դառնում խմբերի, հաւաքական ուժերի համար: Ահա հէնց դա է պատճառը, որ քաղաքակիրթ երկրներում, զարգացած ժողովրդի մէջ, այնքան աճում, բազմանում են պէսպէս կազմակերպութիւնները պէս-պէս նպատակներով:

Այդ տեսակ կազմակերպութիւնների շարքին են պատկանում և **սպառող ընկերութիւններ**, որոնք կամաց կամաց զարգանում են նաև Ռուսաստանում, հովանաւորութիւն գտնելով կառավարութեան կողմից:

Սպառող ընկերութիւն:— Դա մի կազմակերպութիւն է սեփական խանութով, որ ձգտում է իր անդամներին էժան գնով լաւ ապրանքներ մատակարարել՝ ուտելիք, հագնելիք և այլ հարկաւոր առարկաներ: Բայց այդ դեռ բոլորը չէ. նա ազատում է իր անդամներին վաճառականների շահագործումից և հրնարաւորութիւն է տալիս փոքրիկ խնայողութեամբ սեփականատէր դառնալ: Սակայն այդքան գեղեցիկ դեր կատարելու համար սպառող ընկերութիւնը պէտք է կազմակերպուած լինի **կենսունակ** հիմերի վրայ, խելացի ձևով, նպատակայարմար միջոցներով:

Հակառակ դէպքում սա կարող է հիասթափեցնել իր հիմնադիրներին:

Սպառող ընկերութիւնը պէտք է լինի հանրամատչելի: Այդ պատճառով էլ պէտք է բաժինները (պայեր) էժանագին անել՝ օր. 3—5 րուբլի և գումարը վերցնել ոչ թէ միանուագ, այլ մաս-մաս:

Անգլիայում ընդունուած է բաւական խելացի մի ձև. այդտեղ սպառող ընկերութեան անդամ դարձող իւրաքանչիւր անհատ սկզբում վճարում է միայն մի շիլլինգ, այսինքն 40—50 կ., իսկ մնացածը մաս-մաս: Շատ դէպքերում էլ յետագայ վճարումները դուրս են գալիս անդամին հասանելիք շահից—դիվիդէնտից, այդպիսով մարդ կարող է սպառող ընկերութեան անդամ, խանութի բաժնետէր դառնալ:

Ընկերութեան բոլոր անդամները պէտք է ունենան հաւասար իրաւունքներ, որպէսզի դրանով զարգանայ ընկերական համերաշխութիւնը և վերանայ նրա դասակարգային նախանձը ու տարբերութիւնը:

Կանայք էլ պէտք է հաւասար իրաւունքներ վայելեն տղամարդկանց հետ, որովհետև նրանց ձեռքն է տան ամբողջ տնտեսութիւնը, գլխաւորապէս նրանք են հարկաւոր նիւթեր գնողը կամ գնել տուողը, հետևապէս նրանք աւելի շատ գործնական օգուտ կարող են տալ. քան թէ տղամարդիկ: Իբրև ապացոյց կարելի է վերցնել Անգլիան, որ կանայք անգին դեր են խաղում սպառող ընկերութիւնների գործերում:

Բոլոր անդամները հաւասար ձայներ

պիտի ունենան, չնայելով բաժինների քանակութեանը։ Եթէ դրա հակառակը լինի, այսինքն եթէ շատ բաժին ունեցողը շատ էլ ձայն ունենայ, այն ժամանակ ընկերութեան գործերը վերջիվերջոյ կը կենտրոնանայ մի քանի հարուստների ձեռքում. միւս անդամները կկորցնեն իրենց հետաքրքրութիւնը, առաջ կը գան դժգոհութիւններ, որոնք կարող են նոյնիսկ քայքայման ենթարկել ընկերութիւնը։

Զուտ արդիւնքը պէտք է բաժանել գնած ապրանքի համեմատ, այսինքն արդիւնքից որոշ գումար պէտք է յատկացնել պայերին իբրև դրամագլխի տոկոս, մի մասը պահեստի գումար դարձնել, իսկ մնացորդը բաժանել այնպէս, որ ընկերութեան խանութից շատ ապրանք գնողը շատ էլ փող ստանայ։ Օրինակ, եթէ անդամներից մէկը տարուայ ընթացքում 100 ր. ապրանք գնել, իսկ միւսը 50 ր., այդ դէպքում առաջինը երկու անգամ աւելի բաժին պէտք է ստանայ զուտ արդիւնքից։

Ապրանքը պէտք է ծախել միայն կանխիկ փողով, վարկով (կրէդիտով) կամ ուրիշ խօսքով «նիսիա» տուած ապրանքը կորած պէտք է համարել, եթէ չկայ վստահելի երաշխաւորութիւն։ Եթէ սպառող ընկերութիւնը այդ ճանապարհի վրայ կանգնի, շուտով իր ունեցածը կը բաժանէ սրան-նրան և ինքը կը մնայ առանց դրամագլխի, որով և ստիպուած կը լինի իր գոյութեան վրայ խաչ դնել։ Իւրաքանչիւր

սպառող ընկերութեան խանութի վրայ, իրաւացի կերպով նկատում է պրոֆ. Օգէրովը, պէտք է նշագրուած լինի հետևեալ նշանաբանը. **վարկով առուտուր անելը կարող է կործանել ընկերութեան գոյութիւնը։**

***

Գեղեցիկ, գուցէ բացականչեն ընթերցողներից շատերը, բայց գործի հէնց սկզբում հարկաւոր է դրամագլուխ. որտեղից ձեռք բերել, հարկաւոր է իշխանութեան թոյլտուութիւն—ինչպէս և ումից ստանալ։ Այո, իրաւացի հարցեր են դրանք, բայց հեշտ լուծելի։ Նախ մարդ որքան էլ որ աղքատ լինի կկարողանայ շաբաթական մի քանի կոպէկ խնայել և 3—5 ր. դրամագլուխ կազմել և երկրորդ՝ համերաշխ ընկերակցութեամբ կարելի է առանց դրան էլ գործը գլուխ բերել,

Ահա թէ ինչպէս.

Սպառող ընկերութիւնը կազմել ցանկացող մարդիկ, պայմանաւորում են մի կամ մի քանի վաճառականների հետ, որպէսզի սրանք սովորականից պակաս զեղչով բաց թողնեն իրենց ապրուստի համար անհրաժեշտ նիւթեղէնները, իսկ իրենք պարտաւորւում են պայմանաւորուած ժամանակի ընթացքում սպառող այդ ապրանքները. կանոնաւոր և մաս-մաս վճարելով համապատասխան արժէքը։ Հէնց այդ զեղչի գումարն էլ դառնում է նրանց սեփական խանութի

սկզբնական դրամագլուխը։ Այսինքն պայմանաւորած քանակութեամբ ապրանքներ սպառելուց յետոյ, ընկերութեան անդամները վաճառականի մօտից վերցնում են համապատասխան գեղչը և դրանով բաց անում սեփական սպառողական խանութը։

Այդ ձևը գործադրել են շատ ընկերութիւններ և դրական հետևանքի հասել։ Հեռու չգնանք, օրինակը վերցնենք հէնց Ռուսաստանի կեանքից։ Մոսկվայի «Փոխադարձ օգնութեան ընկերութիւն»-ը այդ ձևով մի տարուայ ընթացքում ստացել է 3000 ր. գեղչ։ Նոյն ճանապարհով է հիմնել Պետրոգրադի «Խնայողութիւն» անունով սպառող ընկերութիւնը, որը այնքան արագ կերպով զարգացրել է իր գործունէութիւնը։

Առաջ բերածից պարզ երևում է, որ բարի ցանկութիւնն ու համերաշխութիւնը կարող են հարթել փողային հարցի դժւարութիւնը։ Մնում է ուրեմն պատշաճաւոր թոյլտւութիւն ստանալը։ Դրա համար ընկերութեան հիմնադիրները հաւաքական ստորագրութեամբ տեղական նահանգապետի միջոցով խնդիր են տալիս ներքին գործերի մինիստրի անունով հաստատութեան ներկայացնելով իրենց մշակած կանոնադրութիւնը։ Գործը հեշտացնելու և արագացնելու համար աւելի լաւ է ներկայացնել արդէն հաստատուած մի կանոնադրութիւն՝ ապագային թողնելով նրա ցանկալի փոփոխութիւնները ու լրացումները։

Այդ ճանապարհով, հաստատութիւնը ստանալուց յետոյ, ընկերութիւնը կարող է սկսել գործը, բայց միշտ բարձր պահելով հաւասարութեան և համերաշխութեան վեհ դրօշակը։ Դրանք են եղել ընկերութեան հիմնաքարը. դրանք էլ պէտք է դառնան նրա գոյութեան շարժիչն ու ոյժը։

† Ե. Թոփչեան

ԿՈՕՊԵՐԱՑԻԱՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Կոօպերացիա—ահա մի հարց, որի մասին շատ է գրուել, խօսուել. բայց, դժբաղդաբար, շատ քիչ բան է արուած, որ աւելի ցայտուն կերպով զգացւեց այս ներկայ համաշխարհային պատերազմի օրերին։ Խօսքս ոչ թէ Ռուսաստանի գոնար Կովկասի մասին է, ինչպէս պրոֆեսոր Օզերովը իր մի դասախօսութեան մէջ անուանեց, այլ ամբողջ Ռուսաստանի։

Ի՞ՆՉ Է ԿՈՕՊԵՐԱՑԻԱՆ

Կոօպերացիա անուան տակ պէտք է հասկանալ մի քանի մարդկանց գործակցութիւնը, որով հասնին մի ընդհանուր նպատակի։ Տնտեսական ասպարէզում մարդիկ կարող են միանալ կամ համախմբուած արտադրելու, կամ համախմբուած ձեռք բերելու

սպառելու մթերքներ, կամ թէ՝ վերջապէս հասնելու այդ երկու նպատակին միաժամանակ։ Գործակցութիւնը արտադրութեան մէջ կարող է կայանալ նրանում, որ մի քանի հոգի միաժամանակ կատարում են միացած ուժով մի որ և է գործ (օր. արտ հնձելը, խոտ հարելը և այլն) կամ նրանում որ նրանք մասնակցում են միևնոյն գործում մէկը միւսից յետոյ, պատահում են աշխատանքներ, որոնց վերջանալու համար պահանջւում է ամբողջ սերունդներ (օր. ճահիճների չորացում, գետերի հոսանքի կանոնաւորումը, և այլն)։ Կոօպերացիան կամ գործակցութիւնը լինում է պարզ և բարդ. I-ին նա է, որ մի քանի հոգի օգնում են իրար մի գործ կատարելու համար (օր. մի ծանրութիւն բարձրացնելը, խոտ հարելը, անտառահատելը և այլն)—հասարակ գործակցութիւն է. II-րդ նա է, որ մի քանի հոգի օգնում են իրար, կատարելով տարբեր աշխատանք (օր. կազմատանը մէկը ծալում է, միւսը կարում է, երրորդը կտրում է, չորրորդը՝ ծեպյում, իսկ բոլորը միասին գիրք են կազմում).—դաբարդ գործակցութիւն է։ Կոօպերացիան և արտադրութիւնը։ Արտադրութեան մէջ առ

հասարակ գործակցութիւնը մեծ օգտակար դեր է խաղում, քանի որ աւելացնում է բանւորի աշխոյժը, եռանդը, մանաւանդ, երբ նայում է դիմացի բանւորին ու աւելի լարում ուժերը։ հինգ բանւորը հինգ ժամում աւելի շատ գործ կը կատարեն միացած, քան մի բանւորը 25 ժ.։ Այո, հսկայական է օգուտը գործակցութեան արտադրութեան ասպարիզում. կան այնպիսի աշխատանքներ, որոնք պահանջում են շուտափոյթ կատարումն, (օր. ցանքի, հունձի ժամանակ) այստեղ օգնութեան է հասնում կոօպերացիան. գործակցութիւնը շատ դէպքերում էլ կրճատում է աշխատանքը. այսպէս, օր. որպէսզի 100 բանւորի համար հաց թխէ, հարկաւոր է քիչ աշխատանք, քան թէ 100 բանւոր առանձին-առանձին վառել, հունցել և այլն, իսկ միասին՝ մի անգամ, մի տեղ վառել և թխել։ Բացի այդ, երբ աշխատաւորները միացած են լինում, դժւար է նրանց պակաս վարձով աշխատացնել, քանի որ մէկը միւսին նայելով չի զիջի և այդպիսով էլ, փոխանակ բանեցնողը շահագործելու, բանւորը կը շահի։ Հէնց այդ շահագործման խնդիրն էր, որ առաջ բերեց

գործակցութեան գաղափարը, որ ծնունդ առաւ Անգլիայում։

Մինչև կոօպերացիայի առաջ գալը XIX դարի սկիզբները չը կար գործակցութիւն, քանի որ դեռ կանոնաւոր զարգացած չէր արդիւնաբերութիւնը՝ նոր-նոր էր առեղծւել երկու միմիանց հակառակ՝ դրական և բացասական՝ դասակարգեր։

Այդ դասակարգերի հակառակ շահերն էին, որ միջոց գտան կռւելու շահագործման դէմ։ Մինչև մեքենաների առաջ գալը, արդիւնաբերութեան զարգանալը՝ մարդիկ իրենք էին արտադրում և իրենք էլ սպառում. այստեղ չկար՝ ոչ շահագործում և ոչ էլ խարդախութիւն։ Բայց երբ տնայնագործութիւնից անցաւ արդիւնաբերութիւնը մեծ ֆաբրիկաների և գործարանների շուկան, այն ժամանակ էլ ծնունդ առաւ շահագործող և շահագործւող դասակարգեր՝ գործարանատէրեր և բանւորներ։ Սկզբում, քանի դեռ գիտութիւնը զարգացած չէր, նրանք համերաշխ էին ապրում. համարելով այդ բոլորը բնական և անհրաժեշտ, բայց հետզհետէ սկսեց առաջ գալ զօրեղ գիտութիւնը նաև այդ ասպարէզում։ Բառասու-

նական թւականներին Ռոբերտ Օուէն սկըսում է Անգլիայի քաղաքներից մէկում Ռոչշիլդում գործարան հիմնել, որտեղ աշխատեցնում է կոօպերատիւ բանւորներ 8 ժամ, փոխանակ 14—16 ժ., տալիս նրանց բոլոր յարմարութիւնները թէ բնակարան, թէ լողարան, թէ ընթերցարան և թէ բոլոր անհրաժեշտ միջոցները, մարդավարի ապրելու համար։ Եւ շնորհիւ իր այդ բարեացակամ վերաբերմունքին, բանւորները աւելի են արտադրում 8 ժամում, քան ուրիշ գործարաններում 14—16 ժ.։ Շատ պարզ է, որ միւս գործարանատէրերն էլ սկսում են նոյն միջոցին դիմել, որպէս զի շահեն այդ միջոցից, և այսպիսով սկսւում է, ծնունդ է առնում, շնորհիւ այդ մի հատիկ մարդու՝ Ռոբերտ Օուէնի (անգլիացի), կոօպերացիան։ Այնպիսի ույժ է այդ, որի դէմ անզօր են կըռւելու միլիոնաւոր մարդկանցով, հարիւր հազարաւոր թնդանօթներով։ Այս ճշմարտութիւնը աւելի ես հաստատւեց ներկայ համաշխարհային պատերազմին։

Պրօֆեսօրների կարծիքը.—Դեռ պատերազմը նոր էր սկսւել, երբ մեր յայտնի տնտեսագէտ-պրոֆեսորները յայտնեցին ի-

րենց կարծիքը Գերմանիայի տոկունութեան և պատերազմի տեողութեան մասին։ Նրանց կարծիքով, որոնցից մէկն էլ Կիևի համալսարանի պրոֆ. Վօբլըյն էր, Գերմանիան միայն 3 ամիս կարող է պատերազմ վարել, հացի պակասութիւնը կը ստիպի նրան հաշտութիւն խնդրել, որովհետև Գերմանիան Ռուսաստանից էր ստանում հաց։ Տարաբախտաբար մենք ականատես ենք Գերմանիայի աշխարհաւեր, երկրորդ տարին արդէն բոլորած պատերազմին և ոչ թէ 3—4 ամսւայ վախճանին։ Ի՞նչ է պատճառը, որ այդպէս երկար դիմացաւ Գերմանիան և չարդարացրեց մեր գիտնականների կարծիքը։ Պատճառը, որ նա ունի հզօր ոյժը—կօօպերացիա: Այսօր ամբողջ Գերմանիան կօօպերատիւ միութիւնների ցանցով է պատած, որոնց գործունէութեան շնորհիւ նա տանում է իր պատերազմը առանց ներքին դժգոհութեան, տնտեսական հողի վրայ։

Գերմանիան և կօօպերացիան

Շնորհիւ Գերմանիայի կօօպերատիւ միութիւնների՝ ամեն բան կարգով ու չափով է, սովորական գներից հազիւ քիչ աւել։ Այսօր ամբողջ պետութեան ժողովուրդը

ինչպէս մի ընտանիք, կապւած է միութեան —կօօպերացիայի կապով և ամեն օր, ամեն մարդ ստանում է իր ուտեստի պաշարը շատ չափաւոր կերպով։ Հեշտ բան չէ 60—70 միլիոն ժողովրդին այդ ձևով կառավարել, բայց կօօպերացիան այնպիսի ոյժ է, որ կարող է նոյնիսկ ամբողջ աշխարհը կապել—կառավարել։ Չը լինէր կօօպերացիան, այդ հզօր ոյժը, Գերմանիան վաղուց էր ջախջախւած, վաղուց ոչնչացւած՝ հզօր Ռուսաստանի քաջարի զինւորների ձեռքով, Մեծն Անգլիայի հզօր նաւատորմիղի հարւածով, բայց ճւր է։ Որպէս զի ընթերցողին պարզ լինի, վերցնենք հացը, շաքարը, ձուն, որոնք միլիոնաւոր փութերով արտահանում էինք մենք, իսկ այսօր մեր երկրի մէջն է, բայց շաքարի սով է, հացի պակասութիւն է, պատճա՞ռ՝ որ մեր ժողովուրդը կազմակերպւած չէ կօօպերատիւ միութիւններով, ինչպէս Գերմանիան։

Ներկայ պայմաններում մանրավաճառներին չի կարելի մեղադրել թանգութեան մէջ, այլ նրանք են մեղաւոր, որ պահեստներում դարսած ունին հազարաւոր փութերով մթերք և օր-օրի գներն են աւելացը-

նում, ինչքան սրանք ցանկանայ։ Որքա՜ն ցաւալի է, որ մեր, սպառողների տնտեսական վիճակը կախուած է այդպիսի քմահաճոյքից՝ ուզենան էժան կանցկացնեն, չուզենան՝ թանկ։

Վերևում մենք յիշինք կոօպերացիայի նախահօր՝ Ռոբերտ Օուէնի անունը, որը 1844 թ. Ռոչշիլդում հիմնում է սպառողական խանութ ընդամենը երկու հարիւր րուբլով։ Նոյն տարուայ սեպտեմբեր ամսի 28-ին բացին անշուք փոքրիկ խանութը, որ միայն ծաղր յարուցեց հանդիսատեսներին։ Բայց անցաւ մօտ 11 տարի և այդ փոքր խանութը բաց արեց մի մեծ փուռ իր անդամներին հաց մատակարարելու 4 կոպ., փոխանակ 5 կոպ., բաց արին բաղանիք, ժողովարան, գրադարան, դպրոց իր անդամների երեխաների կրթութեան համար և, մի խօսքով, 200 ռ. սկսած գործը այնպէս ծաղկեց, այնպէս աճեց, որ 200 միլիոնի շրջանառութիւն ունեցաւ։ Իսկ այժմ, մի քանի հոգուց կազմուած միութիւնը տարածուել և հասել է մօտ մի միլիոն հոգու, իսկ շրջանառութիւնը մօտ 2 միլիարդի։

Ահա մի պատկեր, որ ցոյց է տալիս

թէ կոօպերացիան ինչ ոյժ է և թէ ինչու քաղաքակիրթ երկրներում՝ միլիոններով է հաշւում, իսկ մեզանում տասնեակներով։

Կոօպերացիայի նպատակը

Այո, շատ բարձր նպատակ ունի կոօպերացիան՝ մատակարարել թարմ, չը կեղծուած և էժան ապրանք։ Կոօպերացիայի նպատակն է զերծ պահել իր անդամներին շահագործումից՝ սովի, պատերազմի, համաճարակի և այլ դէպքերի ժամանակ։ Օրինակի համար վերցնենք շաքարը Ռուսաստանից գալիս է 14—25 կ., իսկ ծախւում է՝ 25—50 կ., բայց եթէ մենք ունենայինք մեր սպառողական խանութները—այն ժամանակ՝ 16—17 կ, աւել չէինք վճարել, քանի որ մեր օգտի համար է հիմնուած և ոչ շահագործման։ Նոյնպէս էլ ալիւրը, փութը 2 ռ. 10 կ., իսկ ծախւում է՝ 3 ռ. 80 կ., 4 ռ. 25 կ. և այլն։ Սրանից պարզ երևում է, որ ռուբլուն 30—40 % օգուտ ենք տալիս, իսկ ներկայիս այնպիսի ապրանքներ կան, որ 100—200 % ի- հասնում։ Բայց եթէ մենք ունենանք մեր սպառողական հիմնարկութիւնները, այն դէպքում բաւական է 15—20 %, որից մի քանի տարուց

յետոյ կը կազմւի լուրջ գումար, որը դարձեալ սպառողներինն է։ Այդ գումարը կը յատկացնեն նոր հիմնարկութեան, նոր ձեռնարկութեան և այդպիսով հետզհետէ կը մեծանայ փոքր գործը հսկայական արդիւնք տալով։ Ժողովրդի տնտեսական փրկութիւնը միակ կօօպերացիայի մէջն է, պէտի կազմակերպուել, պիտի ոչնչացնել շահագործումն, պէտ անհետացնել միջնորդներին, պէտ բնաջինջ անել արհեստական թանգութիւնը՝ տեղի տալով նորմալ. բարեխիղճ գների, համերաշխ, հանգիստ եղբայրական կեանքի։

Ներկայ համաշխարհային պատերազմը շատ ուժեղ կերպով զգացրեց կօօպերացիայի անհրաժեշտութիւնը տնտեսական կեանքում։

Այո, հարկաւոր է կազմակերպուել, որ ազատ լինենք քաղցից ու շահագործումից։

Ինչու ենք քաղցած կամ խմոր հաց ուտում—նրա համար, որ մենք մեր փուռը չունենք։ Մենք պէտ կազմակերպուենք։ Եթէ սրանից մի տարի առաջ հիմնած ունենայինք մեր ալրի պահեստները՝ այսօր կարիք չէինք զգայ ժամերով հերթի կանգնելու, խմոր, սև հաց ձեռք բերելու համար։

Մեզ կաթ են տալիս կէսը ջուր և բա-

ժակին 10 կոպ. վերցնում, այն ինչ 20 կ.
է գալիս, քանի որ ջուրը անփող է։

Այո, բաժակը 20 կ. կաթ ենք գործ
ածում, 1 ր. 50 կ. կարաք այն էլ կէսը
գետնախնձոր, որ փունտը 5 կոպ. է, ու-
րեմն անարատ կարաք է գալիս փունտը 2
ր. 97 կ.։

Բրինձը գալիս է բեռներով և թագցը-
նում են, որպէսզի աւելի թանգ գնով ծա-
խեն փունտը 40 կ. այն էլ չի ճարւում։

Իսկ թէ փունտին 50—60 կ. վճարեն,
իսկոյն թագցրածները դուրս կը բերեն,
վաճառքի կը հանեն։

Ձուն ծախւում էր (Թիֆլիսում) 5 կ.
հատը, սակայն տւին 4 կոպ., ձուն դեղի
համար էլ չէր ճարւում, որովհետև թագցը-
րին, քանի որ աւելով կը ծախեն։

Գնում ես դեղատուն հարցնում՝ քանի
է այսինչ բանը—20 կոպ., մի ուրիշ տեղ
հարցնում—40 կ., մարդ մնում է զարմա-
ցած։ Չնայելով որ զարմանալու բան չկայ,
մարդու քէփը այնպէս է ուզում, կուզես
առ, չես ուզէ՝ գնա։

Բայց եթէ ժողովուրդը ունենայ իր
փուռը, կաթնատունը, իր մանրախանութը,

իր դեղատունը՝ չես ուզի գնա, չեն տսի գիտենալով որ սպառողականներում էժան և ձեռնտու գնով կը լինի։ Ուրեմն կազմակերպվենք և ազատվենք շահագործումից։

Ա. Թոփչեան

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԶԵՄՍՏՎՕ

Պետական կեանքը ամենուրեք համոզել է բոլոր կառավարութիւններին, որ կենտրոնական կառավարութիւնը իր գործակալներով անկարող է վարել բոլոր տեղական գործերը։ Կառավարական պաշտօնեաները կապուած չեն տեղական ազգաբնակութեան հետ, անձնապէս շահագրգռուած չեն տեղական կեանքի բարգաւաճման մէջ. վերջապէս, կապուած չլինելով որոշ գաւառի կամ նահանգի հետ, նրանք չեն կարող բաւարար չափով իրազեկ լինել երկրի բազմապիսի կարիքներին։

Այդ պատճառով այն պետութիւնները, որոնք ձգտում են ընդհանուր բարեկեցութիւն և կուլտուրա տարածել երկրի բոլոր մասերում և խորշերում, հնարաւորութիւն

են տալիս առանձին շրջաններին, նահանգներին, գաւառներին և նոյնիսկ գիւղախմբերին իրենց սեփական նիւթական և բարոյական ույժերով բաւարարելու իրենց կարիքները և վարելու իրենց գործերը։

Այդպիսի ինքնավարութիւնները զանազան պետութիւններում ունին զանազան իրաւասութիւններ։ Այն երկիրներում, որոնք հասել են բարձր կուլտուրական աստիճանները, և ներկայացնում են աշխարհագրական, ցեղագրական և կուլտուրական տեսակէտից բարդ միաւորներ, մենք տեսնում ենք ամենալայն ինքնավարութիւններ։ Եթէ սրանք իրաւունք են ստանում ոչ միայն գործադրելու կենտրոնական կառավարութեան օրէնքները, այլև հրատարակելու սեփական տեղական օրէնքներ,—կոչւում են աւտոնոմ երկիրներ։ Այդպէս, աւտոնոմ են Անգլիայի բազմաթիւ գաղութներից շատերը Աւստրալիան, Նոր-Զելանդիան, Կանադան, Հարաւային Աֆրիկան, մասամբ Եգիպտոսը։ Օրէնսդրական ինքնավարութիւն, կամ աւտոնոմիա ունին, թէև աւելի նեղ սահմաններում, Աւստրո-Հունգարիայի զանազան մասերը։ Ռուսական պե-

տութեան մէջ աւտոնոմիա ունի Ֆինլանդիան։

Սակայն շատ պետութիւններ դեռ այնքան չեն հասունացել քաղաքակրթապէս, որ հանդուրժեն զանազան երկրամասերի աւտոնոմ կացութեանը։ Կան պետութիւններ էլ, որոնց բաղադրիչ մասերը չունին այնպիսի առանձնայատկութիւններ, որոնք անխուսափելի են դարձնում օրէնսդրական աւտոնոմիան։

Վերոյիշեալ երկու տեսակ երկիրներում գոյութիւն ունեն միայն վարչական ինքնավարութիւններ։ Այսպէս են եւրոպական բոլոր պետութիւնները, որոնց նահանգները, գաւառները և գիւղախմբերը ունին իրենց ինքնավարութիւնը։

Լայն վարչական ինքնավարութիւն ունին Անգլիայի գաւառները։ Այստեղ մինչև իսկ կանայք ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին։ Աւելի սահմանափակ է Ֆրանսիական գաւառների ինքնավարութեան իրաւունքները, թէև ընտրութիւնները դարձեալ դէմոկրատական են։ Միջին տեղ, Անգլիայի և Ֆրանսիայի մէջ բռնում են գերմանացիների տեղական ինքնավարութիւնը։

Ռուսաստանում միայն հին ժամանակ-

ներում կային շէջ-նայի- ինքնավարութիւններ։ Սակայն Պետրոս Մեծից սկսած երկիրը կառավարել են կենտրոնական կառավարութեան գործակալները։ Միայն 1864 թուին Ռուսաստանի ներքին, բուն ռուսական նահանգներում և գաւառներում մտցուեց վերջապէս ինքնավարութիւն կամ զեմստվօ, որը 1890 թուին ենթարկուեց էական փոփոխութիւնների։ Զեմստւօյական հիմնարկութիւնները այժմ կազմակերպուած են հետևեալ հիմունքների վրայ։

Ընտրութիւնները պայմանաւորուած են ցենզով և կուրիաներով։ Գիւղացիութիւնը մասնակցում է առանձին։ Ամեն մի գիւղական հասարակութիւն (վօլօստ) տալիս է պատուիրակներ, որոնք ընտրում են իրենց միջից գաւառական զեմստւօյի իրաւասուներ օրէնքով սահմանուած թւով։

Միւս տարրերից մասնակցում են նրանք որոնք ունին հողային կամ այլ անշարժ սեփականութիւն։ Հողատէրերի համար կայ հաստատուած աղիւսակ, որից երևում է թէ որքան հող պիտի ունենալ ընտրութիւններին անմիջապէս մասնակցելու համար։ Այլ տեսակի անշարժ սեփականութիւն ունեցողները կարող են ձայն ստա-

նալ, եթէ իրենց սեփականութիւնը արժէ 15,000 ռուբլի։ Այս հողային և դրամական նորմայից պակաս ունեցողները նոյնպէս կարող են մասնակցել, եթէ նրանց սեփականութիւնը վերոյիշեալ նորմայի $^{1}/_{10}$-ից ցած չէ։ Սրանք ունին կոտորակային ձայն։

Այս ամբողջ հասարակութիւնը բաժանւում է երկու կուրիաների, ազնւականների և ոչ ազնւականների։ Գիւղացիական, ազնւական և ոչ-ազնւական կուրիաներին յատկացւած է օրէնքով որոշւած ձայներ։ Գրեթէ բոլոր գաւառական զեմստւօներում ազնւականները մեծամասնութիւն են, չնայած որ երկրի ընդհանուր ազգաբնակութեան մէջ նրանք ուղղակի չնչին թիւ են կազմում։

Գաւառական զեմստւօյական ժողովները իրենց միջից ընտրում են օրէնքով որոշւած թւով իրաւասուներ նահանգական ժողովի համար։

Գալով զեմստւօյի իրաւասութիւնը եւ իշխանութիւնը, համեմատած նոյնիսկ 1864 թւի զեմստվօյի հետ, շատ սահմանափակ է։ Այդպէս, զեմստւօյի իրաւունքները սահմանափակւած են կրթական և պարենաւորման գործերում և շատ ուրիշ խնդիրներում

որոնք զեմստւային տուրքերի բարձրացման հետ են կապւած։ Իշխանութեան սահմանափակումները կայանում են նրանում, որ զեմստւօյի գրեթէ բոլոր որոշումները կեանքի մէջ մտնելու համար պէտք ունին նահանգապետի և մինիստրի հաստատութեան կամ համաձայնութեան։ Սրանք են հաստատում նաև զեմստվօյական խորհուրդների ամբողջ կազմը (семскія управы), թէ գաւառական թէ նահանգական։

Չնայած այս բոլոր թերութիւններին, ռուսական զեմստւօն տասնեակ տարիների ընթացքում կատարել է խոշոր դեր ժողովրդական կեանքում։ Դա բացատրւում է նախ կեանքի հրամայողական պահանջներով և երկրորդ, ռուս ինտելլիգենցիայի անուղղակի, բայց զօրաւոր ազդեցութեամբ զեմստւօյական շրջաններում։

Ռուսական պետութեան այն մասերը, որոնք զուրկ են եղել զեմստւօյից, տարիների ընթացքում յամառ կերպով ձգտել են ձեռք բերել այդ հաստատութիւնները։

Վերջին ժամանակներս նման հիմնարկութիւններ ստացան արևմտեան վեց նահանգները (Կիևի, Վօլինի, Պոդոլի, Մինսկի, Մոգիլևի և Վիտեբսկի). հարաւային երեք

նահանգները՝ Սամարայի, Աստրախանի, Օրենբուրգի։ Սրանք ինչպես և առաջինները ձեռք բերին զեմստւօն մի շարք փոփոխութիւններով, համաձայն տեղական պայմանների, ի հարկէ այնպէս, ինչպէս հասկանում էր կառավարութիւնը։

Այժմ հերթական են համարւում Սիբիրի, Դոնեան, Թերեքեան շրջանների և Անդրկովկասի զեմստւոյի խնդիրները։

Անդրկովկասում զեմստւօ մտցնելու խնդիրը վճռականապէս յարուցւեց տեղական իշխանութեան կողմից 1905 թ. զեմըստւային խորհրդակցութեան ժամանակ։ Բայց թէ այդ, թէ յետագայ 1909 թւի նահանգական խորհրդակցութիւնները իրական արդիւնք չունին։ Միայն վերջերս, պատերազմական հանգամանքների շնորհիւ հարցը նորից հերթի դրւեց և այս տարւայ ապրիլ զեմստւայական խորհրդաժողովում տեղական իշխանութիւնը յայտարարեց, որ Անդրկովկասում զեմստւօ մտցնելու խնդիրը առաջ է տարւելու առանց յապաղումի։ Խորհրդաժողովից յետոյ փոխարքայութեան դիւանը ձեռնամուխ եղաւ օրինագծի մշակման։ Ինչպէս լսում ենք այդ օրինագիծը

արդէն պատրաստ է և ուղարկւելու է շուտով կենտրոնական կառավարութեան, որի հաւանութիւնը ստանալուց յետոյ պիտի մտցւի Պետական Դումա։

Մեզ համար ամենակարևորն է ընդգծել այն գլխաւոր հիմունքները, որոնց վրայ պիտի կառուցած լինի մեր երկրի տեղական ինքնավարութիւնը։

Նախ անհրաժեշտ է, որ զեմստւօն լինի ժողովրդական։ Կրկնել մեր երկրում էլ այն բոլոր սխալները և թերութիւնները, որ տեսել է Ռուսաստանը, կնշանակի յետադարձ ընթացք բռնել։ Ոչ ցենզը, ոչ կուրիաները չունեն այլևս որևէ հիմք քսաներորդ դարում։ Տեղական գործերի ղեկը պիտի անցնի ժողովրդական լայն մասսաներին առանց դասերի, դասակարգերի խըտրութեան։

Ամենաուշագրաւն այն է, որ մեր երկրի պայմանները թոյլ էլ չեն տալիս ազնուական կամ կալւածատիրական կուրիա ստեղծել և առհասարակ արտօնութիւններ տալ այդ դասին։

Նախ, կալւածատիրութիւնը մեզանում, մանաւանդ հայ-թաթարական շրջաններում այնպիսի մեծ ույժ չի կազմում,

ինչպէս Ռուսաստանում։ Երևանի նահանգում, օրինակ, գիւղացիութեան ձեռքին գտնւում է—1,566,000, իսկ կալւածատէրերին պատկանում է ընդամենը 55,000 դես։ Գանձակի նահանգում, գիւղացիութիւնը—1,235,000, պետութիւնը—2,351,000 իսկ կալւածատէրերին—440,000։ Կարսի նահանգում գրեթէ չկայ կալւածատիրութիւն։

Երկրորդ, կալւածատիրութիւնը մեզանում շատ մանր է. սրանց մեծ մասը համարեայ չի տարբերւում գիւղացիական հողաբաժիններից։

Երրորդ, կալւածատէրերի, ազնւականների կենցաղը մեծաւ մասամբ նոյնն է, ինչ որ գիւղացիութիւնը։ Կուլտուրական աստիճանով նրանք գրեթէ ձուլւած են գիւղացիութեան հետ։ Նոյնիսկ այն մի քանի տասնեակ խոշոր կալւածատէրերը իրենց զարգացմամբ շատ ցած են ռուսական ազնւականութիւնից։

Վերջապէս մի լուրջ հանգամանք էլ կայ, որ վտանգաւոր և անարդար է դարձնում կալւածատիրական յատուկ կուրիայի հաստատումը։ Ինչպէս յայտնի է, հայ-թաթարական շրջաններում կալւածատէրերի

ճնշող մեծամասնութիւնը կազմւած է թաթարներից։ Հայ ազնւականութիւն կամ կալւածատիրութիւն շատ քիչ կայ։

Այդպիսի պայմաններում, եթէ կալւածատիրութիւնը ընտրութիւններին մասնակցի յատուկ կուրիայով, կստեղծւի մի անբնական դրութիւն. թաթարները մեծամասնութիւն կլինեն նոյնիսկ այն նահանգներում և գաւառներում, որտեղ փաստօրէն ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են հայերը։ Օրինակի համար վերցնենք Էջմիածնի գաւառը, ուր ազգաբնակութեան գրեթէ երկու երրորդը հայեր են։ Եթէ Էջմիածնի զեմստւայական ժողովում լինելու է, դիցուք, 31 իրաւասու, և առնւազը 10 ձայն տրւելու է կալւածատէրերին, իսկ 21 ձայն գիւղացիներին, ապա թաթար կլինեն բոլոր 10 կալւածատէրերը և 7 գիւղացի։ Իսկ հայ կլինի 14 գիւղացի։ Ուրեմն հայկական գաւառում էլ թաթարները կարող են մեծամասնութիւն ունենալ։ Այդպիսի դրութիւնը ի հարկէ անարդար է և անհանդուրժելի։

Մի այլ խոչընդոտ էլ կայ զեմստւոյական ընտրութիւնների հանդէպ։ Դա մեր նահանգների և գաւառների սահման-

ները այնպէս է կծւած, որ հայերը ոչ մի տեղ, բացի Ախալքալաքի, Ալէքսանդրապօլի, Էջմիածնի, Նոր-Բայազէտի և Շուշու գաւառներից, մեծամասնութիւն չեն կազմում։ Այնինչ, եթէ մի վայրկեան մոռանանք արհեստական բաժանումները և վերցնենք քարտէզը, ինչպէս որ նա կայ, կտեսնենք որ հայերը ունին իրենց մեծամասնութեան մի ընդարձակ շրջան, որ ընդգրկում է Երևանի ամբողջ նահանգը, Գանձակի նահանգի ամբողջ լեռնային մասը, Թիֆլիսի նահանգից Լօռին և Ախալքալաքը և Կարսի շրջանի մեծագոյն մասը։ Այդ տարածութեան վրայ, չհաշւած Օլթին և Արդահանը ապրում է մօտ 1,250,000 հայ և մօտ 850,000 այլ ազգեր, ընդամենը 2,100,000 ժողովուրդ, որ կարող էր մեծ նահանգ կազմել. և այդ նահանգը իր տարածութեամբ և բնակչութեան թւով մօտ կլինէր ներքին Ռուսաստանի փոքրիկ նահանգներին։ Սրան դրկից երկիրները կկազմէին երկու նահանգներ. Գանձակի նահանգի դաշտային մասը և Բագւի ամբողջ նահանգը (թերևս նաև Դաղստանը) կլինէր մէկ թաթարական նահանգ. Թիֆլիսի նահանգի

մեծագոյն մասը, Քութայիսը, Բաթումը և Սուխումը կկազմէին մէկ վրացական նահանգ։

Այդ նահանգները կունենային իրենց նահանգական զեմստւօները։ Հայկական նահանգը կբաժանւէր աւելի խոշոր գաւառների, նման ռուսական գաւառներին։ Սրանցից մի քանիսը, ինչպէս Օլթին, Արդահանը, Շարուրը, Նախիջևանը, կլինէին թաթարական, իսկ միւսները — հայկական։ Այդ գաւառները կկազմէին զեմստւօյական միաւորներ։ Վերջապէս այդ գաւառները կբաժանւէին գաւառակների (полицейскій участокъ) կամ գիւղախմբերի (сельское общество) տալով զեմստւօյի առաջին աստիճանը, կամ մանր զեմստւօյական միաւորը

Այս ձևով միայն կարելի կլինի արդարացիօրէն լուծել ազգային հարցը զեմստւօյի մէջ։

Ա. Տ.

Ն. Կ. Մ. ՄԵԾ ԻՇԽԱՆ
ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱԵՒԻՉ
Կովկասի Փոխարքայ եւ Կովկասեան Բանակի Հրամանատար

«Լոյս» օրացոյց 1817 թ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱԵՒԻՉ

1856—1916

(Ծննդեան 60-ամեակի առիթով)

Կովկասի Փոխարքայ և Կովկասեան բանակի հրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչը ծնւել է 1856. թ. նոյեմբերի 6-ին: Նա Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեւչի (աւագ) և Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Պետրովնայի որդին ու Կայսր Նիկոլայ I-ի թոռն է: Սկզբնական կրթութիւնը ստանալով իր ծնողների ձեռքի տակ, Նա 1871 թ. մտնում է Նիկոլաեւսկի ինժիներնի դըպրոցը և մի տարուց յետոյ պրապորշչիկի աստիճանով ուղարկւում է նախ հետեւակի վարժիչ բատալիօնը, ապա հեծելազօրի էսկադրօնը: Գործնական որոշ փորձառութիւն ձեռք բերելուց յետոյ, Նա մտնում է Նիկոլաեւսկի գեներալնի շտաբի Ակադեմիան, որ վերջացնում է 1876 թ. արծաթէ մեդա-

լով, այդ նոյն թւին ստանալով կապիտանի աստիճան, նշանակւում է Նորին Կայսերական Մեծութեան ադիւտանտ։

1877—78 թ. ռուս-տաճկական պատերազմի ժամանակ Նիկոլայ Նիկոլաեւիչը աչքի է ընկել իր քաջութեամբ, Սիստովայի ամրութիւնների գրաւելու և Դունայը անցնելու յարմար տեղն ընտրելու համար պարգեւատրւել է Գէորգեան 4-րդ աստիճանի խաչով, իսկ Շիպկայի գրոհների ժամանակ ցոյց տւած անսասելի խիզախութեան համար պարգեւատրւել է ոսկեա թրով «քաջութեան համար» մակագրութեամբ. և ստացել է պալկովնիկի աստիճան։ 1884 թւից մինչև 1893 թիւը Մեծ Իշխանը աստիճանաբար նախ եղել է Լէյբ-գվարդիայի Հուսարների գնդի հրամանատար, ապա ստանալով գեներալ-մայորի աստիճան՝ բրիգադայի հրամանատար և վերջապէս գվարդիական հեծելազօրի 2-րդ դիվիզիայի հրամանատար։ 1893 թ. ստացել է Նորին Կայսերական Մեծութեան գեներալ-ադիւտանտի տիտղոս, իսկ երկու տարի անց նշանակւել հեծելազօրի գեներալ-ինսպեկտոր։ 1905 թ. Նորին Բարձրութիւնը նշանակւեց Պետերբուրգի զինւորական շրջանի ու գվարդիական զօր-

քերի հրամանատար և այդ պաշտօնի մէջ մնաց մինչև 1914 թ. յուլիսի 20-ը, երբ Բարձրագոյն հրամանով նշանակւեց ռուս քաջարի բանակների Գերագոյն հրամանատար։

Այս համառօտ տեղեկութիւններից երեւում է, որ Նորին Բարձրութիւնը իր ամբողջ կեանքը անց է կացրել իսկական զինւորական ծառայութեան մէջ և այնքան աչքի է ընկել իր արդիւնաւէտ գործունէութեամբ, որ 1911 թ. Նրա զինւորական ծառայութեան 40-ամեակի առիթով տրւած հրովարտակի մէջ Նորին Կայսերական Մեծութիւնը ի միջի այլոց գրում է. «Գնահատելով Ձեր երկաթեայ, անյաղթելի էներգիան և անձնազոհ ծառայութիւնը, Ես պարգեւում եմ Ձեզ, կրծքին կրելու համար, Իմ ադամանդակուռ պատկերս։ Մնամ դէպի Ձեզ միշտ բարեհաճակամ ու ի սրտէ սիրող Նիկոլայ»։

1914 թ. յուլիսի 20-ին նշանակւելով Գերագոյն հրամանատար, Նորին Բարձրութիւնը Իր անխոնջ աշխատանքով և ռազմական հեռատեսութեամբ ծանր հարւածներ հասցրեց թշնամուն և արդարացրեց Իր վրա դրած յոյսերը։

1915 թ. սեպտեմբերին, Թագաւոր կայսրը անցնելով Իր բանակների գլուխը, Նորին Բարձրութեանը նշանակեց Կովկասի Փոխարքայ ու Կովկասեան բանակի հրամանատար։

Այստեղ ևս Նորին Բարձրութիւնը ցոյց տուեց իր ռազմական ամբողջ կարողութիւնը, կարճ ժամանակամիջոցում տիրելով ամբողջ բազմատանջ Հայաստանին։

Բազմալեզու Կովկասը ևս իր Օգոստափառ Կառավարչից մեծ սպասելիքներ ունի։

Նա արդէն ձեռք է զարկել Կովկասի ցաւերի բուժելուն, արագացնելով զեմստվօ մտցնելու հարցի ընթացքը և բազմիցս անգամ պաշտպանելով Կովկասի շահերը կենտրոնական կառավարութեան առաջ։

Յարգանքի ու ակնածանքի խորին զգացումները, որով վերաբերում են դէպի Նա, թէ ստորադրեալները և թէ բարեկամները, հետևանք են ոչ թէ Նրա բարձր դիրքի, այլ անժխտելի վարչական ու ռազմական տաղանդի։

Նորին Բարձրութիւնը աչքի է ընկնում Իր բարեացակամ վերաբերմունքով դէպի մանր, հալածուած ազգերը (յիշենք Նրա կոչը լեհերին, աւստրիայի բնակիչն·

ևայլն)։ Հասարակական հիմնարկութիւններն ու մամուլը՝ «Իմ պալատի դռները միշտ բաց են ձեր առաջ, պարոններ, նոյնիսկ կարիք եղած դէպքում գիշերն անգամ»։ Ահա թէ ինչու Նա կարճ ժամանակում արդէն գրաւել է բազմացեղ Կովկասի բնակչութեան սէրն ու յարգանքը։

ՎԻԼԼԻԱՄ ՇԷՔՍՊԻՐ

1616—1916

(Մահւան 300-ամեակի առիթով)

ՎԻԼԼԻԱՄ ՇԷՔՍՊԻՐ

1616—1916

(Մահւան 300-ամեակի առիթով)

Վիլլիամ Շէքսպիրը ծնւել է 1564 թ. ապրիլի 23-ին Ստրատֆորդում։ Նրա հայրը, Ջօն Շէքսպիրը նախ ձեռնոցագործ էր, ապա գրքավաճառ և ունէր համեստ կարողութիւն։ Բայց Վիլլիամի դեռ մանուկ հասակում նա կորցրեց իր կարողութիւնը, և շատերը դրանով են բացատրում այն հանգամանքը, որ մանուկ Շէքսպիրը չի կարողացել վերջացնել իր ուսումը։

Դեռ տասնեութ տարեկան պատանի, Շէքսպիրը ամուսնանում է (1582 թ.) Աննա Գէտավէյ անունով մի աղջկայ հետ, որ նրանից ութը տարով մեծ էր։ Ամուսնանալուց վեց ամիս անց նա արդէն երեխայի հայր էր։ Այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ մեծ դրամատուրգը իր կեանքի սկզբնական շրջանում շատ անկանոն կեանք է վարել և «Հէնրիխ IV»-ի կամ «Վինդզօրեան կանանց» մէջ նկարագրած շատ տեսարաններ ու դէպքեր իր վերապրածներն են։

Սէրը դէպի գեղարւեստը մի կողմից, նիւթական կարիքը միւս կողմից ստիպում են երիտասարդ Շէքսպիրին 1586 թ. թողնել հայրենի Ստրատֆորդը և հաստատւել Լօնդոնում։ Այստեղ շնորհիւ իր բարեկամ դերասանների աջակցութեան, նա մուտք է գործում թատրոնական շրջանները և կարճ ժամանակում դերասան դառնում։ Նա այդ ժամանակւանից

նա սկսում է գրել իր դրամաները, որոնցից յուրաքանչյուրը նրան—10—25 ֆունտ ստերլինգ էր գալիս։ Շուտով նա նյութապես այնքան է ապահովւում, որ դառնում է «Գլոբուս» թատրոնի բաժնետէր և իր ծննդավայրում գնում է սեփական տուն և հող։

Նրա ժամանակակիցների և բարեկամների զարմանքը աւելի և աւելի մեծանում էր, քանի աւելի ծաղկում, փթթում էր Շէքսպիրի տաղանդը։ Դեռ 1598 թ. Մէրսէյը Շէքսպիրին «անգլիական գըրողներից ամենանշանաւորն է համարում»։

Այդ ժամանակներում է նա ստեղծագործել իր «Համլէտը», «Լիր արքան» և «Վենետիկցի վաճառականը»։

Միշտ կապ պահպանելով իր ծննդավայրի հետ, Շէքսպիրը 1614 թ. վերադառնում է Ստրատֆորդ, որտեղ և ապրում է մինչև իր մահը, որ տեղի ունեցաւ 300 տարի առաջ, 1616 թ. ապրիլի 23-ն։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ արդարացի են Շէքսպիրի կենսագիրներից մէկի հետևեալ խօսքերը. «Այն բոլորը, ինչ որ մեզ յայտնի է որոշ վերապահութեամբ Շէքսպիրի մասին, այդ այն է, որ նա ծնուել է Ստրատֆորդում Ավօնի վրայ, այնտեղ ամուսնացել, երեխաներ է ունեցել, գնացել է Լօնդօն, որ նա սկզբում դերասան է եղել, գրել է պօէմաներ և դրամաներ, վերադարձել է Ստրատֆորդ, կտակ է արել. մեռել և թաղուել»

Հարիւր քսանհինգ տարի միայն անց Մեծ

Բրիտանիան իր մեծագոյն զաւակին արձան է կանգնեցնում Լօնդօնում։

Բայց Շէքսպիրի տաղանդի ամբողջ մեծութիւնը գիտակցում էին դեռ նրա ժամանակակիցները և նրա հակառակորդներից մէկը՝ Բէն-Դժոնսօնը այսպէս է բնորոշում Շէքսպիրի ստեղծագործութիւնը «Փառաւորիր իմ Անգլիա, որովհետև դու կարող ես ցոյց տալ այն մարդուն, որի առաջ պիտի խոնարհուեն Եւրոպայի բոլոր բեմերը։ Նա չի պատկանում մի շրջանի, այլ գոյութիւն կունենայ բոլոր ժամանակների համար։ Ինքը բնութիւնը պարծենում էր նրա ստեղծագործութիւններով... Ուրեմն լոյս տուր, բանաստեղծների աստղ և սիրով ու խստութեամբ ներգործիր անկման մէջ գտնուող բեմի վրայ, որ մահուամբ կը խորասուզուէր տխրութեան մէջ... եթէ դու չը թողնէիր նրան քո գրուածքներից լոյսը»...

«Այլևս ոչ մի թագաւոր չի կարող իր գայիսոնի տակ ամփոփել անգլիական ցեղը։ Միակ թագաւորը, որ կարողանում է իր իշխանութիւնը տարածել համատարած անգլիական ցեղի վրայ ու ամեն տեղ պահպանել նրա ազգային ամբողջութիւնը—դա Շէքսպիրն է» ասում է Կարլէյլը։

Ահա այդ է պատճառը, որ այսօր, արիւնի ու արցունքի հեղեղներից խեղդուող մարդկութիւնը խոնարհւում է 300 տարի առաջ յաւիտենականութեան դիրկն անցած մեծ դրամատուրգի յիշատակին առաջ։

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

1866—1916

(Մահուան 50-ամեակի առիթով)

«Լոյս» օրացոյց 1917 թ.

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Մահուան յիսնամեակի առիթով)

1866—1916 թ.

Միք ասէ ինձ՝ նա մեռաւ—նա կապրի այնքան, որքան որ պիտ ապրի հայ ազգը, հայ ժողովուրդը։ Շատ դժուար է երեւակայել մի կեանք աւելի դժբաղդ, չարքաշ ու ողբերգական, քան թէ Միքայէլ Նալբանդեանի գոյութիւնը։

Այո, այդպէս է տնօրինում ու կարգադրում մայր բնութիւնը՝ որ տաղանդաւոր մարդիկ քիչ ապրին և շատ տանջուին կեանքում։ Միթէ այդպէս չէ ռուս գրականութեան մէջ՝ Պուշկին, Լերմոնտով, Գոգոլ, բոլորն էլ երիտասարդական, նոր ծաղկած կեանքով ու տաղանդաւոր գրիչներով գերեզման են իջել, միթէ նոյնանման չէ և հայ գրականութիւնը՝ Խ. Աբովեան, Պ. Դուրեան, որոնք մեծ ապագայ ու շատ բարիքներ էին խոստանում հայոց գրականութեանը, բայց անգութ մահը գերեզման իջեցրել դեռ նոր-նոր սկսած գրել ու լայն ժողովրդականութիւն ձեռք բերած հայոց գրականութեան սիւներին։

Եւ նոյն կեանքն ու մահն է ունեցել Միքայէլ Նալբանդեան։

Ով էր Մ. Նալբանդեանը։ Մ. Նալբանդեանը ծնուել է 1829թ. նոյեմբերի 2-ին, Նոր-Նախիջևանում, չքաւոր ընտանիքում։

Մ. Ն. իր սկզբնական կրթութիւնը ստանում է մի տիրացուի մօտ, որի խորհրդով էլ ս. Թորոս եկեղեցում շապիկ էր հագնում և մոմ բռնում։ Բայց, բարեբաղդաբար, Մ. Ն. երկար չի մնում տիրացուի խնամքի տակ, այլ տ. Գաբրիէլ Պատկանեանը յանձն է առնում ձրիաբար կրթել իր դպրոցում, որտեղ սովորում է մինչև 1846 թ.։

Եւ այդ ժամանակամիջոցն էլ բաւական էր, որ ընդունակ ու աշխոյժ Միքայէլը հիմքը դնէր ապագայ գործունէութեան համար։ Այ թէ ինչու կարելի է ասել, որ Մ. Ն. մեծ մարդ է, տաղանդաւոր գրող է, քանի որ որտեղ ծնուեց, ում մօտ ուսաւ և ինչպէս մահացաւ...

Այո, մեծ մարդ էր Մ. Ն., որ իր փոքր պատրաստականութեամբ, չնչին, տիրացուական ուսումով, բայց բնութեան տւած հարուստ պաշարով մտաւ (1853—1855 թ.)

Մոսկուայի համալսարանի բժշկական բաժնի ուսանող, որպէս ազատ ունկնդիր։

Երիտասարդ Միքայէլը մեծ եռանդով ուսումնասիրում է ռուս գրականութիւնը և յատկապէս Բելինսկու գրուածները, որոնց ազդեցութեան տակ հասունանում, զարգանում է նրա սուր միտքը, ընդարձակւում է նրա առաջադիմական գաղափարների հորիզոնը, նա խորապէս ըմբռնում է գրականութեան էութիւնը ու նրա հասարակական մեծ նշանակութիւնը։ Մեծ ազդեցութիւն գործեց Մոսկուայի եռունզեռուն կեանքը, բնութիւնից օժտւած մարդասէր, գիտութիւնով յափշտակւող Միքայէլի բնաւորութեան վրայ։

Այնպիսի ժամանակ էր, որ ամեն տեղ ոգևորութիւն, վէճ, անխնայ քննադատութիւն ամենուրեք, ամեն խնդրի մէջ և այդ բեղմնաւոր ու կրակոտ կեանքը պատրաստեց ապագայ հրապարակախօսին, իր կրակոտ քարոզով, ազդու գրչով։

Երիտասարդ Միքայէլը Մոսկուայում ծանօթանում ու մտերմանում է Ս. Նազարեանի հետ և 1858 թ. յունուարին սկսում են «Հիւսիսափայլ»-ի հրատարակութիւնը։ Մ. Ն. հայ գրականութեան մէջ նախափոր-

ձեր ունէր, սիրում էր անընդհատ նամակներ, ոտանաւորներ գրել, որոնք տպւում էին «Արարատ»-ի մէջ 1850 թ.։

«Հիւսիսափայլ»-ի երևան գալով, ասպարէզ է գալիս նաև Մ. Նալբանդեանը իր հրապարակախօսական կոչերով։

Փշոտ էր Մ. Ն. ճանապարհը, դժւար էր նրա հրապարակախօսական ասպարէզը, բայց նա չէր ընկճւում, չէր յուսահատւում, այլ թափ ու եռանդով, անդուլ ջանքերով շարունակում էր իր մեծ գործը, մեծ համբերութեամբ։ Նրա փափագն էր ազատել հայ ոգին աստւածաբանական աշխարհահայեացքի կապանքից, եկեղեցականութեան մշուշից և տանել նրան դէպի ազատ կուլտուրական աշխատանքի լուսաւոր գաղափարը, որ ասում է.— «Հերիք է, սրբենք մեր վրայից այն ամօթը, թէ լուսաւորութիւնը մեր ազգի մէջ պիտոյ է փթած պապական աբեղաների ձեռքով մտանէ, նոցա լոյսը խաւարից շատ ակար է...» Այս տողերը շատ պարզ ու բնորոշ ցոյց են տալիս, որ երիտասարդ Միքայէլը շփում ունենալով հոգեորականութեան հետ, որպէս դպիր, շատ լաւ ծանօթ էր նրանց ուսած գիտութեան և լուսաւորութեան հետ, որոնք հա-

մեմատելով աշխարհիկ գրականութեան ու կուլտուրայի հետ, եզրակացութիւնը այդ պիտի ստացւէր։

Նալբանդեանը իր հրապարակախօսական յօդւածներով դատափետում էր հակառակ երևոյթները,— սուտ ազգասէրներին, հնութեան երկրպագուներին, կեղծ կրօնաւորներին, վաշխառուներին, շահագործողներին և այլն, և այլն։ Եւ այդ բոլորից յետոյ Նալբանդեանի ի բնէ ակար կազմւածքը ծանր պարապմունքների պատճառով քայքայւում է։

1859 թ. մարտ ամսին թողնում է Մոսկվան և գնում արտասահման բժշկւելու։ Նա այցելում է նշանաւոր մայրաքաղաքներ —Վիէննա, Փարիզ, Լոնդոն և Վենետիկ։

Այդ ժամանակ սկսւեցաւ Իտալիայի ազատութեան պատերազմը Աւստրիայի դէմ բռնապետութեան լուծը թօթափելու համար։ Բոլոր ազատասէրները համախմբւած էին Գարիբալդու դրօշի տակ և այդ բոլորը տեսնում ու ուսումնասիրում էր Նալբանդեանը։

Նալբանդեանի այս ժամանակւայ երկու ամենալաւ արտադրութիւնը կազմում են «Ազատն Աստւած», «Մեր հայրենիքը» և այլն։ Նալբանդեանը անվախ, անվեհեր դրօ-

շակակիր է կեանքի լաւագոյն իղձալների, վաթսունական թուականների նորագոյն իդէաների արտայայտիչն ու խիզախ քարոզիչը։ Նա և գործում էր, և գրում էր և ուսումնասիրում էր և շփում ունէր Հերցէնի և Բագունինի հետ, նոյնիսկ նամակագրութիւն։ Մի խօսքով, տիրացու Միքայէլը՝ դարձաւ Միքայէլ Նալբանդեան, շնորհիւ իր եռանդուն աշխատանքի և բնատուր տաղանդի։

1862 թ. Նալբանդեանը արտասահմանից վերադարձաւ Պետրոգրադ և մի քանի օրից յետ ուղևորւեց իր բնակավայրը, ճանապարհորդական տպաւորութիւնները կազմելու։

Բայց անյայտ պատճառով կալանաւորւեց և մօտ երեք տարի մնաց Պետրոպաւլովսկ բանտում, այն յոյսով թէ ինքը թիւրիմացութեամբ է բանտարկւած և կազատւի։

Վերջիվերջոյ արձակւեցաւ բանտից, բայց այն առողջութիւնն ու եռանդը չէր թողել երեքամեայ բանդային կեանքը, առանց այն էլ թոյլ կազմւածքի տէր Նալբանդեանի մէջ։

Հասարակական գործերն ու բանդային կեանքը միանգամայն թուլացրին Նալբանդեանի կազմւածքը և ահա 1866 թ., մարտի 31-ին փակեց աչքերը ընդմիշտ, յաւիտենական քուն մտնելով։

Այո, հեշտ է ասել փակեց աչքերը, բայց որքան դժւար, ողբերգական է այդպիսի մահը, որ հեռու հայրենիքից, հեռու հարազատ օճախից, որին այնքան փափագում էր։

Բայց Նոր-Նախիջևանի հասարակութիւնը երախտամոռ չմնաց դէպ իրենց տաղանդաւոր հասարակական գործիչն ու հրապարակախօսը, իր հաշւով տեղափոխեց Նախիջևան և ս. Խաչ վանքի բակում թաղեց։ Ս. Խաչ վանքում թաղեցաւ Նալբանդեան, բայց նրա անունը կենդանի է, չնայելով որ յիսուն տարի է անցել, բայց թէկուզ յիսուն դար էլ անցնի՝ նա դարձեալ կապրի, քանի հայ ազգը կայ ու կապրի։

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

1891—1916

(Մահուան 25-ամեակի առիթով)

«Լոյս» օրացոյց 1917 թ.

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

1891—1916 թ.

(Մահուան 25-ամեակի առիթով)

Յակոբ Պարոնեան ծնուել է Ադրիանուպօլիս քաղաքում 1840 թ., որտեղ և ստանում է կրթութիւնը։

Սկզբում սովորում է հայոց դպրոցում, որից յետոյ մտնում է յունաց դպրոց և սկսում ուսումնասիրել յոյն կլասիկներին։ Ծանօթանում է նաև ֆրանսիական և իտալական գրականութեան հետ, քանի որ տիրապետում էր նրանց լեզուներին։

Պարոնեանը իր գրական գործը սկսել է 60-ական թուականներից, «Արև իշխան ատամնաբոյժ» ծաղրածու գրուածքով։

Հայ գրականութեան մէջ Պարոնեանը միակն է իր երգիծաբանական գրուածքներով. ինչպէս Կրիլովը ռուս գրականութեան, Մոլիէրը ֆրանսիական և այլն։ Եւ, ինչպէս ռուս և ֆրանսիական գրական ասպարէզում, Կրիլովի, Մոլիէրի մահուանից յետոյ նրանց տեղը բռնող չեղաւ, այնպէս էլ մեր գրական ասպարէզում, որ անցել է քսանհինգ տարի Պարոնեանի մահուանից, բայց նրա տեղը բաց է, գերը՝ անկատար։ Այո՛, այդպէս է տնօրինում մայր բնութիւնը, այդպէս էլ ընթանում է կեանքը, որ մեծ մարդիկ, մեծ տաղանդով ու գործով, մեծ անունը թողնելով պիտի գնան անդառնալի, անփոխարինելի կերպով։ Ցաւալի

է. որ մենք այսօր չունենք Պարոնեանի նման երգիծաբան, քաղցր ծիծաղցնող, կծու. բայց քաղաքավարի ձեւով հեգնող։

Այո՛, կծու էր նրա ոճը. այնքան կծու, որ 60-ական թւականներին, Պարոնեանի հրատարակութեամբ լոյս տեսնող «Թատրոն» թերթը, չորս տարւայ ընթացքում ութը անգամ դադարում է, շնորհիւ կծու, խայթող ոճի։

Բայց Պարոնեանը չի յուսահատւում, այլ շարունակում է իր գրական գործը և 1878 թ. լոյս է ընծայում գլուխ գործոցն «Ազգային ջոջեր», որ նշանաւոր հայերի կեանքից է ծաղրական ոճով գրած։

Դրանից յետոյ լոյս են տեսնում մի շարք աշխատութիւններ՝ «Պտոյտ մը Պօլսոյ փողոցներուն մէջ», «Մեծապատիւ մուրացկաններ», «Հոսհոսի ձեռատետրը» և այլն։

Պարոնեանի մեծութիւնը նրանումն է. որ կարողացել է տալ տիպեր. որոնք այնքան բնական են, այնքան հարազատ կեանքի պահանջներին, որ այսօր էլ մեր կեանքը լեցուն է Պարոնեանական տիպերով։

Հէնց այդ է պատճառը, որ Պարոնեանը քսան և հինգ տարի է մահացել է, բայց նրա տւած տիպերը կենդանի են, որոնց շնորհիւ էլ ինքը անմահ է հայ գրականութեան և հայ ազգի համար։



ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

1891—1916

(Մահւան 25-ամեակի առիթով)

«Լոյս» օրացոյց 1917 թ.

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

1891—1916 թ.

(Մահուան 25-ամեակի առիթով)

Ով է Պետրոս Ադամեանը

Պետրոս Ադամեանը ծնւել է Պօլսում, հայ կաթոլիկ ընտանիքում, 1849 թ.։

Դեռ մանուկ հասակում Ադամեանը զրկւում է մօրից և նրա կրթութեան գործը յանձնւում է հոգևորականութեան, որ և տանում է լաւ կրօնական կրթութիւն։

Պէտք է նկատել, որ XIX-դ դարում, քանի որ գիրն ու գրականութիւնը, դպրոցն ու դպրութիւնը հոգևորականութեան ձեռքն էր, դրա համար էլ աչքի ընկնող ընդունակութեան տէր մարդկանց աշխատում էին դարձնել հոգևորական։

Օրինակի համար, Նալբանդեան, Ահարոնեան, որոնց ծնողները աշխատում ու ձգտում էին, որ իրենց զաւակները քահանայ դառնան, բայց իզուր... Մայր բնութիւնը ինչ որ տւել է, ինչ տաղանդ որ պարգևել է. այն ուղղութեամբ կը մեծանայ մարդ, ինչպէս ցոյց են տալիս կեանքի փորձերը։

Եւ ահա, չնայելով Ադամեանի լաւ

կրօնական կրթութեան, նա դարձաւ լաւ դերասան, որ այն ժամանակւայ հոգևորականութիւնը հաշտ աչքով չէր կարող նայել բեմի վրայ։ Այդպէս է բնութեան օրէնքը, այդպէս է բնական տաղանդն ու հանճարը. որ ինչ տեսակ ուղղութեամբ ու մեթոդով էլ առաջ տանելու լինեն դաստիարակութեան ղեկը՝ դարձեալ յաղթողը բնութիւնն է իր օրէնքով։

Սրանից քառասունհինգ տարի առաջ հայ բեմը կորցրեց իր տաղանդաւոր դերասանին, հանճարեղ Համլէտին։ Այո, իսկական Համլէտ էր ոչ թէ հայ բեմի վրա, հայ ժողովրդի համար, այլ և ռուս հասարակութեան համար. ռուս բեմի վրայ՝ Մոսկւայում 1888 թ.։

Պետրոս Ադամեանի տաղանդը փըթթում է ու բացւում 1888 թ., երբ առաջին անգամ Մոսկւայում խաղում է Համլէտի դերը, որից յետոյ ռուս թերթերը արտայայտւում են նրա տաղանդի մասին.—Ադամեանը մի այնպիսի Համլէտ է, որին կարող է նախանձել եւրոպական որևէ թատերաբեմ, «Московск. Листокъ». իսկ «Музыкалькчый и театрал. вѣстникъ»-ը գըրում է.—

«Հայ դերասան Ադամեանը Պուշկինեան թատրոնում հրաշքներ է գործում։ Նա Համլէտի մէջ իր մի ընթացքով հիացրեց մեզ (մօր հետ տեսարանում), որ ոչ Ռոսսիի, ոչ Սալւինիի և ոչ միւս Համլէտների ու Համլէտիկների մօտ չէինք տեսել։ Նա ցոյց է տալիս մտքի կորովի թափանցկութիւն և խանդաղատանք։»

Եւ այսպէս անթիւ ու անհամար գովասանքներ և քննադատութիւններ, հայ մարդու, հանճարեղ դերասանի, իսկական Համլէտի մասին գրւեց լայնածաւալ Ռուսաստանում։

Գ. Ադամեանը բացի տաղանդաւոր դերասան լինելուց, նա և՛ բանաստեղծ է, և՛ պատկերագիր, և՛ քննադատ. նա գիտէր մի քանի լեզու, բայց ամենից լաւ Ֆրանսերէնին էր տիրապետում։ Բայց ինչ արած, որ հարուստ տաղանդի տէր դերասանը, աղքատութեան մէջ է մեռնում, հէնց այն թւին (1891 թ.), որ թւին «Մեծապատիւ Մուրացկանների» հեղինակ՝ Պարոնեանը։

Պետ. Ադամեանը ծնւեց կաթոլիկ և մեռաւ իբրև կաթոլիկ։

Նրա մահւանից մինչ այսօր քսանհինգ տարի է անցել, քսանհինգ թատերական սեզոններ է անցել, բայց ոչ մի սեզոնը չի տւել Համլէտը՝ Ադամեանի դերով։

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

1866—1916

(Ծննդեան 50-ամեակի առիթով)

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Ծննդեան յիսունամեակի առիթով)

1866—1916 թ.

Ահարոնեանը մեր ամենաշնորհալի վիպասաններից մէկն է համարւում։

Նրա գրւածքները կարդացւում են մեծ հետաքրքրութեամբ. Նրա անունը քաղցր է հնչում ամենքի ականջին։

Ո՞վ է Ահարոնեան *)։ Բուն ժողովրդի զաւակ՝ նրա ծոցում ծնւած ու սնւած։ Նրա հայրը Պարսկաստանի գաղթականներից էր, որ գաղթել էր 50-ական թւականներին, Խոյ գաւառից։ Նա գարբին էր և երկրագործ միաժամանակ. ունէր իր արտերը, այգին ու գարբնոցը, ուր աշխատում էր երեք մեծ որդիների ու աշակերտների հետ։ Ծանր էր այդ աշխատանքը. բայց ծանրութիւնից վախեցող չէր գարբին Առաքելը։

Նա աշխատում էր գիշեր-ցերեկ։

Ուժեղ ինքնատիպ անձնաւորութիւն էր մայրը։

Նա էջմիածնի գաւառի Հայթաղ գիւղից էր՝ մի կարիճ ու առնացի կին, որ բաղդի բերմամբ քիչ կարդալ-գրել էր սովորել գիւղական քահանայի մօտ և ամբողջ գաւառում միակ գրագէտ կինն էր համար-

*) Աւելի մանրամասն տես 1914 թ. «Լոյս» ծոցի օրացոյց Ե. Թոփչեանի։

ւում։ Նա շատ լաւ երգում էր շարականներ, անգիր գիտէր ամբողջ ժամասացութիւնը, քաջ տղամարդու նման ձի էր հեծնում, մենակ ճանապարհորդում, հունձ անում, արտ ջրում և այլն, և այլն։

Ահա այդպիսի ծնողներից, Սուրմալուի գաւառի Իգդիր-աւան գիւղում 1866 թւականին ծնւում է Աւետիսը։ Ծնողները չափազանց սիրում էին նրան և ոչինչ չէին խնայում նրա կրթութեան համար։ Հօր միակ ցանկութիւնն էր քահանայ դարձնել իր որդուն. հէնց այդ նպատակով նրան իր հետ միշտ եկեղեցի էր տանում, որպէսզի փոխ առնել սովորի, տիրացութիւն անէ։

Ներողամիտ հայր էր գարբին Առաքելը, բայց տանել չէր կարողանում մէկ ստախօսութիւնը, մէկ էլ պաս ուտելը։ Այսպէս օրինակ նա, թէև սաստիկ սիրում էր Աւետիսին, բայց մի անգամ խիստ ծեծում է նրան՝ սխալմամբ պաս ուտելու համար։

Մօր մօտ այբուբենը սովորելուց յետոյ Աւետիսը մի առժամանակ «Սաղմոս» է կարդում Գիւլագիզ անունով յայտնի խալիֆայի մօտ և հէնց այդտեղ էլ տեսնում է փալախան։ Կատարեալ Տէր Թոդիկի դպրոց էր դա։ Հայրը ի նշան իր առանձին սիրուն

դէպի Աւետիսը մի յատուկ աթոռ՝ տաբուրետ է շինել տալիս նրա համար: Փոքրիկ մանուկը ամեն օր շալակում է այդ աթոռը և տանում տնից դպրոց. դպրոցից տուն: Դպրոցում նա ծալապատիկ նստում է մորթու վրա. առաջին է դնում նշանաւոր „տաբուրետը» իբրև գրասեղան և սկսում է պարապել:

Այդպէս անցնում է բաւական ժամանակ, մինչև որ նա մտնում է Իգդիրի հայոց ծխական դպրոցը: 1882 թ. վերջացնելով այդ դասընթացը, Աւետիսը գնում է Էջմիածին և մտնում Գէորգեան ճեմարանը: Այդտեղ նա վերջացնում է դպրոցական դասընթացը (6 դասարան) և իսկոյն սկսում (1886 թ.) ուսուցչական գործունէութիւնը: Ամբողջ 8 տարի է տևել այդ գործունէութիւնը՝ 6 տարի հայրենի գիւղում—Իգդիրում, 1 տարի—Նոր Բայազետում և 1 տարի էլ Գէորգեան ճեմարանում:

Ահարոնեանի ուսուցչական գործունէութիւնը դադարում է այն ժամանակ, երբ 1895 թ. փակւում են հայոց ծխական դպրոցները: Դրանից յետոյ գրականութիւնն է մնում նրա միակ մխիթարութիւնը, Վերջապէս 1898 թ. նա գնում է արտասահման

—Շւեցարիա ուսումը շարունակելու: Նա մտնում է Լօզանի համալսարանը և ուսումնասիրում պատմութիւն ու գրականութիւն: 1902 թ. վերջացնելով իր ուսումը, նա գալիս է Կովկաս և դառնում «Մուրճ» ամսագրի խմբագրութեան անդամ:

Ահարոնեանն իր գրական գործունէութիւնը սկսել է ութսունական թւականներից, բայց առաջին շրջանում գրել է միայն թղթակցութիւններ և առանձին յօդւածներ հայրենակից ժողովրդի ու թիւրքահայոց կեանքից: Այդ շրջանի նրա ամենամեծ աշխատութիւնն է «Սուրմալուի հոռները» վերնագրով ընդարձակ յօդւածը, որ ամբողջ 1893 թ. ընթացքում տպւում էր «Տարազում» և ապա նրա մի մասը՝ «Հոռ կինը» նոր յաւելւածներով լոյս է տեսել 1897 թ. Հրատ. ընկերութեան հրատարակութեամբ: Դա մի հետաքրքրաշարժ գիրք է, որի մէջ ամփոփւած են մի շարք ազգագրական նիւթեր Սուրմալուի գաւառի հայ ժողովրդի և գլխաւորապէս հայ կանանց մասին:

Ահարոնեանի վիպական գրականութիւնը սկսել և զարգացել է միայն «Մըշակում»: Այդտեղ է նա տպել „Գուտ կաթ" վերնագրով իր առաջին վիպական պատ-

կերը, որ մի սրտաշարժ պատմուածք է հայ գաղթականների կեանքից։ Այդտեղ է շարունակել և յետագայ պատկերները։ Միայն վերջին երեք տարիներում նա գրել է գըլխաւորապէս «Մուրճում»։

Գրեթէ նրա բոլոր աշխատութիւնները*) արդէն արտատպուել և լոյս են տեսել առանձին գրքերով ու գրքոյկներով. այն է՝ «Հոռ կինը», «Պատկերներ», «Բաշօ», «Մխիթարեան Միաբանութեան», որ մի փոքրիկ քաղուածք է «Իտալիայում» վերնագրով ճանապարհորդական տպաւորութիւններից, «Խեղճերը», «Մայրերը», «Իտալիայում» և վերջապէս «Մրրիկի սուրբը», որ նրա ամենավերջին և ամենամեծ վէպն է։

Տեղի սղութիւնը մեզ թոյլ չի տալիս աւելի երկարացնելու մեր խօսքը և առանձին առանձին վերլուծելու այդ գրուածքները։ Բայց եթէ ուզենանք մի երկու խօսքով բնորոշել Ահարոնեանի տաղանդը, այն ժամանակ պէտք է ասենք — նա զգացմունքի երգիչ է բառիս բուն նշանակութեամբ. և նրա երգը անհատական չէ. այլ աւելի լայն — ժողովրդական. Նրա երկերի նիւթը մի ընդհանուր աղէտի շուրջն է պտտւում։ Դա թրքահայ ժողովրդի «զու-

*) Այդ աշխատութիւններից շատերը թարգմանուած են նաև ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն և ուրիշ լեզուներով։

լումն է», նրա թշուառութիւնը, տարագիր վիճակը։

Նրա լեզուն սահուն է, պատկերաւոր ու բանաստեղծական։ Նա կարողանում է գեղեցիկ համեմատութիւններով, դարձուածքների պայծառ գոյնով չափազանց ռելիէֆ պատկերներ ստեղծել և ընթերցողի զգացմունքը շարժել։

Դուման բռնեց մեր սարերուն,
Ջրեր գծմէն սուգ արին,

ասում է նրա հերոսներից մէկը — («Խաւար լուսին»)։ Ահա այդ սուգն է անում Ահարոնեանը։

Մառմառ քարեր մըռմռու կուլան
Ապառաժներ կը ոքան...

շարունակում է հերոսը և ինքը հեղինակն էլ լալիս է իր հերոսների հետ, տանջւում է նրանց ցաւով և այդ ցաւի, այդ «արցունքի» ձայնն է հնչեցնում ընթերցողի ականջին։

Ահարոնեանից դեռ մեծ սպասելիքներ ունի հայ ժողովուրդը, նրա գրիչը դեռ երիտասարդ է և ընդունակ նոր աշխատութիւններ տալու՝ նոր ջարդերի, նոր աւերումների տաճկահայ կեանքից, Զուլումի երկրից անման պատկերներ։

ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

ՎՐԱՑԻՆԵՐԸ

Վրացիները *) միջին ասիական (սպիտակ) ցեղի ազգութիւններից մէկին են պատկանում, կովկասեան ընտանիքի քարտվելեան խմբին, որ ապրում է Անդրկովկասի կենտրօնական և արեւմտեան մասում և բաղկացած է—իսկական վրացիներից, ինգուշներից, վրացի լեռնականներից, իմերիտիններից, գուրիացիներից և աջառացիներից։

Իսկական վրացիները (408,000) ապրում են գլխաւորապէս Թիֆլիսի և մասամբ էլ Քութայիսի նահանգներում, իսկ Թերեքի նահանգում ինգուշները, որոնք տարբերւում են առաջիններից միայն նրանով, որ դաւանում են իսլամը և թւով 9000 են։

Զաքաթալի շրջանում ապրում են վրացի լեռնականները. խեւսուրները (500), փշաւներ (9000) և թուշերը (4500) բռնում են

*) „Кавк. Кал.“ 1907 г.

Կովկասի շղթայի լեռնային հովիտները Թիֆլիսի նահանգի սահմաններում։

Իմերտինները բռնում են Քութայիսի նահանգի մեծ մասը, գուրիացիները—Օզուրգետի գաւառը, աջառացիները—մահմետականացած գուրիացիները—ապրում են Բաթումի և Արդւինի շրջաններում։

Մօտ երկու դար առաջ վրացիները աւելի էին տարածւած և բռնել էին Ճորոխի ամբողջ հովիտը և Կուրի ակունքները, բայց մահմետականութիւնը ընդունեց և ձուլւեց մահմետական ազգերի հետ։ Վրացիների մեծ մասը ուղղափառ քրիստոնեայ է, փոքր մասը—կաթոլիկ են, ինգուշների և աջառացիների մի մասը մահմեդական է։

Վրացիներն իրանք իրանց անւանում են քարտւելներ, իսկ իրանց երկիրը—Սաքարտւելօ. հայերս նրանց անւանում ենք վրացի, կլասիկ գրողները իբերներ կամ իվերներ, թուրքական ազգերը—գիւրջի։

Վրացիները Կովկասի ամենագեղեցիկ ազգերից մէկն են. նրանք միջահասակ են, լաւ կազմւածք ունին և բաւական մկանուտ են։ Մազերն ընդհանրապէս մութ են կամ սև, քիթը մեծ, դուրս պրծած մասով։

Աչքերը թուխ են, կապտագոյն կամ կանաչաւուն, դէմքերը սեւորակ՝ սեփական նշաններով։ Կանայք տղամարդկանցից աւելի սպիտակ են։ Վրացիները աչքի են ընկնում ուրախ, անկեղծ և հաճելի բնաւորութեամբ։ Նրանք կապուած են հայրենիքի և հին սովորութիւնների հետ, անկեղծ, բարեհամբոյր և հիւրասէր։ Սիրում են երգեր, պարեր և հանդէսներ։

Ք Ի Ւ Ր Դ Ե Ր Ը

Հին ժամանակներից սկսած քիւրդերն յայտնի են—իբրև Միդիայի — այժմեան Քիւրաստանի բնակիչներ։ Այդ տեղից դըրանք տարածուել են Մեծ Հայաստան և դուրս քշեցին հայ ազգաբնակութեան մի մասին։ Քիւրդերը շատ գեղեցիկ և վայելչակազմ են, դէմքի վրայ աչքի է ընկնում արծուաքիթը և բոցավառ աչքերը։ Շարժումներն անվեհեր են և անձնավստահ։ Բնաւորութեամբ շատ հիւրասէր են և ազնիւ, աչքի են ընկնում իրենց քաջութեամբ և անվեհերութեամբ, բայց խիստ տրամադիր են աւազակութիւնների և թալանների, այդ պատճառով էլ շատ հանգիստ տարր են։

Պարապում են գլխաւորապէս անասնապահութեամբ, բայց մի մասն արդէն սկսել է երկրագործութեամբ պարապել և նստակեաց կեանք է վարում։ Քոչւոր-անասնապահ քրդերն ապրում են սև բրդից պատրաստած վրաններում, որ շատ քիչ է պաշտպանում վատ եղանակներից, իսկ նստակեացները ստորերկրեայ խրճիթներում՝ որտեղ ապրում են թէ անասունները և թէ իրենք։

Քրդերը բազմաթիւ ցեղերի են բաժանւում, որոնք մշտապէս ներքին կռիւներով են զբաղուած լինում։

Նրանք կատարեալ պատուհաս են առանձնապէս հայ ազգաբնակութեան համար Թիւրքաց Հայաստանում, մանաւանդ այն օրից, երբ սուլթան Համիդի ձեռքով կազմակերպուեց համիդիական զօրագնդերը քիւրդերից։

Քաջալերւելով Թուրք կառավարութեան կողմից, նրանք անարգել թալանում, աւերում են ամբողջ գիւղեր, սպանում են խաղաղ մարդկանց, առևանգում ու բռնաբարում կանանց ու երեխաներին։

Նրանք անհագին դեր են խաղացել հայկական ջարդերի ժամանակ։

Ներկայ պատերազմում ես քիւրդերը մեծ վնասներ են հասցնում զօրքին։ Կովկասի քիւրդերի գլխաւոր մասը ապրում է Տաճկաստանի և Պարսկաստանի սահմանակից երկիրներում՝ Գանձակի, Երևանի և Կարսի նահանգներում։ Առանձին քոչւորներ պատահում են Գեղամա լճի, Արտահանի շուրջը և Բաթումի շրջանում Ճորոխի գետաբերանի մօտ։

Քիւրդերի մեծագոյն մասը սիւննի մահմետականներ են, իսկ փոքր մասը, որ եզդիներ են կոչւում, առանձին կրօն են դաւանում, որի մասին դեռ շատ քիչ բան է յայտնի։ Քրդական լեզուն իրականին է պատկանում և բաժանւում է երկու բարբառների՝ կամանջի և զազա:

ԵՐԱԶԱՀԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

ԻՆՉ Է ԵՐԱԶԸ

Արթուն ժամանակ մեզ վրա շարունակ ազդում են շրջապատող առարկաներն ու երևոյթները։ Աչքի, ականջի և միւս զգայարանքների միջոցով ստացւած տպաւորութիւնները հասնում են մեր ուղեղին և այնտեղ կատարում իրանց դերը։ Ուղեղը քննում-դասաւորում է այդ բոլոր տպաւորութիւնները և պահանջի համեմատ մարմնի անդամներին կատարել տալիս այս կամ այն շարժումը։

Մենք երկարացնում ենք մեր ձեռքը այս կամ այն առարկան վերցնելու, որովհետև մեր աչքը տեսնում է այդ առարկան և տեսողութեան տպաւորութիւնը ուղեղին եզրակացնել է տալիս, թէ մենք այդ առարկան պիտի վերցնենք։

Ծարաւ զգալիս մենք խմում ենք, քաղց զգալիս — ուտում, ցուրտ զգալիս — տաք հագնւում։ Մի խօսքով մեր բոլոր գործողութիւնները կախւած են մեր մարմնի դր-

բութիւնից, մեր զգայարանքների ստացած բազմազան տպաւորութիւններից.

Այդպէս է արթուն ժամանակ։ Իսկ երբ մեր անդամները յոգնում են և հանգիստ պահանջում, երբ մենք քնել ենք ուզում—այն ժամանակ պիտի հեռացնենք արտաքին տպաւորութիւններն ու գրգիռները, պիտի դադարեցնենք նաև մտաւոր գործունէութիւնը։

Հանգիստ քունը մի անգին գանձ է մարդուս համար։ Նրան փոխարինել չի կարող աշխարհիս ոչ մի հարստութիւնը, ոչ մի փառքն ու բարիքը։ Վա՜յ նրան, ով որ կորցրել է քնելու ընդունակութիւնը։

Արթուն ժամանակ մենք կատարում ենք գիտակցական ու նպատակայարմար գործողութիւններ։ Մենք մեր կամքի համեմատ կանգնում ենք, ման ենք գալիս, ուտում-խմում ենք, խօսում ենք, պարում ենք, երգում և այլն և այլն։ Իսկ քնած ժամանակ կամքը բոլորովին կորցնում է իր ոյժը։ Գիտակցութիւնը նոյնպէս։ Արտաքին աշխարհը այլևս չի ազդում կամ շատ չնչին չափով է ազդում մարմնի վրա։ Անդամները անշարժ դիրք են ընդունում։

Բայց շնչառութիւնն ու մարսողու-

թիւնը, սրտի զարկն ու արեան շրջանառութիւնը—այդ բոլոր գործողութիւնները քնած ժամանակ էլ շարունակում են իրանց ընթացքը ճիշտ այնպէս, ինչպէս արթուն ժամանակ։

Բացի այդ բոլորից մարդու քնի բնորոշ յատկութիւնն է կազմում երազը։ Երա՜զ... Ո՜րքան ֆանտաստիկ, ո՜րքան բազմազան պատկերներ է ունենում նա։ Քնած ժամանակ մարդ երբեմն երազ է տեսնում այնպիսի առարկաների մասին, որոնց մասին երևակայել անգամ չէր կարող արթուն ժամանակ։

Երազը արգելքներ ու դժուարութիւններ չի ճանաչում։ Նրա համար գոյութիւն չունի ոչ ժամանակ, ոչ տարածութիւն, ոչ պատճառ, ոչ հետևողականութիւն։ Ամեն ինչ հնարաւոր է, ամեն ինչ հեշտ։ Ցանկարծ աղքատը դառնում է հարուստ, հարուստը—աղքատ։ Հիւանդը—առողջ, առողջը—հիւանդ։ Ծառան—թագաւոր, թագաւորը—ծառայ։ Մի խօսքով երազում մարդու առաջ միշտ բաց են հեքիաթական աշխարհները։

Այդ բոլորի ամենագլխաւոր պատճառն այն է, որ քնած ժամանակ չափազանց

թուլանում են մեր կամքն ու բանականութիւնը։ Երևակայութիւնը մնում է առանց դրանց հսկողութեան և սկսում է իր անսանձ գործունէութիւնը։ Ամենաչնչին պատճառը բաւական է, որ նա անհագին պատկերներ ու պատմութիւններ ստեղծէ։ Ահա օրինակներ.

—Ես հիւանդ պառկած էի անկողնում, պատմում է մի ֆրանսիացի գիտնական։ Յանկարծ երազում տեսնում եմ ինչ որ այլանդակ դէմքեր։ Վէճի եմ մտնում նրանց հետ, դիտում եմ, թէ ինչպէս նրանք սպանութիւններ են կատարում։ Բայց ահա վերջապէս ինձ էլ դատապարտում են մահուան։ Հաւաքուած է խուռն բազմութիւն։ Ինձ տանում են հրապարակ և բարձրացնում կառափնարանի (эшафотъ) վրա։ Դահիճը կտրում է գլուխս... Ես զգում եմ, թէ ինչպէս գլուխս բաժանւում է մարմնիցս և հէնց այդ րոպէին սարսափահար վեր եմ թռչում քնից։ Եւ ի՞նչ։ Բանից դուրս եկաւ, որ այդ սարսափելի երազի պատճառը ժեշտէ փոքրիկ արկղիկն էր, որը ընկել էր վզիս և իր սուր ծայրով սեղմել նրան...

—Բանտում էի, պատմում է մէկ ուրիշը, սովը տանջում էր ինձ։ Շարունակ

մտածում էի հացի, ուտելիքի մասին։ Սակայն ցանկութիւնս միշտ էլ մնում էր ցանկութիւն միայն։ Դրա փոխարէն քնած ժամանակ յաճախ երազներ էի տեսնում։ Ի՜նչ քաղցր երազներ։ Նստած եմ հարուստ տան մէջ, իմ առաջ դրուած է ճոխ սեղանը՝ պէսպէս կերակուրներով, բազմազան խմիչքներով։ Երկարացնում եմ ձեռքս, բայց ի՜նչ զարմանք։ Ճոխ սեղանը տեսիլքի նման անհետանում է և ես յանկարծ արթնում եմ դատարկաձեռն ու սովատանջ...

Առհասարակ իւրաքանչիւր մարդ երազ է տեսնում այն բաների մասին, որոնցով զբաղուել է, որոնց մասին մտածել է արթուն ժամանակ։ Քաղցածը—երազում հաց է տեսնում, ծարաւածը—ջուր, աղքատը—հարստութիւն։ Ժլատը իր թագցրած հարստութիւնների մասին է երազ տեսնում, ոճրագործը—արեան, դատարանի ու բանտի մասին։

Արթուն ժամանակ ստացած տպաւորութիւնները յաճախ անդրադառնում են քնած ժամանակ և անսահման երևակայութեան շնորհիւ ստեղծում ֆանտաստիկ պատկերներ, հեքիաթանման պատմութիւններ։ Երազը արթուն կեանքի արձագանքն

է. շատ անգամ երազները կազմում են մի տեսակ կրկնութիւն արթուն ժամանակ տեղի ունեցած այս կամ այն դէպքի։ Երբեմն էլ նրանք նախագուշակում են այն, ինչ որ լինելու է ապագայում։

Մի խօսքով երազները լինում են այնքան բազմատեսակ, այնքան խառն ու անհասկանալի, որքան և կեանքի այլ և այլ երևոյթները։

Հէնց դա է պատճառը, որ տգէտ ժողովուրդը ընկնում է նախապաշարմունքի մէջ, մեծ հաւատ է ընծայում, մեծ նշանակութիւն է տալիս երազներին։

Գոյութիւն ունին առանձին երազահաններ. բայց որքան տգէտ, որքան անմիտ բացատրութիւններ կան դրանց մէջ։ Ահա նմուշներ.

—Աղուէս տեսնելը—ահ ու երկիւղ է։ Իր ծոցում աղջիկ տեսնելը—խնդութիւն է։ Այծ տեսնելը—ճանապարհ է։ Բահը—լեղու է։ Բամբակը արդարութիւն։ Էշը—մեծ նեղութիւն։ Վերմակը—հարուստ կին և այլն։

Արժէ՞ արդեօք խօսել, թէ որքան ծիծաղելի, որքան անմիտ են այդ բացատրութիւնները։ Կարծում ենք—ոչ, քանի որ փաստը ինքն ըստ ինքեան շատ պարզ է,

քանի ոչ մի խելքը գլխին մարդ չի հաւատայ այդ բացատրութիւններին։

Երազահանը հին ժամանակների տգիտութեան արդիւնքն է կազմում։ Բայց ի՞նչ ասել այն մարդկանց, որոնք դեռ մինչև օրս էլ օգտուելով ամբոխի թոյլ երակից և իրանց շահասիրական նպատակներին հասնելու համար տարածում են ժողովրդի մէջ նախապաշարմունքի և սնոտիապաշտութեան այդ աղբիւրը։ Ամօթ, հազա՛ր ամօթ...

Սակայն դառնանք մեր խնդրին և տեսնենք թէ ինչի՞ց են առաջ գալիս երազները, թէ այդ մասին ի՞նչ է ասում գիտութիւնը։

Վերևում նկատեցինք, որ քնած ժամանակ արտաքին աշխարհը շատ քիչ է ազդում մեզ վրա, ահա հէնց այդ պատճառով էլ ուղեղը, արտաքին տպաւորութիւններից ազատ մնալով, երբեմն կենտրոնացում է իր գործունէութիւնը արթուն ժամանակ տեղի ունեցած այս կամ այն դէպքի, այս կամ այն երևոյթի վրա և չափազանց ուշադիր կերպով է կատարում իր դերը։

Դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ շատ անգամ երազում մարդիկ անսպասելի հետևանքների են հասնում գտնում են կնճռոտ հարցերի լուծումը, որի

մասին երկար մտածել էին արթուն ժամանակ. յիշում են վաղուց մոռացուած բաներ, այս կամ այն տպաւորութեան, այս կամ այն զգացմունքի ազդեցութեան տակ նախատեսում են գալիք դէպքերը։

Օրինակ, մէկը երազում տեսնում է, որ օձը խայթել է նրան կրծքի ձախ կողմից։ Նա զարթնում է բոլորովին առողջ, բայց երեք օրից յետոյ այդ միեւնոյն տեղում յայտնւում է մի մեծ խոց...

Մէկ ուրիշը մեռնելուց երեք օր առաջ տեսնում է որ կաթուած է ստացել։ Եւ իսկապէս, մի քանի օրից յետոյ նա մեռնում է կաթուածից։

Մի հիւանդ երազում տեսնում է, որ իբր թէ նրա մի ոտը քարացել է։ Եւ ինչ. կարճ ժամանակից յետոյ նրա այդ ոտը կաթւածահար է լինում։

Չափազանց բազմաթիւ են այդպիսի օրինակները, բայց նրանց մէջ ոչ մի հրաշք, ոչ մի գերբնական զօրութիւն չըկայ։ Այդ բոլորի ամենագլխաւոր պատճառը այն է, որ որոշ փաստեր, մեր մարմնի կամ մի որեւէ անդամի որոշ դրութիւնը քնած ժամանակ աւելի, հասկանալի, աւելի դիւրըմբռնելի են դառնում, քան թէ արթուն ժա-

մանակ։ Քնած ժամանակ ուշադրութիւնը չի ցրւում արտաքին ազդեցութիւնների պատճառով, ուստի և ներքի զգացողութիւնները աւելի պարզ ու ճիշտ ձևով են հասնում ուղեղին։ Այդպիսի պայմաններում կրծքի կամ ոտքի, գլխի կամ ուրիշ անդամի ամենաչնչին փոփոխութիւնը, ամենաաննշան ցաւը բաւական է, որ երևակայութիւնը նրանցից ստեղծէ օձի խայթոցի, քարացած ոտի, կաթւածի և այլ նմանօրինակ պատկերներ։

Առհասարակ մարմնի առողջութիւնը կամ հիւանդութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի երազների համար։ Հիւանդ մարդու երազը գրեթէ միշտ խառն, անկապ ու տարօրինակ է լինում։

Ընդհանրապէս փորձերը ցոյց են տալիս, որ իւրաքանչիւր անդամի հիւանդութիւնը մի որոշ ուղղութեան երազներ է առաջացնում։

Երբ մարդու շնչառութեան գործարաններն են խանգարւած, այն ժամանակ երազում երևում են սարսափելի տեսարաններ, փորձանք, պատուհաս և վտանգ։

Բժ. Սիմօնին պատմում է հետևեալ դէպքը.—Մի մարդ ունէր բոլորովին առողջ

կազմուածք, բայց Թոքերի հիւանդութիւն—բրոնխիտ։ Ամեն անգամ այդ հիւանդութիւնը կրկնւելիս նա տեսնում էր հետևեալ բովանդակութեան երազներ։

Նա մի վայրենի տեղ է գտնւում, հեռու մարդկանցից։ Մի ծանր զգացմունք ճնշում է նրան։ Նա զգում է մօտալուտ վտանգը։ Եւ իսկապէս, յանկարծ նրա յետևից է ընկնում մի ձիաւոր՝ դաժան դէմքով, սարսափելի արտաքինով։ Փախչելն անհնարին է. Թշնամին արդէն մօտենում է նրան, բայց այդ րոպէին նա զարթնում է ծանր շունչ քաշելով…

Ահա երազի պատճառը. քնած ժամանակ Թոքերի մանրիկ բշտիկների—բրոնխների մէջ հաւաքւում է մաղաս, որը և դժւարացնում է շնչառութիւնը և առաջացնում սարսափելի երազներ։ Այդ մաղասը հեռացնելուն պէս քունը դառնում է հանգիստ և սարսափ ազդող երազն անհետանում է։

Մարսողութիւնը խանգարւած դէպքում մարդ մի տեսակ ծանրութիւն է զգում, հանգիստ քնել չի կարողանում, խառնիխուռն երազներ է տեսնում և մերթ ընդ մերթ զարթնում կօշմարից։ Դրա պատճառն էլ

լիքը ստամոքսն է լինում, որը որոշ չափով դժւարացնում է շնչառութիւնը և այդպիսով պատճառ դառնում տարօրինակ երազների։

Պատահում են շատ երազներ, որոնց պատճառը սեռական գործարանների կամ մարմնի մի ուրիշ անդամի այս կամ այն դրութիւնն է լինում։

Բայց կան և այնպիսի երազներ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն մարմնի հետ, որոնք բացառապէս ուղեղի գործունէութեան հետևանքն են կազմում։ Այդ շարքին են պատկանում այն երազները, որոնցով մարդ գտնում է այս կամ այն կնճռոտ հարցի լուծումը, որոնցով մարդ յիշում է վաղուց մոռացւած դէպքերը կամ գուշակում է ապագան։

Շատ հետաքրքիր են այդպիսի երազները և գիտութեան մէջ տարբեր կարծիքներ կան նրանց մասին։ Բայց տեղի սղութիւնը թոյլ չի տալիս երկարացնելու մեր խօսքը։ Առայժմ միայն այսքանը կարելի է ասել, որ դրանց ամենագլխաւոր պատճառը ուղեղի ուշադիր ու կենտրոնացած գործունէութիւնն է։ Իսկ աւելի մանրամասնութիւններ կարող են տալ գիտութեան ապագայ ջանքերը…

Ուրեմն երազներին նշանակութիւն տուող ամէն մի անհատ թող դիմէ ոչ թէ անմիտ «երազահանների» օգնութեանը, այլ հետևի գիտութեան խօսքին։ Այդ դէպքում նա կը հասկանայ հարցի էութիւնը, կըմբռնէ հրաշք համարուած երևոյթների բնական պատճառը և այդպիսով հեռու կը մնայ նախապաշարմունքից ու սնոտիապաշտութիւնից։

Ամէն մի երազի նշանակութիւնն իմանալու համար թող նա մտաբերէ իր անցեալը, իր սիրտն ու միտքը զբաղեցնող առարկաները, թող աչքի առաջ ունենայ իր մարմնի, իր անդամների հիւանդոտ կամ առողջ դրութիւնը և այն ժամանակ հեշտութեամբ կը հասկանայ երազի պատճառը և բացատրութիւնը։

Մեծ տգիտութիւն է երազների մէջ հրաշք կամ գերբնական ոյժ որոնելը։

Անդառնալի կերպով անցել է հրաշքների դարը։ Ներկայ ժամանակի միակ հրաշագործը գիտութիւնն է։ Նրանից պիտի սպասենք մեր փրկութիւնը, նրա օգնութեանը պիտի դիմենք ամէն մի դէպքում։

† Բժ. Ա. Բուղուղեան

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Տասը պատուիրան լողացողներին.— Առողջարանները հետևեալ խորհուրդն են տալիս։ Մի լողանար՝ 1) երբ յանկարծակի կամ տևողական անհանգստութեան մէջ ես. 2) հոգեկան գրգռուած ժամանակ. 3) անքուն գիշերներից կամ երկար աշխատելուց յետոյ անմիջապէս. 4) շատ ուտելուց յետոյ։ Բացի դրանից՝ հանդարտաքայլ գնա բաղանիք. 6) կամաց-կամաց հանուիր. անմիջապէս ջուր մտիր. 8) շուտով ընկղմուիր ջրի մէջ. 9) երկար մի մնար ջրի մէջ, մանաւանդ եթէ թոյլ կազմուածք ունիս. 10) լողանալուց յետոյ մարմինդ տրորիր, որպէսզի արեան շրջանառութիւնը դիւրանայ։

Սառը ջրի օգուտը.—Երկար ժամանակուայ փորձը ցոյց է տուել, որ սառը ջրով լուացուելը զօրացնում է աչքերի պայծառ տեսողութիւնը և ամբողջ կերպարանքին առոյգութիւն է պատճառում։ Դրա համար հարկաւոր է 10—15 անգամ ձեռքերը պաղ ջրի մէջ դնել և յետոյ փակ աչքերը հանդարտութեամբ լուանալ։ Այսպիսով կարելի է ամէն տեսակ աչքի հիւանդութեան առաջն առնել, որովհետև ջուրը այնպիսի

յատկութիւն ունի, որ լուծում է ախտածին նիւթերը և լուծւածները բաժանում է իրարից, որի միջոցով մաքրւած արիւնը սկսում է երակների մէջ շրջել և այդպիսով ամրացնել նեարդերը:

Խնձորի օգուտները.—Քնելուց առաջ խնձոր ուտելը առողջութիւնը պահպանելու լաւ միջոց է: Խնձորը ոչ միայն լաւ սնունդ է մատակարարում, այլև առողջապահական միջոցներից մէկն է: Խնձորն իր մէջ այնպիսի առատութեամբ դիւրամարս տարրեր և ֆոսֆորի թթու է պարունակում, որ ոչ մի ուրիշ պտուղ նրան այդ կողմից չի հասնի: Քնելուց առաջ խնձոր ուտելը լաւ է ազդում մարմնի վրա և հանգիստ քուն է տալիս:

Տաք ջուրը իբրև առողջարար միջոց. Տաք ջուրը մի քանի դէպքերում շատ լաւ միջոց է գլխացաւի դէմ: Հարկաւոր է ծոծրակը և ոտները տաք ջրով լւանալ և ցաւը կանցնի: Տաք ջրի մէջ թաթախած և իսկոյն քամած փաթեթը դնելով ստամոքսի վրա, կարելի է փորացաւը (սանջուն) կտրել: Ատամնացաւի ժամանակ նոյնպիսի փաթեթ դնելով ցաւած տեղի վրա, կարելի է ցաւը

մեղմացնել: Կոկորդը ցաւելու ժամանակ օգտաւէտ է տաք ջրով թրջած բրդէ փաթեթ փաթաթել վզին:

Գլիցերինը բացի իր սովորական գործածութիւնից օգտակար է նաև իբրև հեշտ միջոց թեթև այրւածքի դէմ: Հարկաւոր է այրւածքի վրա քսել քիչ գլիցերին և ապա կապել նոյն հեղուկով թրջւած քաթանով:

ՏՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Մկների դէմ միջոց. Պէտք է վերցընել վարդասարդի (օլէանդր) տերև, չորանել, խառնել աւազի հետ և ցանել այն տեղերը, որտեղ մկներ են երևում: Մկները չեն դիմանում վարդասարդի հոտին: Նոյն ազդեցութիւնը ունի և օշօշի ծաղիկը (ռոմաշկա):

Լւացքի էժան միջոց. Լւացքի համար գործածած սապոնի կէս մասը կարելի է խնայել և աւելի սպիտակ լւացք ստանալ, եթէ իւրաքանչիւր 30—40 լիտր ջրի մէջ մի բուռ ոսկեբորակ գցենք: Ասեղնագործ կամ ուրիշ նուրբ շորեր լւանալիս պէտք է քիչ աւելի գցել: Ոսկեբորակը կտաւեղէնին չէ վնասում, ինչպէս այդ սոդան է անում:

Ինչպէս մաքրել ոսկեզօծ շրջանակները. Ճանճերի կեղտից այդպիսի շրջանակները մաքրելու համար հարկաւոր է վերցնել մի փափուկ շոր, թրջել լաւ գարեջրի մէջ և դրանով սրբել կեղտերը։

Թրջւած կօշիկները կանոնաւոր կերպով չորացնելու համար հարկաւոր է նրանց մէջ լցնել վարսակ և այդպէս մի քանի ժամ թողնել։

Գունատւած լուսանկարը նորոգելու համար պէտք է դնել տաք ջրի մէջ, կարտօնի վրայից պոկել երեսի պատկերը, յետոյ այդ պատկերը պէտք է թաթախել հալած մոմի մէջ, հանելուց յետոյ վրան մի ուրիշ թուղթ կպցնել, արդուկով—(ութի)— քսել՝ մոմը չորացնել և ապա սրբել բամբակով։

Չորացած պանիրը նորից փափկացնելու համար պէտք է գցել տաք կաթի մէջ և այդպէս պահել մի քանի ժամ. յետոյ դուրս հանել և երեսի կաթը չորացնել։

Լապտերի մրից ազատ մնալու համար կարելի է դիմել հետևեալ հասարակ միջոցին՝ գործածելիք նաւթի իւրաքանչիւր 2 ֆունտի մէջ գցել 1 թէյի գդալ աղ։ Այդ-

պիսի նաւթը այլ ևս մուր չի առաջացնի և աւելի լաւ կլուսաւորէ։

Միսը թարմ պահելու համար ճապոնացիները գործ են ածում հետևեալ միջոցը. միսը դնում են յախճապակեայ անօթի մէջ, վրան լցնում են եռացրած ջուր, այնքան, որ միսը ծածկւի. Ջրի վրա էլ քիչ իւղ են լցնում։ Այդպիսով օդը չի դիպչում մսին, որը շատ երկար ժամանակ մնում է թարմ։

Թարմ ձուի նշանները։ 1) Պէտք է կանգնել մութ տեղ և ձուն բռնել լոյսի կամ կրակի կողմը, եթէ ձուի մէջը թափանցիկ լինի, նշանակում է թարմ է։ 2) Թարմ ձուն ջրից ծանր է, իսկ մի ութ օր մնալուց յետոյ ձուն գցելով ջրի մէջ, նա այլ ևս տակ չի անում, այլ լողում է։ 3) Լեզուն մօտեցնելով թարմ ձուի երկու ծայրերին՝ նրանք սառն են թւում։ 4) Թարմ ձուն գցելով եփ եկած՝ջրի մէջ, տրաքւում է, իսկ հին ձուն շուտ չի տրաքւիլ։ 5) Լաւ ձուի մէջը չի շարժւում։

Մոմի բծերի հանելը։ Շորերի վրա ընկած մոմի կաթիլը նախ և առաջ պէտք է դանակով զգուշութեամբ քերել, յետոյ այդ շորի տակը փռել մի կտոր թրջած կտաւ,

մամի բիծն էլ ծածկել մի քանի տակ ծալած ծծան թղթով և այդ թղթին քսել տաքացրած ութօ, վերջը սպունգը թրջել ալքօհօլի մէջ և քսել բծերի տեղերի վրայ:

Թանաքի բծեր։ Եթէ թանաքի բիծը նոր է, այն ժամանակ բաւական է այդ կտորը գցել տաք կաթի մէջ. եթէ բիծը հին է, կաթի մէջ մի քանի ժամ թողնել։ Յետոյ այդ կտորը փռել մի քանի անգամ ծալած անձեռոցիկի վրա և սրբել մաքուր կտաւով։ Իւրաքանչիւր բիծը պէտք է առանձին-առանձին սրբել։ Զպէտք է թողնել, որ կաթը շորի վրա ցամաքի. նախ տաք ջրով լուանալ, իսկ յետոյ սառը ջրով։

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Ամբողջ ձուն նեղ վզով շշի մէջ տեսնելիս անշուշտ շատերը պիտի կարծեն, թէ շիշը կտրած և յետոյ է մէջը ձուն դրած, քանի որ բերանից անհնարին է այդ անել։ Սակայն այդ զուարճալի խաղը կարելի է կատարել առանց շիշը կտրելու և ահա թէ ինչպէս.

Վերցրու ուժեղ գինու քացախ, մէջը թարմ ձուն գցէ և այնքան թող, որ ձուն

մեղրամոմի պէս փափկանայ, յետոյ վերցրու մի նրբավիզ շիշ և մինչև կէսը լից օճառախառն մոխրաջուր (Iessive caustique) և ապա կամաց-կամաց հասարակ ջուր, մինչև որ շիշը բաւական լցուի։ Այդ բոլորից յետոյ փափկած ձուն զգուշութեամբ սեղմիր շշի մէջ. այդպիսով ձուն մոխրաջրի երեսը կը բարձրանայ և իր բնական ձևը կընդունէ։ Բայց շիշը չպէտք է ցնցել։

Ափսէն օդի մէջ. — Այդ զուարճալի խաղը կատարելու համար, պէտք է վերցնել մի բաժակ, բերանը ներքև բռնել և տակը վառել քիչ թուղթ կամ մոմ, որպէս զի միջի օդը տաքանայ և դուրս գայ. դրանից յետոյ իսկոյն պէտք է դնել վրան ափսէ։ Ափսէն բաժակին կպած կը մնայ եդի մէջ և վայր չի ընկնի, որովհետև ներքևի օդը իր ճընշումով կը պահէ նրան։

Շիշը օդի մէջ.— Դրա համար պէտք է դատարկ շիշը բռնել եռացող ջրի վրա, որպէս զի գոլորշիով լցուի. յետոյ դնել սառը ջրի մէջ. բերանին քիչ ճարպ քսել և սեղմել ափսէի վրա։ Մի քանի րոպէից յետոյ եթէ շուռ տաք և ափսէի ծայրից բռնած վերև բարձրացնէք, շիշն իր բերանով ափսէին կպած կը մնայ և վայր չի ընկնի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Տեխնիկական անյարմարութիւնների և թղթի պակասութեան պատճառով (Լոյսի համար յատուկ պատուիրած թուղթը ժամանակին չհասաւ) խմբագրութիւնս ստիպւած էր ոչ միայն յետաձգել սեղանի օրացոյցի հրատարակութիւնը, այլ և կրճատել այս տարուայ օրացոյցի ծաւալը, դուրս ձգելով մի շարք „Լոյս"-ի համար յատուկ պատրաստած յօդուածներ, կենսագրականներ ու նըկարներ։

Ներկայ պատերազմի պատճառով թղթի ու տպագրութեան ծախքերն այնքան բարձրացել են, որ խմբագրութիւնս, հակառակ իր ցանկութեան ու սկզբունքին, ստիպւած եղաւ օրացոյցների գները անհամեմատ բարձր նշանակել։

Զնայելով դրան ամբողջ հրատարակութեան սպառելու դէպքում անգամ, հազիւ կարողանանք ծածկել եղած ծախքերը։

Յօդւածներն ու կենսագրականները կազմելիս օգտուել ենք հետևեալ հրատարակութիւններից.—

Ռուսերէն—„Всеобщій кал.", „Русскій кал.", „Кав. Кал.", Историч. Кал.". „Исторія воликой войны", „Годъ Войны".

Գերմաներէն—Prof· Jur tistisches Taschenbuch».

Հայերէն— «Նալբանդեանի երկերը», «Գրական դէմքեր"— Կ. Կուսիկեանի, Եղ. Թոփչեանի 1904 - 1908 թ. օրացոյցներ։

Տեխնիքական անյարմարութիւնների պատճառով աւելորդ ենք համարել իւրաքանչիւր հատուածի և տեղեկութեան տակ առանձին յիշել աղբիւրը, բաւականանալով վերևում զետեղած ընդհանուր յիշատակութեամբ։

Աչքի ընկած գլխաւոր վրիպակները

Տպագրւած է	Պէտք է լինի
160-րդ էջի 13-րդ տողում—որիշ	ուրիշ
40-րդ էջի 10-րդ տողում—1914թ.	1904 թ.
154-րդ էջի 9-րդ տողում—քմոք	փմոք
161-րդ էջի վերջի II-րդ տողում—ազուր	իզուր
160-րդ էջի վերջի տողում—1817 թ.	1907 թ.։

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ

(Թերթերի հասցէներով)

Թիֆլիսի հայոց Գիւղատնտեսական և Տնայնագործական ընկերութեան նախագահ Ա. Սահակեանի խմբագրութեամբ և հրատարակութեամբ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ“

երկշաբաթաթերթն առաջիկայ 1917 թուականի ընթացքում լոյս կտեսնի կանոնաւորապէս երկու շաբաթը մի անգամ, իւրաքանչիւր ամսի 15-ին և 30-ին։

«Գիւղատնտես»-ին կաշխատակցեն հետևեալ անձինք.— պ. պ. Աբովեան Ս., Աղաբալեան Յ., Աղասարեան Բ. բժիշկ, Աթանասեան Ա., Աթանասեան Պ., Ալիբէգեան Գ., Աւագեան Ա., Աֆրիկեան Կ., Բալոնց Մարգար, Բաղրամեան Բ., Բարխուդարեան Ա., Գիւզալեան Տ., Գրձելեան Գ., Դիլանեան Խ., Զաւրեան Դ., Զաւրեան Դ.,

Զուրաբեան Ս., Թադէոսեան Ա., Թամամշեան Վ., Լազարեան Յ., Խանալեան Ա., Խարազեան Գ., Կամսարական Ա., Կամսարական Ս., Կարապետեան Տ., Համբարձումեան Կ., Ղազանճեան Վ., Մելիք-Բախտամեան Յ., Միրզայեան Յ., Մխիթարեան Ա., Մկրտումեան Բ., Մուչայեան Մ., Մաքսապետեան Ա., Յարութիւնեան Մ., Նազարեան Ս., Նարինջեան Ե., Նաւասարդեան Մ., Զոլախեան Հ., Պապովեան Գ., Ռոտի եան Գ., Սահակեան Ս., Սարուխանեան Աւ., Սիմէօնեան Ն., Վարաժեան Ե., Տէր-Օհանեան Յ., Տիրատուրեան Ս., Տոտոմեան Վ., Փիրալեան Յ., Քալանթար Աւ., Օթարեան Ն.։

«Գիւղատնտես»-ը կը տայ 1917 թուականի ընթացքում իր տարեկան բաժանորդներին մի քանի գիւղատնտեսական գրքոյկներ և բրօշիւրներ, իբրև պրեմիա։

Տարեկան բաժանորդագինն է 3 ռ.։

Պէտք է դիմել՝ Тифлисъ, Контора Армянскаго Сельскохозяйственнаго Общества, для журнала „Гюхатнтесъ“.

„ԳԵՂԱՐՒԵՍՏ"

Գրական, գեղարուեստական, երաժշտական պատկերազարդ հանդէս.

Բաժնեգին՝ 12 ր.—6 համարը։

Հասցէ՝ Тифлисъ, Почт. ящикъ № 133,
Г. Левоняну.

„Ա Ր Ե Ւ"

Գրական, հասարակական և քաղաքական օրաթերթ. բաժնեգին՝ 8 ր. տարեկան, 4 ր. 50 կ. 6 ամիս, 2 ր. 50 կ. 3 ամիս. Պարսկաստան՝ 10 ր., վեց ամիս 6 րուբլի, Ամերիկա 5 դոլ. 3 ամիս 3 դոլ.։

Հասցէ՝ Ьаку, Большая Морская. 30.

„Հ Ո Ր Ի Զ Ո Ն"

Հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ։ բաժնեգին՝ տարեկան 10ր., 6 ամիս 6 ր., 1 ամիս 1 րուբլի։

Արտասահման՝ տարեկան 12 ր., վեց ամսական 7 րուբլի։

Հասցէ՝ Тифлисъ, Сололакская ул., № 6.

„ԳԱՂՈՒԹ"

Գրական, քաղաքական և հասարակական շաբաթաթերթ. բաժնեգինն է՝ տ. 5 ր. 6 ամսական 2 ր. 50 կ., ամիսը 50 կոպէկ, առանձին №-ը 12 կ.։

Հասցէ՝ Նախիջևան—Դոն, 12 գիծ, № 5։

Բաժանորդագինը ուղարկել Ռոստով Առաքէլ Սառաքէլեանին.

Старо-Почтовая ул., № 128.

„ԱՇԽԱՏԱՆՔ"

Հասարակական, քաղաքական, գրական թերթ

ՆՒԻՐՒԱԾ ԹԻՒՐՔԱՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԻՆ

Լոյս կը տեսնէ շաբաթը երկու անգամ, Չորեքշաբթի և շաբաթ օրերը։

Տարեկան բաժնեգինն է 5 րուբլի.
Վեցամսեայ " » 3 "

Հասցէ՝ Эривань, Редакція «Ашхатанкъ».

„Армяне и война"

Նուիրուած է հայկական կեանքին կապուած պատերազմի հետ։

Տարեկան բաժնեգին 3 ր.—ամիս 75 կ.
Վեցամսեայ " 1.50—համարը 25 կ.

Հասցէ՝ Одесса, Польская ул., № 16

„Армянскій Вѣстникъ"

Հասարակական, քաղաքական և գրական շաբաթաթերթ։

Բաժնեգին	6 ամիս	4 ր.
	5 "	3 ր. 50 կ.
	4 "	3 ր.
	3 "	2 ր. 50 կ.
	2 "	2 ր. 25 կ.
	1 "	1 ր. 25 կ.

Հասցէ՝ Москва, Остопенка, 2ой Ильинскій пер. Д. 3.

„ԱՂԲԻՒՐ"

Պատկերազարդ ամսագիրը 1917 թ. հրատարակուելու է նոյն ուղղութեամբ, ծրագրով և աշխատակիցների մասնակցութեամբ, ինչպէս անցեալ տարի։

ԱՂԲԻՒՐի նպատակն է հայ մատաղ սերունդը դաստիարակել, ճշմարիտ լուսաւորութեան շաւիղը նրան ցոյց տալ։ Սէր դէպի բնութիւնը, գիտութիւնը եւ մերձաւորը, ահա ԱՂԲԻՒՐի ուղղութիւնը։

Բաժնեգինն է 3 ր., արտ. 5 ր.։

Հասցէ՝ Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, տ. № 41։

„ՏԱՐԱԶ"

Գեղարուեստական, գրական, գիտական և քննադատական պատկերազարդ ամսաթերթը 1917 թ. հրատարակուելու է ճոխ և ընդարձակ ծրագրով։

ՏԱՐԱԶի նպատակը, ուղղութիւնն ու ձգտումը՝ հայերի մէջ տարածել ուղիղ հայեացք դէպի գեղեցիկը, բարին ու օգտակարը։

Բաժնեգինը՝ Աղբիւր-Տարազ միասին 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.)։

Հասցէ՝ Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, տ. № 41։

ՈՒՄ ԴԻՄԵԼ

(Բժշկական-հասցէներ)

Թիֆլիս

Բժ. Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին եւ ջղային հիւանդութիւններ
Ընդ. երեկոյեան ժ. 6—8 ժ.
Հասցէ՝ Тифлисъ, Михайловскій просп., д. №29

ԲԺԻՇԿ

Տ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ներքին եւ երախայոց հիւանդութիւններ
Ընդ. Երեկ. ժ. 5—7 ժ.
Հասցէ՝ Тифлисъ, Вельяминовская, № 6

ԲԺԻՇԿ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Ընդ. առ. ժ. 10—1 ժ.
երեկ ժ. 5—7 ժ.
Հասցէ՝ Тифлисъ, Вельяминовская, № 8

ԲԺԻՇԿ

Յ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Ընդ. ցեր. ժ. 1—2 ժ.
երեկ ժ. 5—7 ժ.
Հասցէ՝ Тифлисъ, Александровская, № 26

ԲԺԻՇԿ

ԱՐԾՐՈՒՆԻ

Կոկորդի, քթի եւ ականջի հիւանդութիւններ
Ընդ. առ. ժ. 9—12 ժ.
երեկ. ժ. 5— 7 ժ.
Հասցէ՝ Тифлисъ, Бебутовская, № 26

ԲԺԻՇԿ

Ն. ԿԱՃԿԱՃԵԱՆ

Ատամի հիւանդութիւններ
Ընդ. առ. ժ. 9—2 ժ.
երեկ. ժ. 6—8 ժ.
Հասցէ՝ Тифлисъ, Сергѣевская, № 1

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Եղբ. Մ. եւ Վ. ԵՐԱՆՈՍԵԱՆՆԵՐԻ

„ՄՕՍԿՈՎԼՍԿԻ ԿԱՆԴԻՏԵՐՍԿԻՆ ԵՒ ԲՈՒԼՕՋՆԻՆ"

Ունի միշտ թէ սեփական արտադրութեան և թէ ռուսական ու արտասահմանեան լաւագոյն ֆիրմաների կանդիտերսկի ապրանքներ, քաղցրաւէնիներ և տօներին յարմար նուէրներ՝ բոմբոնյերկաների մեծ ընտրութիւն։ Գները չափաւոր են։ Օտար քաղաքներից պատուէրները կատարում ենք ճիշտ ու շուտ։

Հասցէ՝ Александрополь, Бр. Ераносянъ.

Ծախւում են վերջին օրինակները

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

ՌՈՒՍ-ՀԱՅ լիակատար բառարան, գ. 8 ռ. կազմ. 9 ռ. 50 կ. և 10 ռ.։

ՀԱՅ-ՌՈՒՍ լիակատար բառարան գ. 6 ռ., կազմ. 7 ռ.։

ՍՏՈՅԳ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
գինը 50 կոպ.

ԱՇԽԱՐՀԱԲԱՌԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
գինը 50 կոպէկ։

ՌՍԵՐԷՆԻ ԻՆՔՆՈՒՍՈՅՑ
Ա. տ. 25 կ., Բ. տ. 40 կ.։

ՌՍԵՐԷՆԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Առաջին ընթերցարան, պրոպիսներով և պատկերներով հայոց ուսումնարանների համար։ Գինը 20 կոպ.։

Դիմել՝ А. Дагбашяну, Тифлисъ, Сололакская, 14.

Ա. Կ. ՊՕՂՈՍԵԱՆԻ

„Учебныя пособія" Խանութը

Թիֆլիս, Դվօրցովայա № 4

Առաջարկւում է տօնական նուէրներ, կրթական մանկական խաղեր, հետաքրքիր խաղալիքներ, մանկական գրքեր, հեծանիւներ, մարմնամարզական պարագաներ, ալբօմներ, դիմակներ, ֆէյէրվէրկներ, չախմատներ և այլ խաղալիքներ: Ունի բազմատեսակ տիկնիկներ, կեգլի. կրօկեկ, լաուն-թենիս, ֆուտպօլ և այլ խաղերի պարագաներ:

Գները չափազանց մատչելի:

Հայ մատենագրութեան անցեալից. Արփենա Յոբելեան, Բ. Թափչեանի, եր. 149-154 XIII. Գեղարուեստական. Գեղարուեստ, Գ. Լեւոնեանի, եր 155-160: XIV. Օրուայ հարցեր. Ինչպէս պէտք է սպառող ընկերութիւններ կազմակերպել, Ն. Թափչեանի: Կօօպերացիան և Պատերազմը—Ա. Թափչեանի: Տեղական ինքնավարութիւն կամ զեմստվօ—Ա. Շ., եր. 161—189: XV. Կենսագրական 1) Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչ, 2) Շէքսպիր, 3) Նալբանդեան, 4) Պարոնեան, 5) Ադամեան, 6) Ահարոնեան, եր. 190—221: XVI. Մեր հարեւանները 1) Վրացիները, 2) քիւրդերը, եր. 222—226: XVII. Երազահանի փոխարէն. Ինչ է երազը, բժ. Բուդաղեանի, եր. 227—238: XVIII. Օգտակար Գիտելիքներ. 10 պատուիրան լողացողներին. սառը ջրի օգուտը. խնձորի օգուտները. տաք ջուրը իբրև առողջարար միջոց. գլիցերինը, եր. 239—241: XIX. Տնային խորհուրդներ. Մկների դէմ միջոց լուացքի էժան միջոց և այլն, եր. 241—244 XX. Զարմանալիք. Ամբողջ ձուն նեղ շշի մէջ, ափսէն օդի մէջ, շիշը օդի մէջ, եր. 244—245: XXI. Խմբագրութեան կողմից, եր. 246—247: XXII. Ինչ կարդալ, եր. 248—253: XXIII. Ում դիմել, եր. 244—255: XXIV. Այլ եւ այլք, եր. 256—258.

ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է

Ա. ԵՒ Բ. ԹՈՓՉԵԱՆՆԵՐԻ

ԽՄԲԱԳՐԱԾ

„ԼՈՅՍ"

1917 Թ.

Պատի հատուածական օրացոյցը

Գինը 90 կոպ.

Տախտակը ներկայացնում է յատուկ 6 գոյնով պատրաստել տուած մի շքեղ պատկեր՝ հայ կամաւորները կռւի դաշտում, 6 խմբապետները, Սեպուհ եւ Մուրադ, որպէս զինակից ընկերներ եւ Անիի աւերակները:

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

Դիմել՝ Тифлисъ, Большая-Ванкская 23, ТОПЧІАНУ *կամ Գրավաճառներին:*

6703

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032010